



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՄՇԱԿՈՑԹԸ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՄԱՀՄԱՆԱՊԱՀՈՒԹԻՒՆՆ Է.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	4
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԱԶԱՏ ԽՕՍՔ»Ի ԽՍԲԱԳՐԻ ՏԻՎ. ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՀԵՏ	4
«Առանց ազգային արժէքներու՝ պետութիւնը հոգեզուրկ կ'ըլլայ, կը դառնայ պարզ քաղաքական միաւոր» . Երան Գոյոյումճեան	4
ԿԻՊՐԱՀԱՅ	7
ԿԻՊՐՈՍԻ ԹՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ 50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ	7
ՔԱՏԱՆՍ ԱՆՄԱՄՊԼԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ	7
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	8
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՈՌՅՈՒԱԾ ԹԵՄԵՐԸ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ.....	8
ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏԻՒ ԱՐԺԱՆԱԻՈՐ ՊԱՏՄԱԲԱՆ	16
ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻՒՆ, ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ	16
«ՓՐՈՖ. ՅԱԿՈԲՈՍ ՃԷՃԻԶԵԱՆ.....	16
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՈՒՄԸ» (117 էջ)	16
ՊԷՅՐՈՒԹ, 2023.....	16
ԹԱՆԵՐ ԱՔՉԱՍԻ ԿԱՐԵՒՈՐ ՄԷՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ	19
ՈԳԵՂԷՆ ԿԱՌՈՅՅՆԵՐ	22
ՄԵԾԱԳՈՅՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՄԻ ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ	25
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆԻՆ ՀԵՏ.....	25
ՏԵՍԱԿԷՏ	28
ԼԻԲԱՆԱՆ-ՊԱՂԵՍՏԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՈՒՆԻՂ	28
ԲԱՅԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵՆԷՆ	28
ԻՆՉ ՈՐ ԶԼԱՅՈՒԵՑԱԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ.....	28
ՄԵԶԻ ԱՆԻՄԱՍՏ ՄԱՀԵՐ ՊԷՏՔ ՉԵՆ	31
ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՐԻՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ԱՆԿՄԱՆ ՄԷՋ	33
ԱՆԴՐԱԴԱՐՁ	36
ԱՆՀԱՆԳԻՍՏ ՄԻԶԻՆ ԱՐԵԻԵԼՔԸ.....	38
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	40
ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒՄՇՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ	40
ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՍԻՐԱՆ ՄԵԶԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻ ԱՌԱԶԻՆ ՀԱՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ.....	46



ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ50

ՊՐՆ. ՊԵՏԵԱՆԸ.....50

«ՔԱՆԻ՞ ԱԻԱՐԱՅՐ ԵՒ ՔԱՆԻ ՏԵՐ ԷՆ ԶՕՐ».....57

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ 60

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 63

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄՇԱԿՈՅԹԸ ՄԵՐ ՀՈԳԵԻՈՐ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՈՒԹԻՒՆՆ Է



Հոկտեմբեր ամիսը հայերուս համար կը նշանաւորուի գերազանցօրէն որպէս հայ մշակոյթի ամիս: Անգամ մը եւս կ'իմաստաւորենք ու կ'արժեւորենք 405 թուականին տեղի ունեցած հայ գիրերու գիւտը եւ անոր հետեւող հայ մշակոյթի Ոսկեդարը, որ ՅԵՂԱՓՈԽԵՅ մեր աշխարհընկալումը, մեր ապրելակերպը եւ հայ կեանքը ընդհանրապէս:

Արդարեւ, աշխարհաքաղաքական բարդ իրադրութիւն կը տիրէր 5-րդ դարուն Հայաստանի մէջ եւ անոր շուրջ: 387 թուականին, Հայաստանը բաժնուած էր Հռոմեական կամ Բիզանդական կայսրութեան եւ Սասանեան Պարսկաստանի միջեւ: Կորսուած էր հայոց պետականութիւնը: Պէտք էր ապահովել ազգային, քաղաքական ու կրօնական միասնութիւնը հայերէն այբուբենի միջոցով:

Թէպէտեւ արդէն 100 տարի անցեր էր քրիստոնէութեան ընդունման թուականէն, սակայն ժողովուրդի մեծ մասը դեռ կը պահպանէր հեթանոսական կրօնքն ու սովորոյթները, քանի որ նոր կրօնքը անհասկնալի էր ժողովուրդի լայն զանգուածներուն: Քրիստոնէութեան դիրքերը կարելի էր ամրապնդել միայն այն ժամանակ, երբ եկեղեցական արարողութիւնները կատարուէին մայրենի լեզուով՝ հայերէնով, իսկ ատոր համար անհրաժեշտ էր սեփական գիրերու գոյութիւնը:

Հետեւաբար, ազգային-քաղաքական-կրօնական անհրաժեշտութիւն էր հայ գիրերու ստեղծումը, զոր յանձն առաւ Մեսրոպ Մաշտոց, ամբողջական զօրավիգովը Սահակ Պարթեւ կաթողիկոսին եւ Վռամշապուհ արքային: Եւ այսպէս, 405 թուականին կը ստեղծուին հայոց գիրերը եւ սկիզբ կ'առնէ գրական-թարգմանական-մշակութային բուն շարժում մը որ կը յեղափոխէ ազգային-քաղաքական-հասարակական կեանքը: Հայերէնի կը թարգմանուի մեծագոյն մատեանը՝ Աստուածաշունչը, որ կ'արժանանայ «Թագուհի Թարգմանչաց» բարձր գնահատականին: Ի դէպ, անոր անուանումն իսկ որպէս «Աստուածաշունչ» (Աստուծոյ Շունչ), աննախընթաց եւ խորիմաստ երեւոյթ էր, ցարդ՝



անգերազանցելի: Կը բացուին դպրոցներ, քրիստոնէութիւնը ժողովրդական լայն զանգուածներուն մատչելի կը դառնայ: Այնուհետեւ, հայերէնի կը թարգմանուին հին աշխարհի նշանաւոր շատ հեղինակներու գործերը: Կը գրուին հայերէն երգեր եւ շարականներ, հոգեւոր բանաստեղծութիւններ: Կը ծաղկին մանրանկարչութիւնն ու ճարտարապետութիւնը: Մէկ խօսքով՝ հոգեմտաւոր, մշակութային ամբողջ համակարգ մը կը ստեղծուի որպէս երաշխիք հայեցի ինքնութեան եւ լինելութեան:

Այսօր, մենք էապէս շեղած ենք ազգային ինքնութեան մեր վերոյիջեալ արմատներէն: Համաշխարհայնացման վիթխարի եւ ամէնակուլ յորձանուտին, ինչպէս նաեւ վայրի դրամատիրութեան կամ նիւթապաշտութեան ճնշման տակ որքա՛ն աղաւաղուած ու գրեթէ կործանման անդունդի եզրին է կանգնած մեր ինքնութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան յետ-անկախացման երեսուն տարիներուն, մենք ամենայն լրջութեամբ եւ խորութեամբ չմտածեցինք մեր ինքնւոյն ՄՇԱԿՈՅԹԻ մասին: Արդիւնքը եղաւ ա՛յն որ ՀԱԿԱՄՇԱԿՈՅԹԻ տարրեր թափանցեցին մեր Հանրապետութենէն ներս եւ տարածուեցան ամէնուրեք: Երեսուն տարի, եթէ իրերը իրենց անունով կոչենք, Հայաստանի Հանրապետութենէն ներս արմատ նետեցին ու զարգացան գողական մտածելակերպն ու քրեական մշակոյթը, անոնց ածանցեալ՝ հակամշակոյթն ու անոր չարժէքները: Սփիւռքի մէջ ալ, հայոց լեզուի, հայ մշակոյթի, հայեցի կրթութեան նահանջը ահաւոր չափերու հասած է: Մենք փակած ենք 200է աւելի հայ դպրոցներ, թերթեր, գրահրատարակչութեան կեդրոններ: Արդեօ՞ք պիտի դառնանք միայն ծագումով հայեր, որոնք քայլ առ քայլ պիտի ըլլան ազգային ուժացման աճող սպառնալիքի տակ, ի վերջոյ ազգային ձուլման եւ անհետացման ենթակայ:

Մենք ազգովին խնդիր ունինք ՅԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒԻ, որպէսզի կարենանք ազգի շարունակականութիւնը դնել հաստատուն հիմքերու վրայ: Պիտի մշակենք հայոց լեզուի, հայ մշակոյթի քաղաքականութիւն՝ դպրոցներէն սկսեալ մինչեւ հանրային բոլոր հարթակները՝ ձայնասփիւռ, հեռատեսիլ կամ պատկերասփիւռ, լրատուամիջոցներ եւ այլ: ՊԻՏԻ ՅԵՂԱՓՈԽԵՆՔ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻԻՆԸ, իր բոլոր բաղադրատարրերով՝ լեզու, գրականութիւն, պատմութիւն, կրօնք, բարոյագիտութիւն, քաղաքացիական կրթութիւն, հայրենաճանաչում եւ հայրենատիրութիւն:

Հայեցի կրթութիւնը՝ Հայաստանի մէջ թէ սփիւռքի, պէտք է կարենայ ազգային ինքնագիտակցութիւն ներշնչել պետական մտածողութեան հետ միասին, ինչպէս նաեւ ազգային ոգի ու նկարագիր, ազգային արժանապատուութիւն եւ ազգային հպարտութիւն: Այս բոլորին հետ միատեղ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ փոխանցումը, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ թէ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ էական խնդիր է: ՄՇԱԿՈՅԹԸ ՀՈԳԵԻՈՐ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ Է, նոյնքան կարեւոր որքան հայրենիքի տարածքային սահմանապահութիւնը Հայաստանէն ներս, իսկ սփիւռքի մէջ ԱԶԳԻ ՅԱՐԱՏԵԻՄԱՆ գերագոյն ազդակ է:

Մշակոյթի հոգեւոր սահմանապահութեան գերագոյն զենքը մեր լեզուն է: Այն լեզուն որ ներկայիս օտարաբանութիւններով աղճատուած ու աղաւաղուած է եւ օր-օրի համաճարակի նման կը տարածուի ամէնուր: Լատինատառ հայերէնը դարձեր է



տիրապետող վարակ՝ ընկերային ցանցերուն մէջ: Տակաւ կը նահանջէ հայերէնախօսութիւնը քիչ մ'ամէնուր:

Պիտի մոռնա՞նք անխորտակելի կամքը Տէր Զօրի անապատներուն մէջ սովալլուկ մեր մայրերուն, որոնք իրենց կմախքացած մատներով անապատի կիզիչ աւազներուն վրայ դրոշմեցին մերոպաշունչ այբուբենի տառերը, որպէս ապագայի փրկութեան լաստ ու պատգամ:

Այդ նոյն պատգամը այսօր կը հնչէ իր ամբողջ ահագանգային աղաղակով եւ զգաստութեան կոչով:

Մերոպեան աւելի քան 1500ամեայ աւանդը այսօր հայ հոգիին ճիչն է՝ վերադառնալու ազգային մեր արմատներուն, հայոց լեզուին, հայ մշակոյթին, հայ արժէքներուն, որոնք մեր քաջ զինուորներուն նման կը հսկեն մեր ինքնութիւնը, հայեցիութիւնը, լինելութեան կերպը դարէ դար, հազարամեակէ հազարանեակ:

Հայ մշակոյթը մեր հոգեւոր սահմանապահութիւնն է, որուն հզօրագոյն զէնքը հայոց լեզուն է:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԱԶԱՏ ԽՕՍՔ»Ի ԽՄԲԱԳԻՐ ՏԻԿ. ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՅ՝ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԼՈՒՐԵՐ»ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏԻԿ. ԱՆԻ ԶԷՅԹՈՒՆՅԵԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ-ՄՓԻԻՌՔ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԷՆ ՆԵՐՄ 24 Սեպտեմբերի, 2024

«Առանց ազգային արժէքներու՝ պետութիւնը հոգեզուրկ կ'ըլլայ, կը դառնայ պարզ քաղաքական միաւոր». Երան Գույումճեան

-Անի Զէյթունցեան- Մենք այժմ կը խօսէինք ինքնութեան եւ լեզուի պահպանման հրամայականի մասին, ձեր գնահատականը այս առնչութեամբ:

-Երան Գույումճեան- Բոլոր բանախօսները ըսելիք ունեն անշուշտ: Ամէնուն դիտանկիւնէն մաս-մաս քաղելով, մենք գաղափարներ կազմեցինք: Ես պիտի ուզէի հիմնական միտք մը արտայայտել: Մենք պիտի չմոռնանք որ աւանդական սփիւռքը կը բաղկանայ այն շատաւիղներէն, որոնք ցեղասպանուած եւ հայրենահանուած տարագիր արեւմտահայութեան բեկորներն են, որոնք համայնքներ կազմեցին, հայապահպանման մեծ աշխատանք տարին, բայց այդ ցաւը՝

անարդարուածի, իրաւագրկեալի մնացած է իրենց գիտակցութեան մէջ: Արդարութեան պայքարը մեր ինքնութեան գլխաւոր բաղադրիչն է, ինչպէս ըսած էր մեծ ցեղասպանազէտ դոկտ.. Վահագն Տատրեան, շեշտելով որ մեր հայկական ուսուցման հիմնական կորիզը պէտք է ըլլայ անարդարութեան դէմ պայքարը: Բոլոր բանախօսները, կամ ոմանք, հպանցիկ կերպով գուցէ անդրադարձան հաւաքական գիտակցութեան այս կարեւոր բաղադրիչին, բայց իրենց մատը չդրին այս արիւնող վերջին վրայ, որ մեր հաւաքական գիտակցութեան կարեւոր բաղադրիչն է:



-Ա.Զ.-Չէ՞ք կարծեր որ լեզուն մեր ինքնութեան յենասիւնն է:

-Ե.Գ.-Անշուշտ, հայոց լեզուն մեր ինքնութեան յենասիւնն է: Ան մեր լեզուամտածողութիւնն է, մեր հոգեբանութիւնն է, մեր աշխարհընկալումն է, մեր նկարագիրն է, մեր պատմութիւնն է: Արեւմտահայերէնի պարագային ալ՝ արեւմտահայութեան շունչն ու ոգին է, գոր պէտք է պահպանենք աչքի լոյսի պէս...Հայ դպրոցն է, որ Սփիւռքի մէջ պիտի պահպանէ մեր ինքնութիւնը: Հայոց լեզուն մեր ինքնապահպանման գլխաւոր զէնքն է. Դժբախտաբար, մենք դպրոցներ կը փակենք, 200-է աւելի դպրոցներ փակուեցան այս վերջին տարիներուն, որոնց մէջ գլխաւորաբար՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Սա հայեցի մեր ինքնութեան կործանման ուղղութեամբ առնուած քայլ է:

-Ա.Զ.-Ի՞նչ կը խորհիք, լեզուն, թէ՞ ոգին է կարեւորը:



-Ե.Գ.-Գիտէ՞ք, ոգին օդէն չի գար: Լեզուն կը սորվիս, բանաստեղծութիւն մը կը կարդաս, աչքերդ կը լեցուին...չէ՞ .., որովհետեւ ամբողջ ոգին խտացած է այդ տողերուն մէջ: Կոմիտաս կը լսես, կը յուզուիս. այդ ոգին քեզ հայ կը պահէ: Հայ երգը, բառը, գրականութիւնը, լեզուն...հոն է ոգին, նաեւ մեր յիշողութեան մէջ, մեր պատմութեան մէջ, ուր մեր արմատներն են: Արարատը կը տեսնես, կը յուզուիս, ինչո՞ւ, հո՞ն պիտի երթանք...բայց մեր հոգին կը ցոլայ այնտեղ, ան խորհրդանիշն է համայն հայութեան: Արարատը մեր հաւաքական տեսլականն է:

-Ա.Զ.-Ինչպէ՞ս կը գնահատէք Գագաթնաժողովը, մանաւանդ համաշխարհային տագնապալից, ճգնաժամային այս օրերուն: Անոր նպատակը յաջողած կը համարէ՞ք:

-Ե.Գ.- Երեւանի մէջ տեղի ունեցած Հայկական Գագաթնաժողովը փորձեց հայութիւնը համախմբել: Լաւ կազմակերպուած էր, բայց չեմ գիտեր թէ ան ինչ ուղերձներ կրցաւ տալ՝ այս արժեքներու խառնաշփոթին մէջ եւ ճգնաժամային օրերուն, ինչպէս դուք ալ կը նշէք: Մենք որքան ամուր պետք է կանգնինք մեր պետականութեան հզօրացման շուրջ, միասնականութեան մէջ է մեր ուժը: Չարենցեան պատգամը դարձեալ կը յուշէ որ մեր փրկութիւնը մեր հաւաքական ուժին մէջ է: Ոչ թէ՛ արեւմտամէտ, արեւելամէտ, հիւսիսամէտ կամ հարաւամէտ ըլլալուն մէջ: Հայութիւնը լայն հնարաւորութիւններ ունի, բայց մէկ բանի մէջ թերացած է... Ինքնակազմակերպուելուն՝ թէ սփիւռքի, թէ՛ հայրենիքի մէջ: Մենք աւելի ամրօրէն պիտի կառչինք մեր ազգային արժեքներուն, ազգային գաղափարախօսութեան: Առանց անոնց, պետութիւնը կրնայ հոգեզուրկ ըլլալ, կամ կրնայ պարզ քաղաքական միաւորի վերածուիլ:

-Ա.Զ.-Ինչպէ՞ս կ'եզրակացնէք ձեր միտքերը եւ այս հարցազրոյցը:

-Ե.Գ.-Հակառակ մեր բոլոր խարխափումներուն, ես կը հաւատամ որ Մենք՝ հայը, հայութիւնը, քայլ առ քայլ պիտի գտնէ ինքզինք: Լոյսը կայ, եւ մենք դէպի հոն պիտի քալենք: ՄԵՆՔ ՅԱԻԵՆԺԻ ՃԱՄԲՈՐԴ ԵՆՔ:

ԿԻՊՐԱՀԱՅ

ԿԻՊՐՈՍԻ ԹՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ 50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ



Ուրբաթ Սեպտեմբեր 20-ի երեկոյեան, Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան, ընկերակցութեամբ Երեսփոխանական Ժողովի ատենապետ Վահան Այնէճեանի, ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Ներկայացուցչական Տան կազմակերպած ցուցահանդէսին, Կիպրոսի թրքական ներխուժումի 50ամեակին առթիւ: Ներկայ էր նաեւ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը: Սրբազան Հայրը

առիթ ունեցաւ զրուցելու Խորհրդարանի Նախագահ Անիթա Տիմիթիուի եւ Մշակոյթի Ենթանախարար Տոքթ Վասիլիկի Քասիանիտուի հետ: Դիւան Ազգային Առաջնորդարանի

ՔԱՏԱՆՍ ԱՆՍԱՄՊԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ



23 սեպտեմբեր 2024, երեկոյեան ժամը 8:00ին, Սթրովոլոսի քաղաքապետարանի սրահին մէջ տեղի ունեցաւ համբաւաւոր Քատանս անսամպլի համերգը, կազմակերպութեամբ կիպրահայ համայնքի պետական ներկայացուցիչի գրասենեակին, ներկայութեամբ Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Կոմիտաս արք. Օհանեանի, Պետական Ներկ. Տէր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեաններու, թեմական, ազգային վարչութեանց

ներկայացուցիչներու եւ արուեստասէր հանրութեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ կազմակերպիչ Գրասենեակի վարիչ քարտուղարուհի Տիկ. Լուիզ Այնէճեան, բարի գալուստ մաղթելով ներկաներուն եւ անդրադառնալով Քատանսի հարուստ երգացանկին, որ կ'ընդգրկէ հայ հնամեայ, աւանդական երգերը եւ անոնց հետ շաղկապուած նորերը:

Այնուհետեւ, Քատանսի համայնքը յաջորդաբար կատարեց ճոխ յայտագրին մէջ տեղ գտած երգերը, ազգային-հայրենասիրական վառ ապրումներ փոխանցելով ներկաներուն, որոնք իրենց ծափահարութիւններով արտայայտեցին իրենց ջերմ գնահատանքն ու հիացումը:

Յայտագիրը ներառեց Սայեաթ նովայէն, Կումիտասէն, Ազնաուրէն, Արամ Խաչատուրեանէն սիրուած երգ-երաժշտութիւն մինչեւ յունական եւ եւրոպական սիրուած երգ-երաժշտութիւն:


Գնահատելի ձեռնարկ մը՝ արդարեւ, որ արժանացաւ ներկաներուն ջերմ ընդունելութեան եւ հայ երգային արուեստի ճաշակով եւ ոգիով լիացուց զանոնք:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՈՌՑՈՒԱԾ ԹԵՄԵՐԸ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՅԸ...

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔԶՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

18/9/2024



«Պահը հօր է, բայց աւելի հօր է յիշողութիւնը»:

(Եոհան Ֆրիտրիխ Շիլլեր)

2020 թուականի 27 սեպտեմբերէն մինչեւ 9 նոյեմբեր տեւող Արցախեան 44-օրեայ պատերազմին, ապա 2023 թուականի սեպտեմբերին իր պապենական հողերէն հայ բնակչութեան հայաթափումին հետեւանքով Արցախի կորուստը կը հանդիսանայ մեր նորագոյն պատմութեան մեծագոյն աղէտը: Ամենացաւալին մարդկային հազարաւոր կեանքերու դէմ իրագործուած ոճիրն է, իսկ անգնահատելին հայրենի

հողատարածքներու կորուստն է, արդիւնք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ միջազգային դաւադրութեան, ազերի-թրքական կանխամտածուած եւ լայնածաւալ յարձակումի:

1815 թուականի ցարական կառավարութեան հրամանագրով կը վերանայ Գանձասարի դարաւոր կաթողիկոսութիւնը եւ փոխարէնը կը ստեղծուի մետրոպոլիտութիւն մը՝ յանձին Սարգիս Բ. Հասան-Չալալեան մետրոպոլիտի, որ նախապէս՝ 1810–1815 թուականներուն, կը կրէր Գանձասարի կաթողիկոսի տիտղոսը, ապա մինչեւ իր վախճանը (1828)՝ վարչականօրէն Էջմիածնի կաթողիկոսութեան ենթակայ մետրոպոլիտի մը աստիճանը: Այդ ժամանակաշրջանին նորաստեղծ այս մետրոպոլիտութեան ենթակայ մարզերու եւ գաւառներու մէջ կը հաստատուին Էջմիածնի կաթողիկոսութեան ենթակայ երեք թեմեր՝ Արցախի, Գանձակի եւ Շամախիի անուններով:

Արցախի թեմին մէջ կը մտնէին Վարանդա, Խաչէն, Դիզակ, Բերդաձոր, Ջրաբերդ, Գիւլիստան, Լանքարան, Շաքի, Կապադակ, Հաջի, Խենի, Կամբեճան եւ Արաշ գաւառները:



11 մարտ 1836 թուականին ցարական կառավարութիւնը վաւերացուց «Փոլոժենիէ» անունով եկեղեցական կանոնադրութիւն մը, որուն 141 յօդուածներուն համաձայն պիտի առաջնորդուէր Հայ եկեղեցին: Ըստ այս կանոնադրութեան՝ ռուսական տիրապետութեան տակ գտնուող տարածաշրջաններուն մէջ գործող Հայ եկեղեցին կը բաժնուէր վեց թեմական վիճակներու, որոնցմէ հինգերորդն էր Արցախի թեմը:

Սարգիս Բ. Հասան-Ջալալեան մետրոպոլիտէն եւ իր արժանաւոր յաջորդ Պաղտասար Հասան-Ջալալեանէն ետք, Արցախի թեմը իր հոգեւոր-մշակութային եւ ազգային առումներով արդիւնաշատ գործեց եւ յարատեւեց մինչեւ 1930 թուականը, երբ խորհրդային հակակրօնական վարչակարգը ի նպաստ աստրալեյճանական իշխանութիւններուն փակեց գայն:

1988 թուականին սկիզբ առած Արցախեան ազատամարտի գրեթէ առաջին իսկ փուլին՝ 1989 թուականին, Վազգէն Ա. երջանկայիշատակ հայրապետի սրբատառ կոնդակով վերահռչակուեցաւ Հայ եկեղեցւոյ Արցախի թեմը՝ իր հոգեւոր խնամքին տակ վերցնելով 1836-թուականի թեմական տարածքները:

Այնպէս կը թուէր, որ Արցախի 2023 թուականի սեպտեմբերին իրագործուած չարաքաստիկ հայաթափումով ընդմիշտ վերջ կ'ունենար Արցախի թեմին գոյութիւնը: Այս առումով միանգամայն ողջունելի պէտք է նկատել Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդի 3 նոյեմբեր 2023 թուականին կայացուցած որոշումը, – հակառակ հայկական պաշտպանութեան բանակի եւ աշխարհագորային ստորաբաժանումներու կրած ծանր պարտութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ինքնալուծարումին, նաեւ Արցախի վերջնական հայաթափումին, – պահպանելու Արցախի թեմը եւ անոր հոգեւոր կարգավիճակը՝ յանձին իր թեմակալ առաջնորդ Վրթանէս եպս. Աբրահամեանի:

Հարկ է անկեղծ խոստովանիլ, որ սոյնը Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդի հազուագիւտ խելացի որոշումներէն մէկն էր: Ինչ նպատակ եւ ինչպիսի ղիտաւորութիւն կը հետապանուէր անիկա: Արդեօք Վրթանէս եպիսկոպոս կը շարունակէր ըլլալ Արցախէն Հայաստան բռնագաղթուած ժողովուրդին հոգեւոր առաջնորդը, թէ՛ այս մէկն ալ հերթական ուրիշ ռազմավարական ձախորդ քայլ մըն էր Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւններուն վարած քաղաքականութեան դէմ՝ դժուար է ըսել: Սակայն մենք պիտի ուզենք այս որոշումին մէջ դրականը գնահատել՝ միաժամանակ անկաշկանդ հարց տալով, թէ այս պարագային ինչու Հայ եկեղեցին մոռացութեան ենթարկած է իր պատմական միւս թեմերը: Թեմեր, որոնք գոյութիւն ունեցած են իրենց վանքերով ու բազմաթիւ եկեղեցիներով, նաեւ հայ ազգաբնակչութեան ստուար թիւերով, որոնք չար բախտին բերումով, արիւնալի կոտորածներով, բռնի տեղահանումներով, հայրենի հողային տարածքներու բռնագաւաթումով ֆիզիքապէս անհետացած են, բայց յիշատակը անոնց եւ պահանջատիրութեան իրաւունքը կենդանի են հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ:

Երբ չես յիշեր անձ մը, որեւէ երեւոյթ կամ առարկայ մը, ենթակայաբար, այսինքն՝ սուրբիտիւ իմաստով, կը դադրի գոյութիւն ունենալէ, հակառակ անոր, որ ան կրնայ առարկայական՝ օբիեկտիւ տուեալներով միշտ ալ ըլլալ շօշափելի իրականութիւն մը: Արդեօք այս եւ նման մտածումներու խորապատկերին վրայ չէր ըսեր Սկիւտարի հայ սոխակը՝ Պետրոս Դուրեան, իր «Իմ մահը» բանաստեղծութեան մէջ.



«Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՛հ, ա՛յն ատեն ես կը մեռնիմ»:

Առկայ յօդուածը չընդարձակելու նպատակով, պիտի չուզէի երթալ հնագոյն ժամանակները, այլ պարզապէս նշել, որ Կիլիկեան թագաւորութեան փառահեղ օրերուն հայոց կաթողիկոսութեան թեմական վիճակագրութիւնը շատ աւելի ընդաձակ էր քան Կիլիկիոյ սահմանները: Ըստ հայր Ղեւոնդ Ալիշանի «Միսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն մեծագործ» ստուար աշխատասիրութեան՝ գոյութիւն ունեցած են 23 թեմական վիճակներ. այսպէս՝ Միս, Տարսոն, Լամբրոն, Անաւարգա, Մամեստիա, Ատանա, Այաս, Բարձրբերդ, Կապան, Ծամնդաւ, Կոպիտառ, Սելեկիա, Ընկուզուտ, Հարգան (Հաճըն), Մոլեւոն, Մաշկետր, Բերդուս, Սամվելայ, Յոհնանց, Փիլիպպոսեան, Մեծար, Մաշարդ եւ Տիանա[1]: Այս շարքին պէտք է նկատել նաեւ Կիպրոսի վիճակը՝ աթոռանիստ ունենալով Նիկոսիա քաղաքը:

Այստեղ թուարկուած են անշուշտ այն թեմերը, որոնք մեծաւ մասամբ ներառուած են Կիլիկիոյ հայկական թագաւորութեան սահմաններուն մէջ: Սակայն պէտք է նկատի ունենալ նաեւ եկեղեցական այն վիճակներն ու կեդրոնները, որոնք աշխարհագրականօրէն կը գտնուէին Եփրատի արեւելեան տարածաշրջաններուն մէջ՝ Արեւելեան վարդապետներու, Աղուանից եւ Գանձասարի կաթողիկոսութեան, Միւնեաց մետրոպոլիտներու, Շիրակի, Էջմիածնի, Արարատեան դաշտավայրի եւ այլ վիճակաւոր եպիսկոպոսներու հոգեւոր վերահսկողութեան ներքոյ:

Համաձայն Մաղաքիա արք. Օրմանեանի հաղորդած հաւաստի տուեալներուն, նախաեղեռնեան ժամանակշրջանին[2] Հայ եկեղեցին իր թեմական վիճակներով կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Թեմական վիճակագրութիւն Ամենայն հայոց կաթողիկոսութեան՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնը – Երեւան, Նախիջեւան, Աղեքսանդրապոլ, Կարս, Տաթեւ, Տիգրիս, Գորի (Վրաստան), Ախալցխա, Գանձակ, Շուշի, Նուխի, Շամախի, Պաքու, Աստրախան, Ղզլար (Տաղստան), Պեսարապիա, Նոր-Նախիջեւան, Փեթերպուրկ, Մոսկուա, Սպահան, Թեհրան, Ատրպատական, Համատան, Կալկաթա, Պաթաիա (Ինտոնեզիա), Մուշաւա, Երոպա եւ Հիւսիսային Ամերիկա[3]: Թեմական վիճակագրութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Կիլիկիոյ Միս մայրաքաղաքը – Միս, Ատանա, Հաճըն, Փայաս, Բերիա, Գերմանիկիա (Մարաշ), Ուլնիա (Ձէյթուն), Ֆրոնուզ, Անթապ, Անտիոք, Մելիտինէ (Մալաթիա), Եոզղաթ, Կիւրին, Տեփրիկէ (Տեւրիկ) եւ Տարանտիա (Տարենտէ՝ Մեքաստիոյ գաւառ)[4]:

Երուսաղէմի հայոց պատրիարքութիւն, աթոռանիստ՝ Երուսաղէմ – Յոպպէ, Դամասկոս եւ Վերիտոն (Պէլրոս)[5]:

Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Կ.Պոլիսը – Կ.Պոլիս, Նիկոմիդիա, Արմաշ, Ադրիանուպոլիս, Ռոտոսթօ, Թեսաղոնիկէ, Պրուսա, Պիլէճիկ, Փանոբմոն, Գուրինա, Ձմիւռնիա, Պափղագոնիա, Գաղատիա, Կեսարիա, Իքոնիոն (Քոնիա), Մեքաստիա, Եւրոկիա, Ամասիա, Նիքոպոլիս, Ածպտեր, Սամսոն, Տրապիզոն, Կարին, Երզնկա, Բաբերդ, Բասէն, Դերջան, Կամախ, Խորձեան, Բագրեւանդ, Վան, Լիւս-Կտուց, Ադրակ, Բաղէշ, Տարօն, Սղերդ, Տիգրանակերտ, Բալախովիտ, Արդնի, Չնքուշ,



Խարբերդ, Ակն, Արաբկիր, Չմշկածագ, Չարսանձաք, Եղեսիա, Բաբելոն, Կիպրոս, Եգիպտոս, Պուլկարիա, Ռումանիա եւ Յունաստան[6]:

Աղթամարի կաթողիկոսութիւն՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Աղթամար կղզին Կաւաչ, Շատախ եւ Կարճկան քաղաքները (70.000 ազգաբնակչութիւն), նաեւ Խիզան[7]: Հայ եկեղեցւոյ վերոնշեալ նուիրապետական կեդրոններուն ենթակայ թեմական վիճակագրութենէն կը տեսնենք, որ պատմաքաղաքական հանգամանքներու բերումով, տարբեր պետութեանց սահմաններու ընդարձակումով կամ ոմանց սահմանափակումով պարտադիր փոփոխութիւններու ենթարկուած են նաեւ Հայ եկեղեցւոյ թեմական վիճակները՝ յաճախ հիներու վերացումով եւ նորերու ստեղծումով: Բաւական է համեմատել Թուրքիոյ հայոց պատրիարքութեան ենթակայ թեմերուն թուաքանակը՝ եզրակացնել կարենալու համար, թէ որքա՛ն հեղինակաւոր դարձած էր անոր դիրքը յաչս Օսմանեան կայսրութեան ԺԹ. դարուն եւ Ի. դարու սկիզբը՝ մինչեւ Յեղասպանութեան սեւ տարեթիւր եւ հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանումը հայրենի իր դարաւոր հողերէն:

Համեմատել կարենալու համար պատմականն ու արդիականը՝ աւելորդ պիտի չըլլայ այստեղ անդրադառնալ Հայ եկեղեցւոյ թեմական ներկայ վիճակագրութեան: Հոս պիտի տեսնենք, որ յատկապէս Ի. դարուն հայ սփիւռքի նոր գաղթօճախներու ստեղծումով հաստատուած են նոր թեմական վիճակներ, մինչդեռ երբեմնի թեմեր հայութեան նօսրացումով ընդհանրապէս անհետացած են:

Ամենայն հայոց կաթողիկոսութիւն՝ իր Ս. Էջմիածին աթոռանիստ կեդրոնով – Արարատեան, Շիրակի, Գուգարաց, Արմաւիրի, Միւնեաց, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունեաց, Վայոց ձորի, Տաւուշի, Արթիկի, Մասեացոտնի, Արցախի, Վրաստանի, Ռուսիոյ եւ Նոր Նախիջեւանի, Քրասնոտարի եւ Հիւսիսային Կովկասի, Ուքրանիոյ, Պալթեան երկիրներու, ԱՄՆ-ի (արեւելեան), ԱՄՆ-ի (արեւմտեան), Գանատայի, Արժանթինի, Պրագիի, Ուրուկուէի, Ֆրանսայի, Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Յունաստանի, Գերմանիոյ, Զուիցերիոյ, Եգիպտոսի, Իրաքի, Դամասկոսի, Աւստրալիոյ եւ Նոր Զելանտիոյ, Ատրպէյճանի, Թեհրանի, Սպահանի եւ Ատրպատականի հայոց թեմեր:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն՝ իր Անթիլիաս աթոռանիստ կեդրոնով – Լիբանանի, Բերիոյ, Ճեզիրէի փոխանորդութիւն, Դամասկոսի, Կիպրոսի, ԱՄՆ-ի (արեւելեան), ԱՄՆ-ի (արեւմտեան), Գանատայի, Յունաստանի, Սպահանի, Ատրպատականի, Քուէյթի եւ շրջակայքի, Վենեզուելայի հոգեւոր տեսչութեան, Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ շրջակայից հայկական թեմեր: Երուսաղէմի հայոց պատրիարքութիւն – Այստեղ հարկ է նշել, որ 1929 թուականին Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու ներքին համաձայնութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը Սիսի իր աթոռանիստ կեդրոնէն վտարանդի դարձած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կը զիջանի Դամասկոսի եւ Լիբանանի թեմերը, որպէսզի ան կարենայ պահել իր հանգամանքն ու վերապրելու հանրաւորութիւնները: Ներկայ վիճակով Երուսաղէմի հայոց պատրիարքութեան իրաւասութեան տակ կը գտնուին միայն Իսրայէլի հայակական եկեղեցիները եւ Յորդանանի հոգեւոր հովուութիւնը: Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն՝ Կ.Պոլսոյ իր աթոռանիստ կեդրոնով – Մինչեւ Երիտթուրք կառավարութեան իրագործած Հայոց ցեղասպանութիւնը, Թուրքիոյ հայոց պատրիարքական աթոռի իրաւասութեան սահմանները կը տարածուէին Օսմանեան կայսրութեան հայկական գաւառներէն մինչեւ Հիւսիսային Ափրիկէ, Թրակիայէն՝ Եւրոպա եւ Հիւսիսային Ամերիկայի նորաստեղծ հայ համայնքները: Սակայն Յեղասպանութեան սահմոկեցուցիչ ժամանակաշրջանէն եւ Թուրքիոյ նոր հանրապետութեան ստեղծումէն ետք



այս իրավիճակը կտրուկ փոխուեցա՝ գրեթէ ամբողջական կրճատումովը պատրիարքութեան երբեմնի հեղինակութեան: Բացի Թուրքիոյ մէջ գործող հայկական եկեղեցիներու հոգեւոր խնամքէն, իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռ ան հոգեւոր կեդրոնն է նաեւ Կրետէ կղզիի հայկական համայնքներուն: Այս համատեքստին մէջ առաջնորդական վիճակներու եւ թեմական կառոյցներու մասին խօսք չի կրնար ըլլալ: Աղթամարի կաթողիկոսութիւնը ութ երկարաձիգ դարերու գոյութենէ ետք կը դադրի իր վերջին կաթողիկոսին՝ Խաչատուր Բ. Շիրոյեանի վախճանումով 1895 թուականին: Նշուած թուականէն մինչեւ 1915 կաթողիկոսական աթոռը թափուր կը մնայ, սակայն թերեւս ունենար իր գահակալը, եթէ երբեք 1915 թուականի Յեղասպանութիւնը բիրաւոր անմեղներու արեան մէջ չխեղդէր գուցէ տակաւին առկայծող յոյսի մը վերջին նշոյլը: Վերը ներկայացուած Հայ եկեղեցւոյ պատմական եւ ժամանակակից թեմերու վիճակագրութիւնը ցոյց կու տայ, թէ բազմաթիւ թեմեր ընդհանրապէս վերացած են, եւ թէպէտ անոնք այսօր ֆիզիքական ներկայութիւն չեն, սակայն հայութեան համար տակաւին կը ներկայացնեն պատմամշակութային մեծ նշանակութիւն: Չիշել գանոնք եւ յաճախ անգիտութեան կամ անտարբերութեան պատճառով թաղել պատմութեան մութին մէջ՝ ազգային հաւաքական յիշողութեան պահպանման իմաստով ճիշդ եւ միանգամայն արդար չէ: Պատմական այդ թեմերէն շատեր եղած են հայկական կենսունակ բնակավայրեր, ուր ոչ միայն գերազանց զարթօնք ապրած է առեւտուրը, այլեւ հասարակական գիտութիւններն ու մշակոյթին առնչուած բոլոր ճիւղերը: Այս քաղաքներուն մէջ կերտուած են հայ ինքնութիւն, ազգին ու եկեղեցիին պատկանելու գիտակցութիւն, ուր ցոլացած է հայուն պատկերը ի տարբերութիւն զինք շրջապատող շատ մը այլազգիներու եւ ցեղերու:

Տակաւին վերջերս, 2 սեպտեմբեր 2024 թուականին, Արցախի անկախութեան օրուան առթիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը շնորհաւորական իր ուղերձին մէջ կը նշէ.

«Արցախը մեզի համար անցեալ չէ [...] Պատմութիւնը կը վկայէ, թէ պայմաններու բերումով կատարուած գրաւումները միշտ եղած են ժամանակաւոր [...] հարկ է մօտէն հետեւիլ շրջանէն ներս տեղի ունեցող աշխարհաքաղաքական պայմաններու հոլովոյթին [...] հեռու մնալով զիջումի քաղաքականութենէն»[8]:

Հոս պէտք է հարց տալ. արդեօ՞ք Հայ եկեղեցին մոռացութեան մատնելով իր պատմական թեմերը կամայ թէ ակամայ հաշտուած է զիջումի մը քաղաքականութեան հետ: Ինչո՞ւ ան կը զլանայ իր օժած եպիսկոպոսներուն եւ թեմակալ առաջնորդներուն տալ պատմական իր կորուսեալ թեմերուն տիտղոսները, ինչպէս ան ընդունուած կարգ մըն է Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյ մէջ:

Այս առնչութեամբ, ինչպէս նշուեցաւ, Կաթողիկէ եկեղեցին ցայսօր կը պահպանէ նուիրականացած աւանդոյթ մը՝ իր եպիսկոպոսներուն տալով իրենց վիճակաւոր թեմերէն անկախ յաւելեալ տիտղոս մը՝ իր երբեմնի պատմական թեմերուն անուններով: Կաթողիկէ եկեղեցւոյ այս կարգի հոգեւորականները կը կոչուին «տիտղոսաւոր» եպիսկոպոսներ: Կ'արժէ յիշել միայն քանի մը անուններ, որոնք երբեմն եղած են եկեղեցական թեմեր, սակայն ժամանակի թաւալումին մէջ պարագաներու բերումով, այլապէս զէնքի ուժով անոնք դատարկուած են իրենց քրիստոնէայ բնակիչներէն՝ ականայ իրենց տեղը զիջելով մահմետական այլազգիներուն: Կ'արժէ այստեղ յիշել անոնցմէ քանի մը հատը միայն. Հիպպոն (հիւսիսային Ափրիկէ), Կարթագէն (հիւսիսային Ափրիկէ), Եփեսոս, Անտիոք, Լաոդիկիա, Նինուէ, Անարզաբա, Տարսոն, Մոքսուեսթիա, Եդեսիա եւ այլն: Այս առնչութեամբ հետաքրքրական է տեղեկացնել, որ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Մեծի



Տանն Կիլիկիոյ կաթողիկէ հայոց ծիրանաւոր կաթողիկոս-պատրիարքը, որուն աճիւնները այս օրերուն (12 սեպտ. 2024) եկեղեցական մեծ հանդիսութեամբ Հռոմէն Պէյրութ փոխադրուելով ամփոփուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ-Ս. Եղիա հայ կաթողիկէ աթոռանիստ եկեղեցիին մէջ, 11 յուլիս 1935-ին Պիոս Թ.-ի ձեռամբ նախապէս որպէս Քոմանայի (Արեւմտ. Հայաստան) տիտղոսաւոր եպիսկոպոս ձեռնադրուած է: Նմանապէս կաթողիկէ հայոց ներկայ կաթողիկոս-պատրիարքը՝ Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Մինասեան, նախապէս եղած է տիտղոսաւոր արքեպիսկոպոս Կապադովկեան Կեսարիոյ հայոց:

Արդ հարց կը ծագի, թէ ինչպէ՞ս կարելի է, որ այս աւանդոյթը յայս Հռոմէական կաթողիկէ եկեղեցոյ Հայ կաթողիկէ եկեղեցին կրցած է իր եպիսկոպոսական դասուն համար պահպանել, մինչդէռ Հայց. առաք. Եկեղեցին, ունենալով հանդերձ պատմական բազմաթիւ կորուսեալ թեմեր, զլացած է իր առաջնորդները տիտղոսաւորել անոնց անուան յիշատակներով՝ իր հնաւանդ աւանդութիւններուն եւ ծեսին ընդմէջէն պահել-պահպանել կարենալու համար զանոնք իր հայկագուն հօտին հաւաքական վառ յիշողութեան մէջ:

«Պահը հզօր է, բայց աւելի հզօր է յիշողութիւնը»:

Մտածումը գերմանացի ականաւոր բանաստեղծներէն Շիլլերի կը վերագրուի, որ իբրեւ նշանաբան մեջբերած էինք այս գրութեան սկիզբը: 1759–1805 թուականներուն հեղինակած իր խոհախմբաստասիրական կարգ մը բանաստեղծութիւններուն մէջ Շիլլեր գեղեցիկ պատկերներով կ'անդրադառնայ յիշողութեան ուժին՝ հիմնականօրէն կեդրոնանալով հետեւեալ երեւոյթներուն վրայ.

ա.- Յիշողութիւնը իբրեւ հոգեւոր-իմացական երեւոյթ

Շիլլեր յիշողութիւնը կ'ընկալէ իբրեւ հոգեւոր-իմացական ուժ մը, որ կենդանի կը պահէ անցեալը: Ան հզօր երեւոյթ մըն է, որ հնարաւորութիւն կու տայ վերապրելու անցեալի իրադարձութիւնները, դէմքերն ու դէպքերը, որոնցմէ կը ներշնչուինք եւ կ'ուժաւորուինք:

բ.- Յիշողութիւն եւ ինքնութիւն

Վերոնշեալ ստեղծագործութիւններուն մէջ Շիլլեր առանցքային նիւթ կը դարձնէ այն փաստը, թէ ինչպէ՞ս յիշողութիւնը կը նպաստէ մարդու ինքնութեան ձեւաւորման: Արդարեւ, յիշողութիւնն է, որ կը ձեւաւորէ անհատը ու ներկային մէջ կը սահմանէ անոր «ես»-ը:

գ.- Անցողիկութիւն եւ յաւերժութիւն

Շիլլեր կ'անդրադառնայ պահի անցողիկութեան եւ յիշողութեան յաւերժութեան գաղափարին: Պահը ընդամենը ակնթարթ մըն է, հետեւաբար իսկոյն կ'անցնի ու կ'անհետանայ, յիշողութիւնը սակայն կը մնայ եւ կը դառնայ մարդու գոյութեան էական ու անբաժանելի մասը:

դ.- Յիշողութիւնը իբրեւ մխիթարութիւն պարգեւող երեւոյթ

Յիշողութիւնը կը հանդիսանայ մխիթարութիւն պարգեւող եւ յոյս ներշնչող երեւոյթ մը: Ամենադժնդակ ժամանակներու եւ անյաղթահարելի թուող իրավիճակներու մէջն անգամ ան երջանկառիթ պահերու յիշատակով կ'օգնէ ամենաթանձր խաւարին մէջ տեսնելու լոյսի



նշոյլ մը եւ թէկուզ անկումային ծանր կացութիւններու մէջ վերագտնելու ներքին ուժ մը՝ կէանքի փոթորկոտ բաւիղներուն վերստին կանգնիլ կարենալու համար:

Արդարեւ, փաստարկը արդարացի եւ կիրարկելի է՝ Հայ եկեղեցոյ նուիրապետական կարգը պատուաստելով տիտղոսաւոր եպիսկոպոսներու, թէկուզ վիճակաւոր վարդապետներու դրուածքով: Հակառակ պատճառաբանութիւնը արդարացի չէ՝ ըսելով «հիմա եղածը պահենք, անցեալը անցած է»: Անցեալին հետ ծուլաբար հաշտուելով չի զարգանար ապագան, որովհետեւ կայ անցեալ, որ ունի ապագայ, երբեմն մօտակայ, իսկ երբեմն հեռակայ: Ժամանակի յաւիտենական հոլովոյթին մէջ ոչինչ կը կորչի, այլ կը վերադառնայ, վերստին կը դառնայ ներկայութիւն, եթէ պահպանուի անոր հանդէպ հոգեկան կապը, պատկանելիութեան գիտակցութիւնն ու անմեռ յիշատակը:

Անշո՛ւշտ պէտք է ի գին ամէն զոհողութիւններու պահպանել ու պաշտպանել եղածը՝ այն ինչ որ ունինք, սակայն կարելի չէ բռնազաւթուածը անցած-վերջացած եւ յատկապէս մոռցուած համարել, այլ հարկ է միշտ կենսաւորել անոր յիշատակը մեր ազգային հաւաքական յիշողութեան մէջ: Արդարեւ, իրապաշտութիւնը գնահատելի է, սակայն ան ամէն ինչ չէ եւ չի ներկայացնէր բովանդակ ճշմարտութիւնը: Փաստօրէն մտածումներու այս համատեքստին մէջ ան շքադրամին դիմերեսն է միայն, կայ նաեւ անոր դարձերեսը: Մեր իմացած իրականութենէն այն կողմ միշտ գոյութիւն ունի ուրիշ իրականութիւն մը, որ կ'որոշուի ոչ թէ ժամանակի հերթական յառաջացումով, այլ անոր քայքայող ուժին դիմակայելու եւ անցողիկութեան դիմանալու ունակութեամբ: Այլապէս մոռնա՞նք ուրեմն Ադամակերտը, Ատանան ու Ալաշկերտը, Ամասիան ու Այնթապը, Արաբկիրն ու Արդանան, Արծկէն, Արձէշն ու Բաղէշը, Բաբերդը, Պայազիտն ու Բերկրին, Դատվանն ու Տիատին, Եղեսիան, Երզնկան ու Եղոկիան, Ձէթունն ու Թորթումը, Խարբերդը, Խլաթը, Խնուսն ու Խոզաթը, Կարսն ու Կարինը, Կերճանիսն ու Հաճընը, Մելիտինէն ու Մարաշը, Մուշն ու Սասունը, Շատախն ու Սեբաստիան, Սիսն ու Սղերթը, Վանն ու Տիգրանակերտը, Տրապիզոնն ու Տերիկը, Յուլակերտն ու Քղին, ապա Բագրատուեաց քաղաքամայր Անին ու համազգային մեր գոյութեան մեծագոյն խորհրդանիշ Արարատն ու Մասիսը:

Արցախի հանդէպ կաթողիկոսներուն, պատրիարքներուն, ոչ-պակաս նաեւ եպիսկոպոսներուն գրաւոր եւ բերանացի ելոյթներուն մէջ ցաւն ու վիշտը, բողոքն ու ընդվզումը ներազգայինէն մինչեւ միջազգային ատեանները զգալի են: Այս փաստը միանգամայն հասկնալի ու տեղին է, սակայն ինչո՞ւ նոյն զգացողութիւնը առկայութիւն չէ պատմական բազմաթիւ միւս թեմերուն առնչութեամբ: Լսա՞ծ էք օր մը համանման ելոյթ մը Նախիջեւանի վերաբերեալ: Նախիջեւանի կորուստը վաղնջական ժամանակներու մէջ պատահած իրադարձութիւն մը չէ, այլ ընդամենը 16 մարտ 1921 թուականին, երբ ռուս պոլշեիկներն ու քեմալական թուրքերը վերջնականապէս վճռեցին Նախիջեւանի հարցը՝ զայն յանձնելով Խորհրդային Ատրպէճանի վերահսկողութեան: Մի՞ թէ հաշտուած ենք այս իրողութեան հետ: Պէտք չէ՞ն նոյն ապրումները դրսեւորուին նաեւ Կարսի, Սիսի, Հաճընի, Սասունի, Ձէթունի եւ պատմական ուրիշ շատ մը թեմական վիճակներու հանդէպ:

Այս տրամախոհութեան հետեւելով՝ խօսուն ապացոյց մըն է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը. ինքնութիւն մը, որ մեզ հոգեկան-զգացական բոլոր թելերով կը կապէ պատմական այն փառահեղ անցեալին ու տարածաշրջանին հետ, ուրկէ ան յառաջացած է: Իր եզակի եւ անշփոթելի անունով ան ցայտօր հանդէպ կու գայ իբրեւ հոգեւոր-մշակութային եւ պատմական հարուստ աւանդոյթի փայլուն խորհրդանիշ մը, ջահակիրն ու պահապանը այն յիշողութեան, որ եղած է բնօրրանը Կիլիկիոյ հայութեան: Թէպէտ Հայ եկեղեցոյ



նուիրապետական այս աթոռը այլևս տեղակայուած չէ Կիլիկիոյ սահմաններուն՝ իր աթոռանիստ Միս մայրաքաղաքին մէջ, այնուամենայնիւ անոր նուիրական անունը կը պահէ անխզելի կապ մը հայ մշակոյթի, պատմութեան եւ ինքնութեան ակունքներուն՝ Կիլիկեան Հայաստանի հետ:

Ամենայն հայոց կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Երուսաղէմի եւ Կ.Պոլսոյ հայոց պատրիարքութեանց ենթակայ պատմական թեմերը, որոնք մեզի ծանօթ շատ մը պատճառներով այլևս հայաբնակ չեն, ժամանակին եղած են հայ հոգեւոր եւ մշակութային կեանքի կեդրոններ ու հայ ինքնութեան դարբնոցներ: Անոնց յիշատակին պահպանումը տիտղոսաւոր եպիսկոպոսներու անուանումներով խորհրդանշական անժամանցելի ուժ մը կը պարունակէ իր մէջ՝ իբրեւ հաստատականութեան եւ մոռացումի դէմ պայքարի հզօր ուղերձ մը:

Լիայոյս ըլլանք, որ Հայ եկեղեցւոյ հոգեւոր դասը կ'անդրադառնայ թերեւս ակամայ այս բացթողումին եւ մօտ ապագային օր մը իր թեմակալ առաջնորդներուն հնարաւորութիւն կ'ընձեռէ կրելու միաժամանակ հայոց պատմական թեմերուն անունները: Ո՞վ կամ ի՞նչը պիտի խանգարէ, եթէ էջմիածնական թեմերու վիճակաւոր առաջնորդներէն ոմանք կրեն սա կամ նա հայաթափուած պատմական թեմի մը անունը. օրինակ՝ Միւնեաց թեմի առաջնորդը՝ կրէ նաեւ Գանձակի թեմակալ առաջնորդի տիտղոսը, կամ Գուգարաց թեմի առաջնորդը՝ Շամախիի: Նոյնպէս՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը կրէ Միսի հայրապետական իր բռնագրաւուած թեմի առաջնորդի անունը, Պէրուրիինը՝ Ատանայի, Բերիայիինը՝ Անտիոքի, Յունաստանիինը՝ Գերմանիկիայի, Քուէրիինը՝ Այնթապի, Թեհրանիինը՝ Ուլնիոյ, Ատրպատականիինը՝ Անտիոքի, կամ Կիպրոսիինը՝ Հաճընի:

Պատմական այս եւ թերեւս տակաւին հոս չնշուած շատ մը թեմերու յիշողութիւնը գերազանցապէս աւելի զօրեղ է, քան պահը՝ այսօրուան անցողիկութիւնը, որովհետեւ ան կը մարմնաւորէ հայ ինքնութեան, պատմութեան եւ մշակոյթին շարունակականութիւնը: Անոնց անուններուն եւ հոգեւոր ինքնութեան պահպանումով մեր կեանքերուն մէջ տեղ կը տրուի երբեմնի այդ թեմերուն, մոռացութեան խաւարին մէջ թաղուելու փոխարէն անոնք ոչ միայն կը դառնան ներկայութիւն, այլև կը յիշեցնեն աշխարհին, որ այդ թեմերը եղած են դարաւոր բնակավայրերը հայ ժողովուրդին, անոր ունեցած ողբերգութիւններուն, Ցեղասպանութեան, կրած կորուստներուն եւ հայրենագրկութեան մասին: Այսպէս, սոյնը կը ներկայանայ իբրեւ հզօրագոյն միջոց՝ նախեւառաջ յարգելու մեր մշակութային ժառագութիւնը, այլև ապահովելու, որ այդ վայրերն ու անոնց նշանակութիւնը չանհետանան հայոց հայկազուն հօտի եւ Թորգոմայ տան ժառանգորդներուն հաւաքական յիշողութենէն:

17 Սեպտեմբեր 2024, Պաթոն Ռուժ – Լուիզիանա
Զկնի Ս. Խաչի՝ տօն է Ս. Եկեղեցւոյ


ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏԻ ԱՐԺԱՆԱԻՈՐ ՊԱՏՄԱԲԱՆ

ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻՆ, ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

«ՓՐՈՖ. ՅԱԿՈԲՈՍ ՃԷՃԻԶԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՈՒՄԸ» (117 էջ)

ՊԷՅՐՈՒԹ, 2023



Պարոյր Յ. Աղպաշեան

Սփիւռքի մէջ, հայ պատմագրութիւնը, իր զանազան տարբերակներով ու շրջաններով, շերտերով ու ժամանակներով, անտարակոյս, կ'ապրի ու կը գտնուի մտահոգիչ մղձաւանջի մը մէջ:

Ինչպէս հայերէնագիտական, կրթական, լրագրական, գրականագիտական ու ստեղծագործական մարզերը, որոնք արդէն իսկ կ'արձանագրեն անգապելի նահանջներ ու տատանումներ, պատմագիտական ու բանասիրական հետազոտութիւնները, ուսումնասիրութիւնները, մենագրութիւնները ու պատմագրութիւնները եւս կ'անցնին տժգոյն ու միապաղաղ հանգրուաններէ:

Աւելի բացայայտ. վերոյիշեալները, հայ մտքի ու մշակոյթի, արուեստի ու պատմութեան բովերէն ետք, իրենց հարուստ ու բազմասեռ ժառանգութեամբ, ներկայիս, առնուազն, կը տառապին իրենց հիւանդկախութեամբ, անշարժութեամբ, նոյնիսկ, կարգ մը պարագաներու, համարեա՝ զգալի ամլութեամբ:

Սփիւռքի նման պարագաները, եթէ առաւել կամ նուազ չափանիշներով, մեզի ծանօթ են, հարց է թէ հայրենական իրավիճակը ի՞նչ կը ներկայացնէ, կար ժամանակ, երբ ան լուսատու փարոս էր, ոգեշնչող աղբիւր, հպարտացնող իրականութիւն, իր անսպառ գրութիւններով ու հրատարակութիւններով, որոնք ԱՄԲՈՂՁ ԱՇԽԱՐՀ մը կը ներկայացնէին իրենց առատութեամբ, գիտականութեամբ, պատմագրութեամբ, գեղարուեստականութեամբ, արուեստագիտութեամբ ու մանկավարժութեամբ:

Անկասկա՝ ծ, Հայաստանի մէջ, գէթ այժմ, նոյն ցաւալի ու վիրաւոր վիճակը նուազ չկայ, բայց, անպայմանօրէ՛ն, կան վարկի ու որակի, մեղմ ըսած, որոշակի մակընթացութիւն եւ անկում:

Սակայն, ինչ որ ողբերգական է, այլեւ՝ դատապարտելի, սփիւռքահայ մտաւորականութիւնը կամ տեսիլքի դեսպանները (որքան ալ նուազած ըլլան), տեղեակ չեն, թէ հայրենական մտաւորականութիւնը ո՞ր կը գտնուի, անոր ստեղծագործութիւնները ի՞նչ կը ներկայացնեն կամ անոր հրատարակութիւնները արդեօք կը հասնին՝ համապատասխան հեղինակութիւններու ու շրջանակներու:

Պատասխանները խստօրէն ժխտական են, որովհետեւ հայրենի պատկան իշխանութիւնները անտարբեր են այդ դերակատարութեանց նկատմամբ, իսկ գրողական ու գրական ՊԱՇՏՈՆԱԿԱՆ մարմինները, լրիւ... թուլակազմ:

Դարձեալ պիտի վերյիշեմ Խորհրդային կարգերու ժամանակը, որ հակառակ դժուարութիւններուն եւ խստութիւններուն, խորհրդային բազմատեսակ ու տարաբնոյթ գրականութիւնը կը հասներ Սփիւռքի մտաւորականութեան, ընդ որուն՝ առեւտրական արտօնելի յղումներով, յաճախ ալ՝ գրախանութներու միջոցով:



Անկախ Հայաստանը այդ ուժը, կարողութիւնը չունի՞, թէ՞ տրամադրութիւնը չունի գրադելու նման «պարապ վախտի խաղալիք»ներով:

Հոս կարելի է դիտել տալ կամ յիշեցնել, արտասահմանի հայաստանեան դեսպանատուները ունի՞ն պարտաւորութիւն կամ յանձնառութիւն, այս ուղղութեամբ դառնալու հեզասահ ու գործնամիտ կամուրջներ, թէ՞ ատոնք ալ կրնան իրենց մշակութային կապերու ծիրէն դուրս դառնալ... անհասանելիութիւններ:

Վերջին հաշուով, Հայաստան-Սփիւռք կապերը որքան «թուլնան», մշակութայինը չի կրնար այդ «սեւ ճակատագիր»ին յանձնուիլ, որովհետեւ անոնք կեանք սնուցանող եւ արթնցնող ջերմ երակներ են եւ պէտք է մնան այդ հարթակներուն վրայ:

Խորհրդային Հայաստանի օրինակները՝ վկայ:

Այս թռուցիկ, այլապէս մնայուն կոչերը, մտորումները եւ գրառումները վերստին բարձրաձայնեցինք, որովհետեւ Սփիւռքի մէջ տակաւին կան յարգելի ու մեծարելի բուռ մը մտաւորականներ, որոնք, ոչ այս, ոչ այն կողմէն ակնկալութիւններ ունին, գնահատուելու եւ արժեւորուելու, այնքան ատեն որ՝ իրենց համար, գրիչի ու միտքի կենսունակութիւնը եւ յարատեւութիւնն են հիմնականը, որպէս անգին առաքելութեան բարձրագոյն ցուցանիշներ: Այդ կարգի մտաւորականներէն առաջին գիծի վրայ կու գայ՝ հանրայայտ պատմաբան, բազմավաստակ դասախօս-կրթական մշակ-խմբագիր եւ հարուստ հրատարակութիւններու ու մենագրութիւններու անխոնջ ու փայլուն հեղինակ

ԴՈՎՏ. ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻՆ

Դոկտ. Քասունի, անխափանօրէն շարունակեց եւ անդուլօրէն կը շարունակէ հարազատ կրողը մնալ իր կոչումին, լուազոյն ապացոյցը ըլլալով իր պատմաբանական ստուար հատորներու հրատարակութեանց, առանց փող-թմբուկի, այլ նախանձելի ժրաջանութեամբ փարելով իր «հոգեզուակ»ներուն, որոնք այնքան անգին ու սիրելի են իրեն համար:

Իր վերջին հրատարակութիւնը կը կոչուի.

«ՓՐՈՖ. ՅԱԿՈԲՈՍ ՃԷՃԻԶԵԱՆ»

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԻՈՒՄԸ

Գիրքը նուիրուած է «Ազգային գաղափարախօսութեան հաւատարիմ՝ համախոհ գրչակից եւ անշեղ բարեկամ Վեր. Պարգեւ Ն. Տարագճեանի թանկագին ու պայծառ յիշատակին»:

Դոկտ. Քասունի, իր յաջորդական հրատարակութիւններուն ու պրպտումներուն ընդմէջէն, յաճախ այնպիսի բացայայտումներ ու բնութագրումներ կատարած է, յաճախ Հայ Աւետարանական պատմագրութեան լայնածիր, երբեմն ալ «խոպան» մարգերէն ներս, իր շեշտակի վերլուծումներով եւ անշեղ լուսարձակումներով, ոչ միայն նորարարութիւններ գտնելու հետամուտ ըլլալով, այլեւ տալով անոնց արժանիքներն ու հաւաստի երանգները:

«Մուտք»ի մէջ (էջ 5-8), պատմաբանը հետեւեալ նշումները կը կատարէ.

«Փրոֆ. Յ.Ն. Ճէճիգեանի հետ առաջին հանդիպումս տեղի ունեցաւ, կ'ըսէ Դոկտ. Քասունի, երբ Վեր. Հայկ Ստեփան Խ. Իթիւճեանի «Կենսագրութիւն կամ Օրական Գրութիւն» ձեռագրի աշխատանքին քննական հրատարակութեան ձեռնարկեցի եւ հոն, ծանօթագրութիւններու բաժնին մէջ, խմբագրեցի իր կենսագրութիւնը»:

Այնուհետեւ, երբ Դոկտ. Քասունի իր ձեռքին տակ կ'իւնենայ Ճէճիգեանի «Ճառ՝ Յաղագս բնիկ եւ համարին գործակալութեան» գրութիւնը, զայն Արեւմտահայ կեանքի ամենէն եռուն ու հեռանկարները ծանրաբեռնուած օրերուն բանաձեւուած ու հրապարակ տրուած Ազգային Գաղափարախօսութիւնն է, այսինքն, «Ճառ»ը, իր նպատակալաց բովանդակութեամբ, Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի ազգային դիմագիծի երաշխագիրն է, կը հաստատէ ան, հետեւաբար, ժամանակ էր պէտք ու այսօր ժամանակ է Փրոֆ. Յ. Ն. Ճէճիգեանի բանաձեւած Ազգային Գաղափարախօսութիւնը կեանքի կոչելու»:



«Փոխան Յառաջաբան»ին մէջ (էջ 9-11), Դոկտ. Քասունի հանգամանօրէն կ'անդրադառնայ Փրոֆ. Ճէճիգեանի կենսագրութեան, որմէ ի յայտ կու գայ, թէ ան բազմավաստակ մտաւորական մը եղած է, իր ազգային-եկեղեցական-կրթական-հրապարակագրական-քարոզչական-դասախօսական աշխատանքներով, էլոյթներով, հրապարակումներով ու ներդրումներով:

Աւելի ընդարձակ, մանրամասն ու պատկերալից զարգացումներով նկարագրուած է նաեւ Ճէճիգեանի կենսագրական աշխարհը, առաւել Աւետարանական եկեղեցիի դերն ու տեղը անոր մէջ (էջ 13-40), ուր պատմականմութիւնը, եղելութիւնները եւ եկեղեցականութիւնը նոյնքան հետաքրքրութեամբ մատուցուած են եւ անոր ազդած հետեւանքները իր եւ համայնքին վրայ, ինչ որ պերճախօսօրէն լուսարձակի տակ կ'առնէ, թէ՛ ժամանակաշրջանի, թէ՛ եկեղեցւոյ, թէ՛ ազգային կեանքէն ներս, անոր բեղուն գործունէութեան ուրուագիծը:

Ազգային գաղափարախօսութիւնը, հայ ժողովուրդին համար եղած է (եւ է՛) այն կորիզը ու շնչերակը, որ անոր տուած է եւ կու տայ այն էականութիւնը եւ կենսականութիւնը, որով ան՝ լիցքով, կիրքով ու սերուցքով կը համակէ ու կը պարուրէ զայն, քանի որ ա՛յդ գաղափարախօսութիւնն է, որ հայ ժողովրդին համար կը դառնայ իսկական եւ աննկուն հիմնաքար մը, զայն պահելու համար կանգուն ու հաստատակամ:

Ահա այս գաղափարախօսական վարդապետութեան եւ իմաստասիրութեան քննարկումներու առանցքը կազմած են Դոկտ. Քասունիի այն արեւելումները, որոնց վրայ կեդրոնացած է իր պատմական-գաղափարախօսական հայեաքները եւ դիտարկումները, հիմնուելով Փրոֆ. Ճէճիգեանի գաղափարախօսական եւ իրատեսական ակունքներուն վրայ, որոնք ոչ միայն ողջմտական են, այլեւ՝ անհրաժեշտական, հայ ժողովուրդին տալու կենսուժի, իրաւաւժի եւ էաւժի առաձգականութիւն, գոյատեւելու ու վերածուելու հրամայականութեամբ:

Այս առընչութեամբ Դոկտ. Քասունի, կշռադատող ու հիմնորոշող պատմաբանի մը իւրայատուկ մօտեցումներով ու վերագրումներով, կրցած է Փրոֆ. Ճէճիգեանի իմաստասիրական-փիլիսոփայական խորհրդածութիւններուն ու մտասէւեռումներուն նորաշունչ եւ արդիական երեսները ցուցաբերել, մատնանշելով անոր Աւետարանամէտ դերակատարութիւններուն եւ ներգործութիւններուն ինքնատիպութիւնն ու իւրայատկութիւնը, որոնք բազմակողմանիօրէն եւ լրջախոհօրէն արժանի են համապատասխան ուշադրութեան եւ ուսումնասիրութեան, ստոնց հիման վրայ, Հայ Աւետարանչականութեան տալու իր ուրոյն գնահատանքի ու վարկանիշի ուղղեցուցային շառաւիղը:

Փրոֆ. Ճէճիգեանի «Ճառ...»ը, որ ամբողջութեամբ լոյս տեսած է այս հատորին մէջ (էջ 69-82), պատմաբան ու վաւերագէտ Քասունիի խմբագրութեամբ, արդէն ցոյց կու տայ ու կը հաստատէ, թէ այս գործը իր այժմէականութեամբ, իրատեսութեամբ, խոհականութեամբ եւ իմաստասիրութեամբ, որքան հրատապ, անժամանցելի ու հիմնահարցային գաղափարախօսական-խորհրդածական փաստաթուղթ մըն է, այդ մոայլ օրերուն, դառնալով լուսարձակային եւ ճառագայթային իրականութեան մը խօսուն բեմ մը, ոչ միայն իր ժամանակին առումով, այլեւ՝ ապագայի:

«Ճառ»ին մէջ արծարծուած էանիւթերը, օրինակ, իրենց համապարփակութեամբ, համազգայնականութեամբ, հայրենականութեամբ, եկեղեցապաշտութեամբ, հոգեպաշտութեամբ եւ առարկայապաշտութեամբ, արդէն կը յուշեն, Դոկտ. Քասունիի իսկ վկայութեամբ, թէ ան իր «ժամանակի կանչ»ը ըլլալով հանդերձ, նաեւ «սպագայի կոչնակ»ն էր, երբ հանրագումարի կը բերուին երեկուան եւ վաղուան առաջադրանքային տուեալները: Հատորին վերջին մասը՝ «Յաւելուածներ» (էջ 85-106), համալրուած են երեք բաժանումներով՝ «Բիւրակն» թերթէն, որ եղած է Հայ Աւետարանական երկրորդ թերթը՝ «Դիտարկ»էն ետք,

դառնալով ամենէն նշանաւոր պարբերաթերթէն, ուր Փրոֆ. Ճէճիգեան մեծ ազդեցութիւն ունեցած է եւ իր փառաւոր վաստակը հոն գերարժեւորած:

Դոկտ. Քասունի, իր այս հրատարակութեամբ, նոր եւ յաւելեալ ներդրում մը կը կատարէ հայ պատմագրութեան անդաստանին մէջ (այս պարագային՝ Հայ Աւետարանական կալուածէն ներս), որ նոր նուաճում մը կ'արձանագրէ, իր հարուստ ու բազմակոյտ ժառանգութեան մէջ: Ահաւասիկ, արժանաւոր ու հաւատարմ պատմաբան-մտաւորական մը, որ անկոտրում եւ անյուսահատ կամքով, կը շարունակէ իր սրբագոյն երթը, առանց նայելու աջ կամ ձախ, առանց ազդուելու ասկէ կամ անկէ, միշտ կառչած մնալով իր անհատական եւ մտաւորական սկզբունքներուն եւ միշտ՝ հաւատարիմ իր ազգային ինքնութեան ու մասնագիտական հրայրքներուն:

Յարգանք եւ ակնածանք իր արդիւնաշատ վաստակին եւ արժէքաւոր հրատարակութիւններուն նկատմամբ:

Հայ Աւետարանականները հպարտ եւ երախտապարտ պէտք է զգան, իրենց ծոցին մէջ ունենալու Դոկտ. Երուանդ Քասունիի բարձր հեղինակութեամբ պատմաբան մը, որ Աւետարանականներու պատմութիւնը լոյսին կը բերէ, հմուտ գիտնականի մը արժանաւորութեամբ ու ձեռնհասութեամբ:

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՄԷԿ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Յարութիւն Իսկահասեան – Պէրութ




Թաներ Աքչամ Հայոց Յեղասպանութեան մասնագէտներէն յառաջատար պատմաբան մըն է: Ան ծնած է Արտահանի մօտ գտնուող Օլչէք գիւղը, ծնունդով մեսիսթօցի թուրք է, այժմ ԱՄՆ կ'ապրի: Ան ոչ միայն բացայայտօրէն ընդունած է Հայոց Յեղասպանութեան փաստը, այլ շարունակաբար կ'աշխատի այս ծիրին մէջ եւ նորանոր վերլուծութիւններ կ'ընէ ու իր միտքերը կազմաւորելով հանդէս կու գայ հրատարակութիւններով: Անոր կարեւոր երկերէն է «Կայսրութենէն Հանրապետութիւն - Թրքական Ազգայնականութիւնը եւ Հայոց Յեղասպանութիւնը», Զօրեան Հիմնարկի Հրատարակութիւն, Տպարան Զէտ Պուքս, Լոնտոն եւ Նիւ Եորք, 2004, միջակ չափի 287 էջ («From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide», Zorian Institute Publication, ZED Books, London and New York, 2004, 287 pages):

Թաներ Աքչամ իբրեւ յառաջդիմական երիտասարդ թրքական քաղաքականութեան հարցերով առընչուած է, ձերբակալուած 1976-ին ձախակողմեան հակապետական ուսանողական խմբագիրի ամբաստանութեամբ եւ տասը տարուան բանտարկութեան վճիռ ստացած: Տարի մը ետք բանտէն փախուստ տալով հասած է Գերմանիա ու ապաստան գտած հոն Էմնըսթի Ինթըրնէշընըլ (Միջազգային Ներում) կազմակերպութեան միջոցով: 1988-ին ան սկսած է աշխատիլ Համպուրկի Ընկերաբանական Ուսումնասիրութիւններու Հիմնարկին մէջ: Հոն է որ հետաքրքրուած է Հայոց Յեղասպանութեամբ եւ այս նիւթին շուրջ 1996-ին դոկտորական թէզ պաշտպանած է Հանովըրի Համալսարանը: 2002-ին հրաւիրուած է Մինեսոթայի (ԱՄՆ) Համալսարանը իբրեւ դասախօս: Լոս Անճելոսի Գալիֆօրնիան Համալսարանին մէջ 2022-ին նշանակուած է



Հայոց Յեղասպանութեան հետազոտութեան Փրոմիս (Խոստում) հայկական հիմնարկի տնօրէն: Թաներ Աքչամ հեղինակ է տասը գիրքերու, որոնց վերջինը վերնագրուած է «Ամօթալի արարք. Հայկական Յեղասպանութիւնը եւ թրքական պատասխանատուութեան խնդիրը»: Ան գրած է անգլերէն, գերմաներէն եւ թրքերէն գործեր հայ-թրքական յարաբերություններու մասին (Համացանցային Կայքէջ.-

Թաներ Աքչամ առանց արդարացնելու թուրքերու ոճիրները հայոց դէմ, ներկայացուող գիրքին նախաբանին մէջ հարցը կը դիտէ այլ տեսանկիւնէ մը, որ չի կեդրոնանար միայն հայ-թրքական յարաբերություններու վրայ, այլ նկատի կ'ունենայ Օսմանեան Պետութեան դիմագրաւած մարտահրաւերները 19-րդ դարու վերջերն ու 20-րդ դարու սկիզբը, երբ Պալքաններու եւ Միջին Արեւելքի մէջ կարգ մը ենթակայ ժողովուրդներ ազատագրական պայքարներու ճամբով յաջողեցան իրենց տարածքները անջատել Օսմանեան Պետութենէն ու իրավիճակը հանգեցաւ վերջինիս տարածքներու կծկուելուն եւ վերջապէս կալուածափոխանցումով ի նպաստ թուրքիոյ Հանրապետութեան ստեղծման: Հարցը միայն տարածքի վերաբերեալ չէ, այլ Օսմանեան Պետութեան մէջ ապրող ժողովուրդներու ինքնութեան ու պատմութեան գոյատեւումն է: Երբ Հայոց Յեղասպանութենէն ետք հայ ազգը հետզհետէ կրկին կազմաւորուելու սկսաւ, հոս հաւաքական յիշողութիւնը հաւատարիմ մնաց ճշմարտութեան:



Այս է պատճառը որ հայ ազգը այդ սեւ օրերէն մինչեւ այսօր պատշաճօրէն կը յիշէ իր նահատակները, իր պատմութիւնը ամուր ժայռի վրայ փորուած արձանագրութենէ աւելի հաստատ եւ ճշմարիտ հիմերու վրայ դնելով: Հայ ազգը տակաւին կը մղէ իր ազատագրական պայքարը, թէեւ ներկայիս գիրով ու գրիչով: Նոյնը չէ պարագան այլ ժողովուրդներու, մանաւանդ թուրք եւ քիւրտ ժողովուրդներուն, որոնք ճիշդ է որ գոյատեւեցին եւ մնացին ազգեր, որոնք ունին իրենց հաւաքական յիշողութիւնը, բայց անոնց պարագային այս յիշողութիւնը հիմնուած է սուտի եւ կեղծիքի վրայ: Անոնք դաւաճանեցին ճշմարտութեան: Երկու հակասական պատմութիւններ ծնած են՝ մէկը ճշմարիտ, միւսը կեղծ: Ներկայի համաշխարհայնացումի մթնոլորտին մէջ, դժուար թէ այս ազգերը առանձնութեան մէջ ապրին: Անոնք յարատեւ շփման մէջ են իրարու հետ: Հետեւաբար անկարելի է մոռնալ կամ խեղադիւրեւել անցեալը:

Թաներ Աքչամ վերոյիշեալ իրականութենէն հետեւեալը կ'եզրակացնէ. «Թրքական ընկերային շրջանակներու մէջ Հայոց Յեղասպանութեան փաստին մասին բացայայտօրէն արտայայտուիլը կը նշանակէ Հայոց Յեղասպանութիւնը միաձուլել թրքական գրաւոր արձանագրություններու մէջ, ինչ որ ուղիղ խթան մը կը ծառայէ Թուրքիան դէպի ժողովրդավարութեան մղելու: Սակայն, տակաւին դժբախտաբար Թուրքիոյ մէջ այս պահանջուած արթնութիւնն ու գիտակցութիւնը գոյութիւն չունին» (էջ 12) : Թաներ Աքչամ գիրքին յառաջաբանին մէջ կը շեշտէ երկու անջատ պատմական յիշողություններու առկայութիւնը Թուրքիոյ մէջ: Առաջինը Օսմանեան Պետութեան ժամանակի եղելություններու վերաբերեալ, իսկ երկրորդը՝ Թրքական Հանրապետութեան շրջանի մթնոլորտը, որուն մէջ յաստակօրէն կը ցցուի Հայոց Յեղասպանութեան ուրացումը եւ Հայոց Յեղասպանութեան փաստին երեւոյթը կողք կողքի՝ անուղղայ եւ ուղղամիտ ու անկեղծ թուրք անհատ հեղինակաւոր մարդոց գիտակցութեան ու ճանաչման հետ: Քանի որ



առաջին կարծիքը մեծամասնութեան ու իշխանութեան կը պատկանի, դժուար կամ անկարելի հարց է երկրին մէջ իրականացնել ժողովրդավարական համակարգ մը:

Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի ժամանակաշրջանին համակարգի ղեկավարութիւնը, որ իսլամ կրօնքը մէկդի դրաւ ժողովուրդին կեանքէն, լաւ գիտէր թէ կրօնքը անոր կեանքի զօրաւոր սիւներէն մէկն է: Ընթացքին մէջ սակայն, ժողովուրդը չհրաժարեցաւ իսլամ կրօնքէն ու այդ մնաց ըլլալ կեանքի զօրաւոր յենարաններէն մէկը: Այս իրականութեան պատճառը պարզապէս այն էր թէ թրքականութիւնը չի բաժնուիր իսլամ կրօնքէն, իսլամութիւնն ու թրքականութիւնը գուցահեռ կ'ընթանան: Թուրքը կամ քիւրտը միայն ցեղային սահմանումով չի կրնար սահմանուիլ, այլ իսլամ կրօնքը միշտ այդ ցեղայինին կ'ընկերակցի:

Թաներ Աքչամ կ'ըսէ թէ թուրքերու մէջ կը նկատենք զօրաւոր տենչ մը պատմութիւնը մոռնալու: Այս զօրաւոր փափաքը կը բացատրուի այն հոգեբանական ազդակով, որ հայերը ջարդերու ենթարկելէ ետք, թուրքը կ'ուզէ իր յանցանքը ծածկել ու այս ձեւով կ'ընտրէ ինքնապաշտպանութեան մեքենայութիւն մը: «Մոռնալու» երեւոյթին կը յաջորդէ «բռնաստիքութիւն»ը՝ կ'աւելցնէ հեղինակը: Վերջապէս թուրքը կը դիմէ «ուրացում»ի իբրեւ կտրուկ միջոց բռնատէրի նման յանցանքները ծածկելու (էջ 224):

Գալով Թուրքիոյ կայսրութենէ հանրապետութիւն հասնելու իրավիճակին, թուրքերը տակաւին չեն կրցած մարսել այս իրականութիւնը: Պարզապէս դիւրին պարագայ մը չէ երեք երկրամասերու սահմաններուն տարածուող զօրաւոր կայսրութիւնը զիջիլ եւ սեղմուիլ երկու երկրամասերու մէջ, մտնելով հանրապետութեան մը իրավիճակին մէջ: Եթէ Թուրքիա հաշտուէր այս իրավիճակին հետ եւ անկեղծօրէն ընդունէր ներկան, ապա ան այս ջղային կացութեան պիտի չմատնուէր: Ուր մնաց որ եթէ Թուրքիա ընդունէր Հայոց Ցեղասպանութիւնը եւ հաշտուէր իր անցեալին հետ, այն ատեն երկրին մէջ ժողովրդավարութիւնը պիտի հաստատուէր եւ դառնար կեանքի բնական ընթացք (էջ 231):

Թաներ Աքչամ կ'ըսէ թէ թուրանիզմի, փան-թուրքիզմի եւ փան-իսլամիզմի ընդմեջէն թուրքերու մէջ ծնած է զօրաւոր նարկիզականութիւն (ինքնաստիքութիւն) մը: Բազմաթիւ զինուորական պարտութիւններ այս զգացումի պահանջները անտեսեցին եւ թրքական նարկիզականութիւնը զօրաւոր հարուածներ ստացաւ: Փոխանակ հաւաքականութիւնը իր հոգեբանական բարդոյթներէն ազատելու, Մուսթաֆա Քեմալ շարունակ յառաջ քշեց վերոյիշեալ թուրանիզմն ու փան-թուրքիզմը ժողովուրդին հաւաքական հոգեվիճակը հիւանդագին վիճակի հասցնելով (էջ 234):

Խաղաղութեան ձգտիլ եւ միեւնոյն ժամանակ անցեալը մոռացութեան տալ յաջողութեան չառաջնորդեր: Մոռացութեան տալու ընթացքը կը ջնջէ անցեալի դրական յատկանիշները, առանց որոնց խաղաղութեան եւ մտքի հանգստութեան հասնիլը անկարելի կը դառնայ: Թաներ Աքչամ աւելի ամփոփ ձեւով կը բացատրէ այս երեւոյթը ըսելով. «Պատմութիւն կը նշանկէ հաւաքականօրէն պրպտել անցեալը: Պատմութիւնը սերտօրէն կապուած է ազգային, ընկերային եւ տնտեսական անցեալին: Վերոյիշելով՝ հաւաքականութիւնը անցեալի մէջ լուսանցքաւորուած հարցերը կրկին երեւան կը հանէ (էջ 235):

Թաներ Աքչամ կ'աւելցնէ. «Անցեալը յիշելը եւ անոր մասին խորհիլը, զայն մեր էութեան մէկ մասը կը դարձնէ: Այդ մէկը լաւագոյնս կրնան ընել նոր սերունդները, որոնք անցեալի դէպքերուն վերաբերեալ ուղիղ պատասխանատուութիւն չունին: Մէկ խօսքով այս գործը կ'իյնայ այսօրուան սերունդի ուսերուն, որովհետեւ անոր անդամները աւելի ուշ գոյութեան եկած ըլլալով անմեղ կը սեպուին, միեւնոյն ժամանակ անոնք լրիւ գիտակից են անցեալի բացասական բնոյթին: Կ'առաջարկեմ որ ընկերաբանութեան եւ հոգեբանութեան գիտութիւններու օգնութեամբ, նոր սերունդը անցեալի վերաբերեալ բոլոր մտահոգութիւնները նուազագոյնի իջեցնէ, որպէսզի տանելի ըլլայ բեռը, եւ աւելին՝ այդ



մտատանջութիւններէն դասեր քաղելու առաջնորդէ երկիրը, օգտակար ըլլալու համար ընկերութեան ներկայ բարգաւաճումին» (էջ 235-236):

Թաներ Աքչամ եզրակացնելով կ'ըսէ թէ պէտք է քաջալերենք թուրքերու եւ հայերու երկխօսութիւնը, սակայն ասկէ առաջ պէտք է սրբագրուի հարց մը, որ ցարդ այս երկխօսութեանց մէջ երկու կողմերէն թուրքը հանդէս կու գայ իբրեւ Հայոց Ցեղասպանութեան ուրացողը: Կողմերը իրար կը հանդիպին ընկերային որոշ խաւի մը պատկանող անհատներով: Երկխօսութիւնը պէտք է ըլլայ պարզապէս «թուրք»ին եւ «հայ»ուն միջեւ: Հոս կը շեշտուի մարդ արարածը: Աւելին՝ պէտք է որ երկու ժողովուրդներու զուակները իրար հետ ընկերային ու տնտեսական շփման մէջ գան, որպէսզի հեշտ ըլլայ իրար հասկնալու գործը:

Թաներ Աքչամի կարծիքները առ այժմ դժուար ընդունելի են երկու կողմերէն ալ՝ հայէն եւ թուրքէն, բայց մասնագիտութեամբ ընկերաբան ըլլալով եւ իբր պատմաբան, ան իր կարծիքը կը յայտնէ ելլելով այս գծով կայացած համաշխարհային փորձառութեան օրինակներէ: Ժամանակը ցոյց կու տայ թէ այս մէկը իրողութիւն պիտի ըլլայ՝ հայուն եւ թուրքին միջեւ, որովհետեւ մինչեւ հիմա եղած փորձերը պարտադրուած եղած են եւ այդ պատճառով ալ ձախողած:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ՈԳԵՂԷՆ ԿԱՌՈՅՑՆԵՐ

Մարուշ Երամեան



Համացանցէն իմացած էի, որ «Օրերս Բերիոյ Թեմի նուիրեալ Սրբազանի բարձր կարգադրութեամբ, հալէպահայ մեր հայրենակիցները մեկնած են Տէր Զօր, մօտէն ծանօթանալու համար Հայ Ժողովուրդի յարութեան վկայարան հանդիսացող՝ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ ընդհանուր իրավիճակին: Եւ

անշուշտ այցը պէտք է դիտարկել եկեղեցին հիմնապէս նորոգելու միտումնաւ ընդհանուր ճիգերու նախապատրաստութեան իբրեւ առաջին քայլ»:

«Նշեմ նաեւ, որ Սրբոց Նահատակաց եւ առհասարակ Տէր Զօր այցելած էր Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսը»:

«Տէր Զօրը միայն եկեղեցի, Աստուծոյ տուն կամ սոսկական կոթող մը չէ, ավելին է, ոգի է ու պէտք է պահել այդ կրակը...»:

Ասիկա մեզի կը յիշեցնէ այն օրերը, երբ ամբողջ սփիւռքահայութիւնը մեծ խանդավառութեամբ մասնակցէր էր Տէր Զօրի մէջ յիշատակի կառոյց-մատուռ մը շինելու համար եղած նուիրատուութիւններուն, որմէ ետք ճարտարապետ Մարգիս Պալմանուկեանի գեղեցիկ եւ խորհրդանշական յղացումով կառուցուած էր եկեղեցին, որուն տակ, գետնայարկը վերածուել էր թանգարանի (ձեւաւորում եւ իրագործում՝ ճարտարապետ Գեորգ Երամեանի):

Կառոյցին ամբողջացումէն ետք մեծ շուքով կատարուեցան անոր օծումն ու բացումը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոսին կողմէ, 3-4 Մայիս 1991-ին, հո՞ծ բազմութեան մը ներկայութեամբ:

Յուշահամալիրը բաղկացած է եկեղեցիէ, թանգարանէ, յուշարձանէ, արխիւային կեդրոնէ եւ ցուցադրութիւններու սրահէ:



21 Սեպտեմբեր 2014-ին յուշահամալիրը «Իրաքի եւ Լեւանտի Իսլամական պետութիւն» ահաբեկչական խմբաւորման կողմէ պայթեցուած է:

Այսօր, վերստին պիտի ձեռնարկենք անոր նորոգութեան, ինչպէս շահ տուի՞ր կառոյցներու վերանորոգումին Հալէպի մէջ, Սուրիոյ տարածքին, թէ Պէրոյթի (Լիբանան) մէջ, կրկին ահագին գումար պիտի ծախսուի եւ թերեւս կրկին ... Աստուած մի արասցէ:

Բայց չեմ կրնար նաեւ այլ երկու լուրեր չդնել այս լուրին կողքին եւ երկա ր-երկա՛ ր չմտորել անոնց հաստատած երեւոյթին մասին.

Վերանորոգում Տէր Զօրի յուշահամալիրին,

Փակում Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցին (անհիմն տարածայնութի՞ւն արդեօք. հաւանաբար շէնքը այլ նպատակի համար օգտագործելու):

Երկու լուրերն ալ լուր են տակաւին, բայց «չկայ ծուխ առանց կրակի» կ'ըսէ ժողովուրդը. հաւանական կրակը արդէն սկսած է խանձել էութիւնս:

Ըսեր են արդէն _ թէեւ տակաւին չեմ գիտեր՝ շշուկո՞վ թէ բարձրաձայն _ որ յոռետես մըն եմ եւ միշտ ժխտականը կը տեսնեմ երեւոյթներուն ետին: Ասիկա բնաւ հարց չէ, որովհետեւ յստակ է շփոթը յոռետեսութեան եւ իրապաշտութեան միջեւ շատերու միտքին մէջ:

Սակայն կա՞յ արդեօք որեւէ դրական կէտ այս երկու լուրերուն մէջ:

Եւ եթէ չկայ, եթէ եղածը միա՛յն ժխտական է, պէտք չէ՞ այդ մասին մտածել, իրապաշտօրէն, առանց անօգուտ եւ ապարդիւն զեղումներու կամ հռետորութեան, առիթ չտալու համար որ անցեալի սխալները կրկնուին:

Ա՛յս ալ յոռետեսութիւն պիտի համարէք: Բայց դուք չէ՞ք գիտեր, թէ՞ միայն չէք ընդունիր, որ ունեցեր ենք սխալներ, շատ սխալներ, անցեալին: Զանոնք հերքելը եթէ պիտի օգնէ մեր գալիքը դրականի վերածելու, ե՛ս ալ ձեզի հետ կը հերքեմ այդ բոլորը եւ կը լծուիմ քաղցր երազանքի:

Բայց թոյլ տուէք շարունակել:

Կը մտածեմ՝ կա՞յ ձեւ մը նման քարեղէն կառոյցները ոգեղէն կառոյցներով փոխարինելու:

Թերեւս ոգեղէն եւ կառոյց բառերը երբեք չեն ներդաշնակուիր, իրարու հակառակ իմաստներ պարփակելու պատճառով.

Ոգեղէն՝ հոգեկան, աննիւթական, անմարմին:

Կառոյց՝ շինուածք, կազմուածք, շէնք:

Ի՞նչ կրնան ըլլալ մեզի համար ոգեղէն կառոյցները:

Հաւանաբար հայկական մշակոյթը՝ իր բոլոր արտայայտութիւններով, հայկական արուեստները, հայ գրականութիւնը:

Կը մոռնանք սակայն այս թուարկումին մէջ յիշելու նոր սերունդը. ան որ հոս է այսօր եւ ան որ պիտի գա՞յ անպայման, որպէս դրօշակիր, որպէս ժառանգորդ, եւ իր կարգին՝ որպէս ժառանգը փոխանցող ներուժ:

Ինչպէ՞ս կարելի է հասնող սերունդները վերածել ոգեղէն կառոյցներու: Ահա՛ գլխաւոր հարցը, որուն ուսումնասիրութեան նուիրուիլը կրնայ շահ տ դրական, թերեւս անսպասելի արդիւնքներ տալ մեզի:

Ինչպէ՞ս: Նախ՝ փաստագրելով մեր անձնական կեանքը, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը կարելոր մէկ մասնիկն է գաղութին, եւ ի՛ր կեանքը փաստագրելով, փաստագրած կ'ըլլայ գաղութին կեանքէն մաս մը:

Վերջերս օրինակ Գահիրէի մէջ տեղի ունեցաւ Համա-ՀՄԸՄական խմբապետական Թ. համագումարը, որուն տարբեր գաղութներէ բազմաթիւ երիտասարդ-երիտասարդուհիներ մասնակցեր էին: Շատ հաւանաբար այդ մասին պաշտօնական զեկուցում մը կատարուեցաւ, ինչպէս նաեւ _ թերեւս _ թղթակցութիւն մը: Սակայն որքա՛ն լաւ պիտի ըլլար, որ մասնակիցներէն մէկ քանին իրենց տպաւորութիւններն ու յուշերը գրէին. այդ



պարագային պիտի նշէին երեւոյթներ, որոնց բնականաբար անդրադարձած պիտի չըլլար պաշտօնական զեկոյցը:

Երկրորդ՝ ճիշդ նոյնը կարելի է ըսել ընտանիքներու պարագային: Եթէ ընտանիքի մը մէջ նշանաւոր դէմք մը կայ, անոր մասին կրնան պատմել իր եղբայր-քոյրերը, ծնողքը, կամ անմիջական բարեկամները: Ինչ որ կը պահուի որպէս յուշ, կրնայ կարելորդ դեր ունենալ ապագային մէջ: Պահ մը եթէ մտածենք, թէ մեր նահատակ գրագէտներէն իւրաքանչիւրը օրագրութիւն պահած ըլլար, կամ յուշեր գրած ըլլար, որքա՛ն հարստացած պիտի ըլլայինք իմանալով անոնց մտորումներն ու կարողալով յուշերը:

Դասական ուսումէ անդին նաեւ հմտութիւններ ձեռք բերելու պէտք է մղել մեր երիտասարդները. ճիշդ է, որ այսօր ամէն բան մասնագէտներու ձեռքով կը կատարուի մեր գաղութներէն ներս, սակայն կա՛ն տակաւին այնպիսի տարածքներ, ուր տարբեր տեսակի հմտութիւններ կը պահանջուին:

Ներշնչել երիտասարդները, որ իրենց գաղութներուն մէջ՝ ակումբներու թէ բարեսիրական հաստատութիւններէ ներս, գործունէութիւն մշակեն:

Երիտասարդ առաջնորդներ պատրաստել (leaders). ինչպէ՞ս. նախ իրենց առիթ տալով, որ առաջնորդեն: Ընդհանրապէս այս գաղափարը հաւանութեան չ'արժանանար, որովհետեւ երիտասարդները «տակաւին անփորձ են»: Սակայն ասիկա իր ժխտական երեսը ունի՝ եթէ սպասենք, որ կարողութիւն ունեցող երիտասարդները փորձառու դառնան, օր մըն ալ պիտի տեսնենք, որ հեռացեր են եւ մենք կորսնցուցեր ենք զիրենք եւ իրենց կարողութիւնները հաւաքականութեան սպաս դնելու առիթը: Բայց եթէ իրենց առիթ տանք, առանց պաշտօնականութեան, անոնք պիտի կարենան իրենք զիրենք մարզել (թերեւս նաեւ սխալելով), եւ երբ ժամանակը գայ, պատրաստ պիտի ըլլան լրջօրէն կատարելու իրենց վստահուած դերը: Այսպէս է որ կրնանք ունենալ պատրաստուած ատենապետներ, ատենադպիրներ եւ վարչութեան անդամներ, որոնք գիտեն ժողով վարել, օրակարգ պատրաստել եւ թելադրանքներ ընել աշխատանքը կատարելու համար:

Եւ ի վերջոյ յստակօրէն ըսել երիտասարդներուն, թէ ի՛նչ կը սպասուի իրենցմէ տուեալ աշխատանքի մը մէջ: Միայն այդպէս է որ սխալներէն կը խուսափին եւ կրնան լաւապէս կատարել իրենց վստահուած աշխատանքը:

Արեւելքի մեր գաղութներուն մէջ այս բոլոր նշուածները բնական ձեւով կը կատարուին, հեզասահ ընթացքով երեցներէն երիտասարդներուն անցընելով ջահը: Կը կատարուին մանաւա՛նդ հայերէնով, ինչ որ կարելի չէ ըսել այլ գաղութներու պարագային դժբախտաբար:

Այս ոգեղէն կառոյցներու պատրաստութեան ընթացքին ամէնէն կարելորդ իմանալն է, թէ ժամանակը կը փոխուի, հետեւաբար երեցներն ալ պէտք է փոխուին, ճիշդ ինչպէս որ հին կառոյցները կը նորոգենք, նոյնպէս ալ երիտասարդներուն մտիկ ընելով կրնանք մենք մեզ նորոգել եւ վստահ ըլլալ, թէ մեր այս ոգեղէն կառոյցները _ որոնք անհամեմատօրէն աւելի էական եւ կարելորդ են _ առողջ հիմերու վրայ դրեր ենք:

<http://www.kantsasar.com/news/52325-2/>

ՄԵԾԱԳՈՅՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՄԻ ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆԻՆ ՀԵՏ



Տղա՛ք, երաժշտութիւնը կեանք կը փրկէ, սուֆեճիոն անոր Ա,Բ,Գիմն է,- Պրն. Համբարձում Պերպերեան, 1959 Հոկտեմբեր, Պէյրուօ:

Այս խօսքը լսեցի, երբ ընդունուեցայ ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանի նախապատրաստական (ՆԲ) դասարանը: Ես՝ Պէյրուօի հայահոծ համեստ թաղերէն քաղաքի կեդրոնը գտնուող այս վարժարանը յայտնուեցայ: Խոր երկիրաճութեամբ առաջին օրը շարուեցանք բակին մէջ: Տնօրէն Պրն. Արա Թօփճեանը ինձի համար բաւական «բարդ» հայերէնով բաներ մը խօսեցաւ, միայն կը յիշեմ երկար բառ մը՝ «առանձնաշնորհեալ»: Քանի մը ամիսէն եւ ապա յետագայ տարիներուն լիովին պիտի հասկնայի այդ բառին ամբողջ իմաստը:

Այո՛, առանձնաշնորհեալ էինք, որովհետեւ պիտի ունենայինք ուսուցիչներու փաղանգ մը, որուն շնորհիւ մենք եղանք ինչ որ ենք այսօր: Այդ ուսուցիչներէն էին Զարեհ Մելքոնեանը (հայերէն), Համբարձում Պերպերեանը (երգ-երաժշտութիւն), Տ. Գեորգ վարդապետ Կարպիսեան (գրաբար, դասական գրականութիւն), Երուանդ Քասունի (հայ գրականութիւն), Փօլ Կիրակոսեան (նկարչութիւն), Գերսամ Ահարոնեան (հայոց եւ ընդհանուր ազգաց պատմութիւն), Վահէ-Վահեան (հայ գրականութիւն) եւ այլ ուսուցիչներ գիտական ճիւղերու գծով:

Քանի մը դասերէ ետք մենք արդէն գոց գիտէինք Պրն. Համբարձում Պերպերեանի եւ Սանթրեան մականունով նաեւ ճանչցուած հարազատներու տանջալից ողիսականը: 1905-ին ծնած էր Կիլիկիոյ միօրեայ մայրաքաղաք Ատանայի մէջ, գաղթ, աքսոր, հարազատներու կորուստ, որբանոց, վերադարձ Ատանա, կրկին տեղահանում, Պոլիս, Իզմիր եւ ապա՝ Հալէպ ու Պէյրուօ: Մեզմէ շատերու համար անձանօթ չէր իր աստանդական կեանքը, որովհետեւ գրեթէ ամէն օր կը լսէինք մեր երեցներէն եւ Պէյրուօի հիւղաւաններու բնակիչներէն:

Պրն. Հ. Պերպերեանէն սորվեցանք հայրենասիրական երգեր եւ սուֆեճիօ: Սիրեցինք այդ երգերն ու Բ. Պատերազմէն ետք վերականգնուող Խորհրդային Հայաստանի մէջ յօրինուած աշխատանքային երգերը, «գեղաքանդակ» Երեւանին նուիրուած երգեր, որոնք մեր կողմէ կ'երգուէին մեծ ապրումով ու խանդավառութեամբ տօնակատարութիւններու եւ հանդէսներու ընթացքին: Ափսոսացինք, երբ ան



մեկնեցաւ ԱՄՆ-ի Պոսթոն քաղաքը, ուր եղաւ ԹՄՄ-ի հիմնադիրը եւ մեծ զարկ տուաւ Արեւելեան ափի հայ երգ ու երաժշտութեան զգալի տարածման:

Այս տարի կը լրանայ ԱՄՆ-ի մէջ Թէքէեան Մշակութային Միութեան հիմնադրութեան 55-ամեակը: Այս բարեբաստիկ առիթով Մեծագոյն Լոս Անճելըսի ԹՄՄ-ի երիտասարդ վարչութիւնը նախաձեռնած էր յոբելեանական տարեդարձը նուիրել իր մեծ երախտաւորին՝ Մաեստրօ Համբարձում Պերպերեանին: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 6-ին Իրանահայ Միութեան շքեղ սրահին մէջ՝ հովանաւորութեամբ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Հանդիսութեան ներկայ էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս Տիար Կարէն Իսրայէլեանն ու տիկինը: Հակիրճ խօսքով մը հանդէս գալով Հիւպատոսը իր շնորհակալական խօսքին մէջ շեշտեց մշակոյթի դերը եւ դրուսանքի խօսքեր ըսաւ կազմակերպողներին:

Հանդիսութիւնը յազեցած էր Հ. Պերպերեանի ստեղծագործութիւններու կատարումներով՝ մեներգներ, ջութակ, որոնց կատարողները կը հանդիսանային Լոս Անճելըսի լաւագոյն երաժիշտներէն ոմանք, ինչպէս Անահիտ Ներսիսեան (մեներգ), Պերճ Քարազեան (թենոր), Անջելա Ամիրեան (ջութակ), Հոփսիսիմէ Ռշտունի (դաշնամուրի ընկերակցութիւն): Սրտառուջ ելոյթ մը ունեցաւ նաեւ Հ. Պերպերեանի ամէնէն տարեց մտաւորական աշակերտը՝ Դոկտ. Տ. Զաւէն Աւագ քահանայ Արգումանեան (տեսերիզով): Կը մեջբերեմ հետեւեալ վկայութիւնը. «Պերպերեան իր կարեւոր նպաստը բերած է նաեւ հայ եկեղեցական երաժշտութեան, տարիներ շարունակ սորվեցնելով եւ դեկավարելով Սուրբ Պատարագի երգեցողութիւնները, յատկապէս Անթիլիասի Դպրեվանքէն ներս»:

Հանդիսատեսներուն մէջ զգալի թիւ մը կը կազմէին Համբարձում Պերպերեանի սան-սանուհիներ ու երգչախումբերուն մասնակցած անդամ-անդամուհիներ: Աշակերտներուն անունէն սրտառուջ ելոյթ ունեցաւ Պէրոյթի ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարանի աշակերտներէն Տիգրան Էքիզեան, որ նախ իր անկեղծ շնորհակալութիւնները յայտնեց ձեռնարկը կազմակերպողներուն՝ այս գեղեցիկ հանդիսութիւնը յղանալուն համար: «Միրելի եւ անմոռանալի ուսուցիչ,- ըսաւ ան,- ես եւ քու բազմաթիւ աշակերտներդ աշխարհասփիւռ, այսօր կուզենք փոխանցել մեր երախտաշատ զգացումները քեզի եւ քու սրբազան հոգիիդ, որ կեանք մը ամբողջ նուիրեցիր հայ երաժշտութեան, եւ մեր հոգիներուն մէջ ծաղկեցուցիր անմահ սերը մեր պանծալի մշակոյթին, մեր աննման երգին եւ երաժշտութեան»:

Յայտագրի աւարտին տեղի ունեցաւ ԹՄՄ-ի 55-ամեակի կարկանդակը կտրելու արարողութիւնը՝ ձերամբ վաստակաւոր թէքէեանական Պրն. Բարսեղ Գարթալեանի, ապա բեմ հրաւիրուեցան Հ. Պերպերեանի սան-սանուհիները նկարով մը օրուան յիշատակը յաւերժացնելու համար:



Երաժշտութեան եւ երգի մեր անփոխարինելի ուսուցիչը **Երեւոյթ** մըն էր Միջին Արեւելքի, բայց յատկապէս Լիբանանի մէջ, ուր 50-60-ական թուականներուն հայ մշակութային եւ երաժշտական կեանքը աննախընթաց վերելք մը ապրեցաւ՝ երգչախումբեր, նուագախումբեր, երգի-պարի համոյթներ, տօնահանդէսներ (Պաալպէք)՝ Պէրոյթը վերածեր էին Արեւելքի Փարիզի, իսկ հայերուս պարագային՝ սփիւռքի Երեւանի:

Համբարձում Պէրպէրեան ոչ միայն գլխաւոր դերակատարներէն մէկն էր այս ծաղկունքին, այլեւ հիմնադիրներէն մէկը: Իր ցուցաբերած վաստակին առ ի գնահատանք 1978-ին Երեւան հրաւիրուեցաւ եւ ընդունուեցաւ մեծ շուքով:

Այսօրուան պէս կը յիշեմ Երեւանի Ֆիլհարմոնիային մէջ Մաեստրոյի ստեղծագործութիւններուն նուիրուած շքեղ համերգը, որուն իր ներկայութեամբ մեծ շուք կու տար Վազգէն Ա. Հայրապետը իր շքախումբով: Ֆիլհարմոնիայի նուագախումբը կատարեց Հ. Պէրպէրեանի ստեղծագործութիւնները, մեներգողներն էին «Հայաստանի Սոխակ» Գոհար Գասպարեանը («Կանձրեւէ տղաս»), եւ անգուգական Լուսինէ Զաքարեան:

Պրն. Հ. Պէրպէրեանի համերգին ներկայ էին նաեւ ՀԲԸՄ-ի դպրոցներու շրջանաւարտներ (որոնց մէջ նաեւ ես), որոնք կ'ուսանէին Երեւանի բարձրագոյն հաստատութիւններու մէջ: Երբոր մեր պատուիրակութիւնը բեմ բարձրացաւ հսկայական ծաղկեփունջ մը նուիրելու, սիրելի ուսուցիչը յուզումով տալով մեր անունները եւ դառնալով հանդիսականներուն ըսաւ. «Ասոնք իմ տղաքս են...»:

Քիչ կը պատահի, երբ ուսուցիչ աշակերտ սիրտէ սիրտ կապը կ'ընկերակցի մեզի կեանքի ամբողջ ընթացքին, կը մոռցուին մանր-մունր դէպքերը եւ աւելի կ'անուշան հարազատ պահերը: Պրն. Համբարձում Պէրպէրեան իմ նման շատերու կեանքին մէջ եղած է այդ անձերէն մէկը: Փառք ու պատիւ իր փառաւոր վաստակին:

* * *

Անարդար պիտի ըլլայի եթէ ակնարկիս մէջ չդրուատէի կազմակերպիչներու նուիրուածութիւնն ու ցուցաբերած բժախնդրութիւնը: Արդարեւ, այս կոկիկ յայտագիրը կը պարտինք երիտասարդ վարչականներու, որոնք իրենց արհեստավարժութեամբ անմոռանալի երեկոյ մը պարգեւեցին մեզի եւ դեռ պիտի պարգեւեն: Յայտագիրը արագ եւ սահուն ընթացաւ շնորհիւ հաղորդավարներ Յասմիկ Գարայեանի (վարչութեան անդամուհի) եւ Միհրան Թումաճանի (ատենադպիր) հեգասահ հանդիսավարութեան: Այս փաստին իր փակման խօսքին մէջ անդրադարձաւ Թեմիս Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան ըսելով. «Այսպիսի որակաւոր հանդիսութիւններով մեզ ճանչցնել կու տան մեր

մեծերը...այսպիսով մենք հաղորդ կը դառնանք պատմութեան եւ մեր մեծերու թողած արժէքներուն»:

Յիրաւի, Լոս Անճելըսի ԹՄՄ-ը ապահով ձեռքերու մէջ է:

Դոկտ. Մինաս Գոճայեան

Լոս Անճելըս, 14 Սեպտեմբեր 2024

ՏԵՍԱԿԷՏ

ԼԻԲԱՆԱՆ-ՊԱՂԵՍՏԻՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՈՒՆԻՒՆ

ԲԱՑԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵՆԷՆ

ԻՆՉ ՈՐ ԶԼԱՑՈՒԵՑԱԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Ամէն անգամ կամ առիթով, երբ իրազեկ կը դառնամ հոս ու հոն տեղի ունեցող պատերազմներուն եւ առճակատումներուն, անոնք արդարացի ու տեղին ըլլան թէ ոչ, ակամայ կը մտածեմ, թէ ինչո՞ւ կը բռնկին եւ ո՞վ է մեղաւորը (կամ գոհը):

Անշուշտ, տրամաբանական ու համոզիչ պատասխանները միշտ գտնելը դիւրին չըլլար, որքան ալ, կարգ մը պարագաներու, անոնց ետին գտնուող պատճառները, առաւել կամ նուազ չափերով, ծանօթ ըլլան,

երեւելի, թափանցիկ կամ շօշափելի:

Մէկ բան, սակայն, յստակ է, որ բիրտ, նուաճող, բռնատիրող ու տարածապատող ուժերն են, որոնք հետամուտ են կազմակերպելու, ծրագրելու, դաւադրելու, հրահրելու եւ իրականացնելու այդ անկայունութիւնները, մերթ ալ օգտուելով այլոց անգորութենէն ու համակերպութենէն:

Զարմանալ թէ ոչ, նոյն այդ յարձակողապաշտ ուժերը, իրենց ախորժակները յագեցնելու եւ սկարները լլկելու ճամբուն վրայ, երբ կը հասնին իրենց սին եւ անմարդկային նպատակներուն, անմիջապէս կը փութան, յատուկ դերասանավայելութեամբ, իրենց լուծումները առաջարկելու եւ օգնութեան ձեռնարկները ներկայացնելու:

Բնական է, ոչ թէ մարդասիրական հակումներով կամ միջպետական ազնուութեամբ, այլ՝ զանոնք նախ ստրկացնելու միտումներով, ապա՝ լծելու իրենց կառքերուն, որպէս հլու-հնազանդ «ճորտ»ական պետութիւններ:

Իսկ անոնք, որոնք կը մերժեն կամ կը տատամսին հետեւելու այդ միջամտութիւններուն, կ'ենթարկուին դաժան վերաբերմունքներու, բացայայտ կամ քողարկեալ ճնշամիջոցներով:



Վերջերս, ի տես նման զարգացումներու ու մագլցումներու ժխտրին, կը գրէի, թէ Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմները, թէեւ վերջ գտան, ոմանց յաղթանակներով կամ պարտութիւններով, բայց, շատերու մօտ առաջացուցին ԱՆԿՈՒՇՏՈՒԹեան տրամադրութիւններ, վրէժխնդրութեան մտածումներ, պատերազմական հոգեբանութիւններ ու գիշատիչութեան նախապաշարումներ:

Այս բոլորը, շատ-շատերու մօտ «վառ» մնացին, այլեւ շարունակուեցան աճիլ ու հողշահիլ, այս կամ այն հարթակներու վրայ փորձելով պարտադրել իրենք զիրենք, տեղ մըն ալ յիշեցնելով որ իրենք կան եւ գործօն են ու ժամանակը ցոյց պիտի տայ այդ դառն իրականութիւնը, երբ հասուննան իրենց մոլուցքային կատաղութեան ճիրանները:

Ահաւասիկ, նկատի ունենալով մոլեգնութեան այս կամ այն երեւոյթները, նաեւ ռազմական ու դիւանագիտական խայթող ու սրուող օրինակները, արդէն գուժած էի, որ հորիզոնին վրայ կը թեւածէ... Գ. համաշխարհային պատերազմի մը ուրուականը, որ այժմ կրնայ ըլլալ մշուշապատ, բայց, ատիկա աւելի քան յստակ է ու պարզ, որ կը խմորուի, կը խլրտի ու կ'իբերայ բազմաթիւ ոլորտներէ ներս, օր մը դառնալով աղիտաբեր, աշխարհին ու մարդկութեան համար:

Այսօրուան մօտեցումներով եւ իրատեսութեամբ, արդէն նշմարելի էին, կը գրէի, որ բազմաթիւ վայրերու մէջ, բռնկումները սկսած են տեղաշարժուիլ ու տեղաշարժել ցամաքամասեր ու շրջաններ, որոնք եթէ ներկայիս ամենուրեք տարածուած չեն, վաղը, միւս օրը, ո՞վ ըսաւ որ անոնք ալ պիտի չներառնուին այդ դժոխային յորձանուտներուն մէջ, որովհետեւ, զիրար բզբտելու կամ հաշուեյարդար տեսնելու ձգտումներն ու թունաւորումները առկայ են եւ բարձրագոյն մակարդակներու վրայ, փակ եւ շարժուն դարակներու մէջ, անոնք կը գործեն ու կը հրապարակուին մատի ու ձեռքի դպչումով:

Այս պատեհութեամբ, ինձի համար (վստահաբար ուրիշներու ալ), ոչ միայն մտահոգութիւն, այլեւ ահազանգային հոլովոյթ են պատերազմական այն ճակատումները, որոնք տեղի ունեցան (ու կ'ունենան) Կովկասի ու Միջին Արեւելքի մէջ:

Եթէ առաջինի պարագային, Ատրպէյճանը ու Թուրքիան, իրենց ետին ունենալով դիմակաւոր դաշնակիցներ, կրցան Արցախեան հայաշխարհը բռնագրաւել, հայաթափել, աւերակել ու շնանալ, թէ իրենց արդար (՞) յաղթանակով ու տեղին իրաւունքով (՞) հասած են այդ արդիւնքին, կրնան միայն ինքզինքնին խաբել, որովհետեւ այդ «շնորհալի»ութիւնը իրենց տրուեցաւ այն օղակներէն, որոնք իրենց շահերէն եւ հաշիւներէն մեկնելով Արցախը փորձեցին «գոհ»ել, իսկ ատոնք ոչ ոքի համար անձանօթ են, մանաւանդ՝ որ այդ ուժերը, զիտէին ի՛նչ կ'ընէին, որո՛ւն համար կ'ընէին եւ օգտուողները ո՛վքեր պիտի ըլլային:

Կը բաւեր տեսնել, որ պաշտօնական եւ անպաշտօն վարձկան կողմերը, ոչինչով նպաստեցին ու միջամտեցին, որ Արցախը չենթարկուի նման դաժան ճակատագիրի, բայց, ինչպէս ըսի, ներսիցիներն ու դրսեցիները «կարկանդակ»ը միասնաբար ուտելու ու վայելելու հեւքի մէջ էին, իսկ երբ ատիկա իրականացաւ, «կոկորդիլոսի արցունքներ» թափողները, կեղծաւորաբար շատցան, սակայն, ի գուր...:

Այժմ, եթէ վերադառնանք Միջին Արեւելքի տարածքը, յատկապէս պաղեստինեան-իսրայէլեան եւ լիբանանեան-իսրայէլեան ճակատները, կը տեսնենք, թէ հոն տիրող բախումները, երբեք չեն դադրած, այն ժամանակներէն սկսեալ երբ Իսրայէլը կարգուեալ «ոստիկանապետ»ը եւ «հաւատաքննիչ»ը շրջանին, Ամերիկայի եւ դաշնակից պետութիւններու ապօրէն կարգադրութեամբ:

Շփացած ու լրբացած իսրայէլեան կոտորաւոր վարչակարգը, առանց ականջ դնելու որեւէ կողմի, իրեն յարմար դատած կարգով, կը հարուածէ ու կը թիրախէ աջ ու ձախ, չի բաւեր, որ կը դարպասէ Պաղեստինը ու Լիբանանը, անվախօրէն ու լկտիօրէն, իր պատերազմիկ



թաթերը կ'ուղղէ նաեւ Սուրիոյ եւ Եմէնի վրայ, կարծես թէ նախախնամութեան հրահանգը ու կամքի ազատօրէն իրաւունքը իրեն պարգեւուած է եւ ոչ ոք իրաւունք ունի միջամտելու իր սեւագործեան լաթերուն մէջ:

Աշխարհի արդարամիտ ու մարդասէր ԺՈՂՈՎՈՒԻՐՆերը հանդէս կու գան հաւաքական հանրահաւաքներով ու ցուցարարութիւններով, անհանդուրժելի եւ անընդունելի գտնելով իսրայէլեան ռոնձգութիւններն ու բարբարոսութիւնները, բայց, որո՞ւն հոգը, ո՞վ կը լսէ, երբ Ամերիկան իր երիտասարդները կը պատժէ, կը պաշտօնագրկէ ու կ'արտաքսէ համալսարաններէն, քանի անոնք կը պախարակեն ու կը քննդատեն եղած անիրաւութիւնները, իսկ Իսրայէլ կը շարունակէ իր սպանողը, ըսելով. «Դուք բոլորդ լռեցէ՛ք ու պապանձեցէ՛ք, ես իմ իրաւունքովս կը շարժիմ եւ ո՛չ ոքէ արտօնութիւն կ'առնեմ»:

Լա՛ւ, նման անյարիւր, անիրաւական եւ անհաւասարակշռական կացութեան մը մէջ, երբ Պաղեստինն ու Լիբանանը «լքուած» են կամ «թողլքուած» իրենց ճակատագիրին, շուրջ 70 տարիէ ի վեր, պատկան պետութիւններ՝ եւրոպական թէ արաբական, համակուած անտարբերութեամբ կամ լուսագոյն պարագային, կեղծ ու անհաղորդ դերակատարութիւններով, հետաքրքրական է պաղեստինցի՞ն պիտի հրաժարի իր հողային-հայրենական իրաւունքներէն, թէ՞ Լիբանանը անձնատուր պիտի ըլլայ իսրայէլեան քմահաճոյքներուն ու պարտադրանքներուն:

Պայմանները ցոյց տուին (ու կու տան), որ անոնցմէ ոչ մէկը պատրաստ է գլուխ ծռելու անբարոյ եւ ապիկար պետութեան մը քմայքներուն առջեւ, պատրաստ ըլլալով, ոգի ի բռին պաշտպանելու ինքզինք ու տէր կանգնելու իր իրաւունքներուն:

Եթէ այս չոր, այլապէս անվիճելի հաստատումները, անհասկնալի եւ անհասանելի են, Իսրայէլի կամ այլոց համար, կը մնայ որ ամէն կողմ իր դատին եւ էութեան պաշտպանը դառնայ, ինչ որ արդէն տեղի կ'ունենայ, թէկուզ մարդկային գոհերով, քանդումներով, ռմբակոծումներով ու շարունակական գրոհներով եւ արշաւանքներով:

Լիբանանի պարագան իւրայատուկ է, որովհետեւ լիբանանեան բանակը, հակառակ իր կորովի մարտունակութեան, դժբախտաբար, չունի այն ուժը, որով կրնայ պաշտպանել հայրենիքը, որովհետեւ, իսրայէլամէտ պետութիւններ, կը զլանան, այլեւ կը խուսափին Լիբանանը օժտելէ արդիական զէնքերով:

Այս էր պատճառը, որ ատենին կազմաւորուած լիբանանեան դիմադրական շարժումը, ինքնապաշտպանութեան ու հակադարձութեան իրաւունքը պահելով իրեն, հետզհետէ զօրացաւ եւ աշխուժացաւ, իսկ յետագային, երբ կարելիութիւններ ստեղծուեցան, նորագոյն զէնքեր ձեռք ձգելու, դարձաւ ազդեցիկ ուժ մը, առանց հակադրուելու լիբանանեան պետութեան գերիշխանութեան, ոչ ալ շրջանցելու անոր հեղինակութիւնը:

Եւ ասիկա, պարզ այն պատճառով, որ հարաւը պաշտպանելու օրինական կամ պաշտօնական կողմերը ի վիճակի չեղան լիօրէն պաշտպանելու տուեալ տարածքները եւ անոնց բնակչութիւնը:

Հետեւաբար, երբ ոմանք, քիչ մը տհասօրէն, քիչ մըն ալ քաղաքականօրէն կը պահանջեն այդ զէնքերը վար դրուին ու վստահիլ միայն բանակին, նման կեցուածք մը, առնուա՛զն, հակուրութիւն է, չտեսնելու ու չհասկնալու այն ցցուն իրավիճակը, որ կը պատէ խօսուն կացութիւնը, որուն համար, պէտք չէ շփոթել լիբանանցիներու կարելոք մէկ մասին ապահովութիւնը երաշխաւորելու ճիգերը, ուրիշներու տխեղծ քաղաքականութեամբ, որովհետեւ այլընտրանք չկայ, չմնա՛ց, գոյութիւն պահելու կամ պաշտպանուելու, բացի այն միջոցառումներէն, որոնք այսօր կը կիրարկուին հոն կամ այլուր:

Դէպքերու այս լոյսին տակ, կը ստիպուիմ վերլիշելու կամ անդրադառնալու մեր տխուր պատմութեան եւ մեր ժողովուրդին օրհասութեան, որոնք գալարուեցան, յօշոտուեցան,



բռնաբարուեցան, անճիտուեցան, տարագրուեցան ու հալածուեցան Օսմանեան Կայսրութեան դժնդակ տարիներուն:

Ո՞ր քաղաքակիրթ պետութիւնը, մարդասիրական վարչակարգը, արդարադատական կազմակերպութիւնը կամ միջազգային կառոյցը, կողմ եղաւ, զօրավիզ կանգնեցաւ ու պաշտպան կեցաւ, անտէր-անտիրական հայ ժողովուրդին:

Ո՛Չ ՈՔ ԵՒ Ո՛Չ ՄԷՎ ԿՈՂՄ:

Հոս ալ այլընտրանք չկար, բացի զինուելէ, կամ «միայն զենքով փրկութիւն կայ», գոռալէն, դիմելով ազատագրական պայքարներու, յեղափոխական գործողութիւններու, ինքնապաշտպանական փորձութիւններու, հակասուլթանիզմ քարոզչութիւններու:

Արդի՞նք. ի՞նչ կրնար ըլլալ, բացի նոր ողբերգութիւններէ, ահաւոր նախճիրներէ, հաւաքական եղեոնագործութիւններէ, տեղահանութիւններէ ու համազգային կոտորածներէ, որովհետեւ հայ ժողովուրդը զինուած չէր (խօսքը չի վերաբերիր պարզ հրացաններու ու հնատիպներու գործածութեան), ի դէմս թրքական հզօր զինուժին ու մատակարարուած արդիական տարբերակներուն, ինչպէս օրինակ, Գերմանիոյ տրամադրած թնդանօթները, որոնցմով ոչ միայն գիւղերն ու քաղաքները կը ոմբակոծուէին, այլեւ՝ լեռները, ուր ապաստան գտած էր անզէն կամ իր զինապահեստը սպառած ժողովուրդը:

Վստահ պէտք է ըլլալ, որ հայ երիտասարդութիւնը մարտական ու ֆետայական էր եւ եթէ ունենար իր զինամթերքը, միշտ վերանորոգուելու պայմաններով, նաեւ արտաքին պետութիւններէն նուագագոյն զօրակցութիւնն ու օժանդակութիւնը, արդիւնքը պիտի ըլլար խիստ տարբեր, ինչ որ, թէ մէկ, թէ միւս պարագաներուն բացակայեցան եւ արդիւնքը...

Ցեղասպանութիւնն էր, իր ամբողջական ծանրոյթով ու կշռոյթով:

Եզրակացութիւնը մեր այս դիտարկումներուն այն է, որ՝ ե՛ւ Պաղեստինեան ե՛ւ Լիբանանեան գործողութիւնները, որոնք տեղի կ'ունենան, պարզ տրամաբանութեամբ, անբնական կամ արտառոց չեն, այնքան ատեն որ՝ ինքնութեան, արժանապատուութեան ու ժառանգութեան պահպանումներ են, երբ միակ ընտրական ուղիները ատոնք են, առ ի չզոյէ այլ կարելիութիւններու ու նեցուկներու:

ՄԵՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՎ ՈՒ ԴԱՏՈՒՄՆԵՐՈՎ շարքէն:

(Պէրոյթ)

ՄԵԶԻ ԱՆԻՄԱՍՏ ՄԱՀԵՐ ՊԷՏՔ ՉԵՆ

Լիւսի Տօքսմէճեան, Երեւան, 01 հոկտեմբեր 2024, ԳԵՂԱՐԴ



Հայաստանեան լրատուական կայքերը, բացի քաղաքական լուրերէ, միշտ կը հաղորդեն երկու ցաւալի իրադարձութիւններու մասին, որոնք կը պատահին գրեթէ ամէնօրեայ դրութեամբ: Թերթելով ընկերային ցանցերու լրատուական էջերը, չ'անցնիր օր որ չհանդիպինք երկու տեսակի մահուան դէպքերու, որոնք ոչ միայն անիմաստ են, ոչ միայն «ինքնասպանութիւն» կարելի է համարել

ընդամենը երեք միլիոն բնակչութիւն ունեցող երկրի մը համար, այլ նաեւ կը յուշեն ընկերա-հոգեբանական շատ լուրջ խնդիրներու մասին:



Այդ անիմաստ մահերու երկու փաստերէն մէկը ինքնաշարժի արկածներն են՝ շատ մտահոգիչ յաճախականութեամբ:

Ամէն օր քանի մը հոգիի կեանքը խլող արկածներու դրդապատճառներուն մասին եթէ խորհրդածենք, հոն կը գտնենք մանաւանդ ենթակայական գործօններ: Պահ մը մէկ կողմ դնելով անբարեկարգ ճանապարհներու եւ լուսատրութեան բացակայութեան կամ անբաւարարութեան հաւանականութիւնները, արկածներուն մէկ մասը տեղի կ'ունենայ որովհետեւ վարորդը ալքոհոլի կամ թմրանիւթի ազդեցութեան տակ է, անչափահաս է եւ/կամ առանց վարորդական իրաւունքի վկայականի: Կայ մեքենան արագ վարելու, ուրիշ վարորդներու հետ մրցելու պարագան, կայ նաեւ անվտանգութեան գոտին անտեսելու խնդիրը: Այս վերջինիս պահով կ'ուզեմ մեջբերել հետեւեալ օրինակը: Բազմաթիւ անձերու համար, որոնց շարքին նաեւ ես, ինքնաշարժին ապահովութեան գոտին կապելը անհրաժեշտութիւն է: Անգամ մը երբ Երեւանի մէջ թաքսիի հագիւ նստած կապեցի գոտին, վարորդը անմիջապէս ըսաւ. «Հաստատ սփիւռքից եք»: Ինչո՞ւ, այդ «վարժութիւնը» միայն դրսեցիներո՞ւն մօտ կայ: Հակառակ թաքսի ծառայութեան բջիջային յաւելումին յիշեցումներուն՝ «ամրագոտիները կապել նոյնիսկ ետեւի նստարանին նստելու պարագային», այդ յորդորը գրեթէ բոլորովին անտեսուած է:

Ինչպէս արաբական ասացումը կ'ընէ՝ պատճառները այլազան են, բայց արդիւնքը մէկն է: Ընթացիկ հասարակական դէպքերու յարաճուն երեւոյթը սերտելով, շատ հաւանաբար, խնդիրը պիտի տեսնենք անհատական կարծրատիպերու, անգիտակցութեան եւ անփութութեան տիրոյթին մէջ: Շատ տղամարդիկ համոզուած են, որ տղամարդը բնածին ձիւք ունի մեքենան արագ վարելու, որ կիներ միշտ ձախող վարորդ է եւ տղամարդու մեքենային արագ ընթացքը դանդաղեցնող գործօն: Ուրիշներ չեն գիտակցիր որ ինքնաշարժ վարելն ունի պարտադիր յարգելու օրէնքներ կամ անփոյթ են թէ՛ իրենց եւ թէ՛ դիմացինի կեանքին նկատմամբ: Սա խնդիր մըն է, որ, հայաստանեան հասարակութեան հաւաքական մտածելակերպին մէջ բոյն դրած շատ այլ հարցերու նման, կը կարօտի զգաստութեան եւ ընկերա-հոգեբանական առումով զգօնութեան ու գիտակցութեան:

Անիմաստ մահերու երկրորդ փաստը շատ աւելի վտանգաւոր է: Գրեթէ ամէն օր տեղի կ'ունենան վեճեր, որոնք կ'աւարտին դանակահարութեամբ կամ սպանութեամբ: Այս երեւոյթը կ'արձանագրուի ոչ միայն անչափահասներու, խոռվութիւն կամ անհամաձայնութիւն ունեցած մարդոց կամ նոյնիսկ ընկերներու միջեւ, այլ նաեւ հարազատներու շրջանակին մէջ, ընդ որում՝ տուժողը կամ սպաննուածը երբեմն կ'ըլլայ տարիքոտ մայր/հայր, զոքանչ/աներ կամ հարազատ/ազգական: Յաւալի եւ ամօթալի երեւոյթ մը, որ յարիւր չէ մարդկային որեւէ հանրոյթի, ուր մնաց ինքզինք քաղաքակիրթ համարող հայ ժողովուրդին:

Ուրիշ ազգեր ու ժողովուրդներ ալ զերծ չեն այսպիսի ոճրագործական պահուածքէ, բայց հազարամեայ քաղաքակրթութիւն ունեցող, մշակոյթի եւ արուեստի մէջ առաջատար, Աստուծոյ դատաստանին հաւատացող ու հաւատացեալ ժողովուրդի մը համար բռնութիւնը եւ հարցերը արիւնահեղութեամբ լուծելը պէտք չէ ըլլան «պատիժը» կամ անհամաձայնութեան ելքը: Եւ աւելին... այդ լուծումին հասնիլ որեւէ «հնարաւոր» միջոցով, նոյնիսկ եթէ հարկ ըլլայ դիմել «խոհանոցի տապակ»ի օգնութեան: Ինչքա՞ն նեղացուցիչ է լրահոսին մէջ յաճախ կարդալ այսպիսի դէպքերու մասին կամ, որ փրկարար ծառայութեան



աշխատակիցները տարատեսակ վայրերու մէջ յաճախ կը յայտնաբերեն մարդկային դիակներ...

Անօրեայ բնոյթ ստացած այս այպանելի երեւոյթը կ'արտացոլուի նաեւ տեղական հեռուստաշարքերու բեմագրերուն մէջ. բռնութիւնը կը ներկայացուի որպէս սովորական երեւոյթ, ինչ որ սխալ օրինակ կը ծառայէ դիտողներուն, մանաւանդ նոր սերունդին: Իսկապէ՞ս կ'ուզենք տեսնել սերունդներ, որոնք, նմանակելով իրենց ծնողները, անհամաձայնութեան ժամանակ սկսին «գլուխդ կը ջարդեմ» գոռալով ու աւարտեն «ես քեզ կը սասկացնեմ»ով, գուցէ քանի մը ակնթարթ յետոյ իսկապէս ջարդելով ու սպաննելով:

Անպայման պէտք է աշխատիլ բարեփոխել այս հիմնովին սխալ «դաստիարակութիւն»ը: Մենք, որպէս հայ, չենք առաջնորդուիր «անտառի օրէնքով», մինչ ազգովին յաւակնութիւն ունինք «մօտիկանալու» եւրոպական արժեհամակարգին, ուր, հակառակ մեզի համար խորթ կամ թերի բազմաթիւ յատկանիշերու առկայութեան, կան մարդկային արժեքները յարգող տարրական օրէնքներ ու իրաւունքներ:

Ահաւասիկ երկու իրավիճակներ, որոնք, կրնանք ըսել, արհեստածին մահերու պատճառ կը դառնան ժողովրդագրական տխուր պատկեր ունեցող մեր ազգի հայրենաբնակ հատուածին մէջ: Այլ ազգերու նման չենք, մենք բազմատասնեակ կամ բազմահարիւր միլիոննոց բնակչութիւն չունինք, որ համեմատաբար աննշան թուին այս կորուստները: Մեր ամէն մէկ շնչաւոր էակը ունի իր կշիռն ու դերը, ան կեանքին մէջ դեռ շատ բան ունի կատարելու թէ՛ որպէս անհատ, թէ՛ որպէս քաղաքացի:

Հայրենի հողին համար ինկած հերոսներով «հարստացած» մեր գերեզմանոցները երբեք կարիք չունին մահուան այսպիսի դէպքերու պատճառով ընդարձակուելու: Դեռ աւելին. փափաքելի է ունենալ միայն ողջ հերոսներ, փոխան նահատակուած ու հող գրկած, հող դարձած հերոսներու: Իւրաքանչիւր անցնող օրուան համար, երբ հայկական սահմանին յարաբերական հանդարտութիւն է, երբ փառք կու տանք Աստուծոյ, որ չենք կարդար զոհերու եւ նահատակուած զինուորներու մասին, ապա ինչպէ՞ս ընդունիլ այսպիսի «էջ նահատակ»ներու փաստը: Մեզի պէտք չեն անիմաստ մահեր եւ ի գուր թափուած արիւն:

ԻՍՐԱՅԷԼԻ ԴԵՐԻՆ ՏԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐՑԱԽԻ ԱՆԿՄԱՆ ՄԷՋ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ

Ազրպէյճան ինը ամիս պաշարման տակ պահելէ ետք Արցախը, 2023-ի Սեպտեմբեր 19-էն շարունակական յարձակում գործեց զուտ հայկական Լեռնային Ղարաբաղի վրայ, զայն առնելով իր գրաւման տակ ու վերջ դնելով անոր աւելի քան հազարաւոր տարիներու հայկական գոյութեան եւ երեսուն տարուան անկախութեան: Ազրպէյճանի այս «յաղթական» արարքին վրայ կեդրոնացած էր աշխարհի զանազան երկիրներու ուշադրութիւնը, սակայն մասնաշատուկ կերպով կ'ընդգծուէր Իսրայէլի ներգրաւումը Ազրպէյճանին յառաջացած զենքեր հայթայթելու ու ազերիները հայոց դէմ յարձակման առաջնորդի դեր ստանձնելու

հարցերուն մէջ՝ փոխան անվճար քարիւղի եւ կազի, որոնք Իսրայէլի ուժանիւթի պէտքերու մեծ մասը կը գոհացնեն:



Արցախի գրաւումը Ազրպէյճանի կողմէ տեղի կ'ունենար ողջ աշխարհի անտարբեր աչքերուն առջեւ, «Ժողովուրդներու ինքնուրոյն ճակատագրի ազատ ընտրութիւն», «մարդու իրաւունքներ», «ազատութիւն եւ ժողովրդավարութիւն» (freedom and democracy) եւ այլ չիրականացուող լոզունգներու անուշաբոյր մշուշին մէջ: Գրաւումէն առաջ՝ 2022-ի Դեկտեմբերին, Ազրպէյճան Արցախը Հայաստանի միացնող միակ ճանապարհը՝ Բերձորի, ներկայիս Լաչինի մէջ կը փակէր

եւ մօտաւորապէս ինը ամիս շրջափակելով Արցախը, գետին կը պատրաստէր իր գրաւման: Այս ընթացքին Ազրպէյճան ռազմականօրէն գերակշիռ էր Հայաստանէն, որովհետեւ վերջինս պարտութիւն կրած էր 2020-ի պատերազմին:

Հայաստան-Ազրպէյճան հակամարտութեան առաջին օրէն սկսեալ, Իսրայէլ միլիոնաւոր տոլարներ արժողութեամբ զէնք վաճառած է Ազրպէյճանի: Յուցակագրութեան մը համաձայն 2015-2019 թուականներուն Ազրպէյճանի զէնքերուն 60 առ հարիւրի աղբիւրը Իսրայէլ եղած է՝ ըստ «Պատերազմի եւ Խաղաղութեան Հիմնարկի Տեղեկագրութիւն» հաստատութեան: Իսրայէլի կողմէ Ազրպէյճանի յանձնուած զէնքերուն ամենէն կարեւորներն են անօդաչու սարքերը, հիմնականօրէն լրտեսականներն ու մարտավարականները (tactical): Այս անօդաչու սարքերուն ռազմագիտական կարեւորութեան պատճառով, Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը սերտ գործակցութիւն հաստատած է իսրայէլեան «Օդանաւորութեան Պաշտպանողական Համակարգ»ի ընկերութեան հետ եւ այս սարքերը սկսած են Պաքուի մէջ արտադրուիլ:

Բացի ասկէ իսրայէլեան «Էլթա Համակարգեր» ընկերութիւնը Ազրպէյճանի հայթայթած է Արցախի թուայնացած ամբողջական քարտէսները, պատերազմական դիրութիւններ ընձեռնելով եւ Ազրպէյճանը Հայաստանի բաղդատմամբ արհեստագիտական գետնի վրայ վերածելով գերադաս ուժի: Նոյն 2020-ի պատերազմի ընթացքի տեւողութեան իսրայէլեան հարիւր բեռնատար օդանաւեր յարատեւ զինամթերք եւ ռազմական յառաջացած գործիքներ փոխադրած են Իսրայէլէն Պաքու, անցնելով թրքական եւ վրացական օդային սահմաններէն: Ի՞նչ է Իսրայէլի շահը այս բոլորին մէջ:

Առաջին հերթին ան հակա-իրանեան առաջնակարգ զինուորական եւ լրտեսական խարխիսի հաստատած կ'ըլլայ Ազրպէյճանի մէջ՝ Իրանի աշխարհագրական սահմանին վրայ: Թէ՛ Իսրայէլ եւ թէ՛ Ազրպէյճան կը շահին Իրանը սեղմելով: Իսրայէլ շահագրգռուած է Իրանի հիւլէական ոյժի սահմանափակման հարցով, ինչպէս նաեւ իր ահաբեկիչ նկատած թշնամի կազմակերպութիւններուն Իրանի հայթայթած գործնական նեցակցութեան նուազեցման խնդիրով: Իսրայէլ իր ապահովութիւնը առաջնակարգ հարց կը նկատէ եւ Իրանը սեղմելով կը ձգտի իր անվտանգութեան ամրացման:

Ճիշդ է որ Ազրպէյճանի եւ Իրանի ժողովուրդները նոյն իսլամական շիի համայնքին կը պատկանին, սակայն Ազրպէյճան բաւական աշխարհականացած է եւ իսլամ երկիրներու մէջ այն քիչերէն է (թերեւս ալ միակը)՝ որուն ժողովուրդը իսլամ կրօնքի պաշտամունքի պարտականութիւնները գրեթէ չի կատարեր: Ազրպէյճանական իշխանութիւնները ունին այն մտավախութիւնը, թէ Իրան իսլամական գործօնը օգտագործելով իր ազդեցութիւնը կը սփռէ Պաքուի վրայ: Անոնք ակնատես եղած են Իրանի ազդեցութեան տակ «Հիւսէյնիյուն»



կոչուած զինեալ խմբաւորման գործունէութեան, որ կը ձգտի Ազրպէյճանը դարձնել Իրանի ենթակայ իսլամական պետութիւն մը (Համացանցային Կայքէջ.- <https://iari.site/.../beyond-borders-the-israel.../>):

Բացի վերոյիշեալ ազդակներէ, Իրանի Խորհրդարանի կարգ մը երեսփոխաններ Իրան-Ազրպէյճան սահմանգիծին օրինականութեան շուրջ կասկածներ յայտնած են եւ կ'ըսեն թէ ազերի քաղաքացիներ, մանաւանդ Նախիջեւանի մէջ կը նախընտրեն միանալ իրանեան մայր հայրենիքին ու ձերբազատուիլ Կովկասի մէջ թրքական եւ իսրայէլեան ազդեցութիւններէն:

Իրանի Իսլամական Պետութիւնը Ազրպէյճանի հետ զանազան տարակարծութիւններ ունի, որոնցմէ Ազրպէյճանը Նախիջեւանին (փաստօրէն Թուրքիոյ) միացնելիք «Զանգեզուրի Անցքը», որուն գործադրութիւնը Իրան կը նկատէ իբրեւ սահմաններու փոփոխութիւն իր եւ Հայաստանի միջեւ, եւ որ Իրան իբր կարելոր դաշնակից կը սեպէ:

Պաքուի եւ Թել Աւիւի համագործակցութիւնը կ'ընդգրկէ ելեկտրական լրտեսական կայարաններու հաստատումը Ազրպէյճանի հարաւային սահմաններուն մէջ, Իրանը հակակշռի տակ առնելու եւ զայն սեղմելու նպատակով: Աւելին՝ Պաքու Իսրայէլի լրի իրաւասութիւն կուտայ հաստատուած այս կայարաններէն Իրանի դէմ գործողութիւններ կատարելու, ինչպէս նաեւ իր օդակայանները Իսրայէլեան ուժերու տրամադրութեան տակ կը դնէ՝ իրանեան հիւլէական կայաններուն վրայ յարձակում գործելու նպատակով:

Ազրպէյճանի եւ Իսրայէլի միջեւ համագործակցութիւնը չի սահմանափակուիր զինուորական ոլորտով, այլ կ'ընդլայնի ընդգրկելով տնտեսական, գիտական, մշակութային եւ զբօսաշրջիկային ոլորտները:

Իսրայէլի տնտեսութիւնը մեծապէս կախեալ է Ազրպէյճանի քարիւղի ներածումէն: 2021-ին Իսրայէլի հում քարիւղի մատակարարումը Ազրպէյճանէն կը հասնէր 61 առ հարիւրի, ըստ «Գործողութեան Գնահատման Հսկողութիւն» («Operational Evaluation Command»- O. E. C.) ընկերութեան տուեալներուն:

Իրան լրի գիտակից ըլլալով Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերու տեղակայման եղելութեան, վերջերս պաղեստինեան «Համաս» կազմակերպութեան ղեկավար Իսմայիլ Հանիյէի Իսրայէլի կողմէ սպանութենէն քանի մը օր ետք, իբրեւ հաւանական փոխադարձութիւն՝ Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան խարխախները հարուածելու հպանցիկ ակնարկով մը մատնացոյց ըրաւ:

Կովկասի մէջ իր բոլոր գործունէութիւնը արդարացնող պատրուակ մը կը ներկայացնէ Իսրայէլ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի: Իբրեւ թէ ան հետամուտ է փան-թուրքիզմի կամ թուրանիզմի գործադրութեան իրականացման: Սակայն Իսրայէլ այս ծրագիրը կը ձգտի իրականացնել ոչ թէ թրքացեղ պետութիւններու ծրագրին համաձայն, այլ ինքնուրոյն յետին նպատակի վրայ հիմնուած շահադիտական եւ ոճիրներով լեցուն գործունէութեամբ:

Սակայն եւ այնպէս, ցարդ Ազրպէյճանի ու Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերը անհպելի մնացին, որովհետեւ Արեւմուտքի կողմէ Իրան աշխարհագրականօրէն եւ զինուորապէս պաշարուած վիճակի մէջ է: Ազրպէյճանի եւ Վրաստանի մէջ իսրայէլեան ուժերու խարխախներուն դէմ որեւէ իրանեան գործողութիւն հաւանական է որ պիտի հակադարձուի Փաքիստանեան, Իրաքեան, Յորդանանեան կամ Սէուտական Արաբական եւ նոյնիսկ Թրքական հակայարձակումով Իրանի վրայ: Շատ հաւանական է որ Իրանի կողմէ որեւէ միջամտութիւն՝ արգիլելու համար Ազրպէյճանի յարձակումը հարաւային Հայաստանի մէջէն անցք ապահովելու փորձի մը դէմ, պիտի հակադարձուի վերոյիշեալ երկիրներու կողմէ: Մոյն պետութիւններու տոն կը կանգնի Իսրայէլի պետութեան արգանդը՝ Անկլօ-Սիոնիզմը:

Փաստօրէն Իսրայէլի օգնութիւնը Ազրպէյճանի ոչ միայն Հայկական Արցախի կորուստին առաջնորդէց, այլ նաեւ հազարաւոր հայ երիտասարդներու արիւնը թափելով՝ Իսրայէլ



գուարճացաւ իր սեփական շահերը ապահովելով Ազրպէյճանէն: Հայ երիտասարդներու արեան պարտքը կ'իյնայ Իսրայէլի վզին վրայ: Սակայն եւ այնպէս, ինչպէս առածը կ'ըսէ. «Ինչ որ ցանես, զայն կը հնձես»: Այժմ Կազայի եւ Հարաւային Լիբանանի մէջ Իսրայէլ իր ճիտին պարտքը մասամբ մը կը վճարէ հարիւրաւոր զինուորներու սպանութեամբ եւ բազմահազար վիրաւորներով, բացի նիւթական եւ բարոյական հսկայական վնասներէ, որոնցմէ է աննախընթաց սարսափը ամբողջ Իսրայէլի: Ամբողջ իսրայէլեան բանակը ահագանգի մէջ է, եւ վերջերս Իրանի սպառնալիքով՝ հարուածելու իսրայէլեան ուժերը Վրաստանի եւ Ազրպէյճանի մէջ, կը մղէ Իսրայէլը որ լրջօրէն մտածէ իր այդ ուժերը յետ քաշելու մասին: Կազայի եւ Հարաւային Լիբանանի ուժեղ դիմադրութիւնները շոնդալից ապտակներ են Իսրայէլին: Այս պատճառաւ Իսրայէլ ներկայիս Կովկասի մէջ կը տատամսի Ազրպէյճանի միջոցով որբւէ հակա-հայկական քայլ առնելէ եւ նոյնիսկ կը մտածէ այդտեղի իր ուժերը տուն կանչել, դուրս գալու համար իր նեղի ու սարսափի մատնուած վիճակէն:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԱՆԴՐԱԴԱՐԶ

**«Գրելը պիտի լինի խոստովանութիւն,
իսկ խոստովանութիւնը պահանջում է
գերագոյն ազնութիւն»:
Նիկոլ Աղբալեան**



Այս տարի մեր այցելութիւնը դէպի ակետեաց երկիր կապուած էր երկու հանգամանքների հետ՝ նախ իմ տասներորդ գրքոյկի հրատարակումը՝ «ԾԻՐ ԿԱԹԻՆ» խորագրով (Յարդագողի ճամփան- Voie Lactée), որին անդրադառնալը անհրաժեշտ չէմ համարում, քանզի այն գուտ անհատական բնոյթի է եւ երկրորդ ՀՀ սփիւռքի նախարարութեան հրաւերով համաշխարհային հայկական գագաթնաժողովին մասնակցելը, որ իմ գնահատումով բարձր որակով կազմակերպուած միջոցառում էր մի թերութեամբ, որ ելոյթների ճնշող մեծամասնութիւնը լինում էին անգլերէնով, երբեմն ռուսերէնով, իսկ հայերէնը շատ փոքր տեղ ունէր, բայց լայն հնարաւորութիւն կար ազատ հաղորդակցուել սփիւռքից եկած թէ բնիկ հայրենակիցների հետ փոքր խմբերով:

Զրոյցների հիմնական թեման, երբ գրեթէ բոլորը համաձայն էին, այն էր, որ սփիւռքում թէ մայր հողի վրայ տիրում է մեր հասարակութեան ներքին ամօթալի յարաբերութիւն եւ երեւոյթների իրար հակասող մեկնաբանութիւնները՝ բոլոր տեսակի անյաջողութիւնների մեղքը մէկը միւսի վրայ բարդելով, յաճախ անհիմն եւ տխմար, կեղծ եւ շինծու փաստարկումներով:

Մտերմիկ զրոյցների ընթացքին պարզ դարձաւ, որ ոչ-ընդդիմադիր հոսանքի պատկանող հայորդիները բացառապէս անտրամաբանական են համարում վարչապետի հրաժարականը պահանջող քայլերը՝ փողոց փակելով կամ տարբեր տեսակի ելոյթներով, որոնց միանում են նաեւ բարձրաստիճան հոգեւորականներ իրենց վերադասի օրհնութեամբ: Շատերը չգիտեն, որ իշխանափոխութեան միակ ճամբան օրինական ընտրութիւններն են եւ ոչ խամաճիկ լարախաղաց աճապարարութիւնները: Բացակայ է



քաղաքական գաղափարախօսութիւնը պետականութեան եւ երկրի բարգաւաճման առումով, փոխարեւը տիրակալ է իշխանութիւն գրաւելու մոլուցքը՝ քանդէնք եւ տիրէնք սկզբունքով:

Գաղտնիք չէ, որ Արցախի ողբերգական կորուստը ծանր բեռ է համազգային խղճի եւ բարոյականութեան վրայ, եւ բոլորն են ողբում, բայց անյայտ է, թէ ո՞ր տրամաբանութեամբ եւ ի՞նչ փաստերի վրայ հիմնուելով ընդդիմադիր ուժերը վայնասուն է հնչեցնում, թէ «Նիկոլը ծախեց», երբ Արցախի լուծարման պայմանագիր ստորագրողը եղել է Արցախի գործող նախագահը: Հեռու եմ վարչապետի իրաւապաշտպան լինելուց, բայց փաստերն ու տրամաբանութիւնը անհերքելի են: Ումանց համար այն դարձել է զէնք պետութեան դէմ դաւադրութիւններ, մինչեւ իսկ մահափորձ ծաւալելու՝ իշխանափոխութեան հասնելու մոլուցքով:

Կայ աւելին. լուսահոգի մայրս պիտի ասէր «բերարը»: Խղճուկ մի կղեր ամիսներ ի վեր փողոց է իջել «**Արցախի հարցը փակուած չէ**» կարգախօսով՝ կարծելով, թէ մեծն Ալեքսանդրի կամ Հաննիբալի անթիւ ջոկատներն են իր տրամադրութեան ներքոյ եւ քառորդ ժամ է տալիս վարչապետին իր աթոռից հրաժարուելու, միաժամանակ պահանջելով, որ ներկայ իշխանութիւնը Արցախի հիմնահարցը բանակցային օրակարգի մաս կազմի: «Խելքի աշեցէք» պիտի ասէր գուսանը: Ջարմանալի չէ, որ նոյն խմբից աւելի համարձակները եւ հեռատես փրկիչները անդադար յիշեցնում են Վիլսոնի ցուցադրած քարտէզի այժմեական լինելը եւ պատրաստ են այն իրականացնել: Խնդա՛նք, թէ՛ լանք:

Աւելին ծանրանալ կեղծ ու պիղծ կղեր Բագրատի քայլերին ու խօսքերին՝ անհրաժեշտ չէ, քանզի արժանի չէ, միայն մի բան բացայայտ է, որ իր սեփական կարծիքն ու նպատակը չունենալով, ինչ որ տեղից եկած հաւանաբար վճարուած կարգադրութեան է ենթարկուում եւ այդ նիւթով մամուլում շատ բան է ասուած:

Ջարմանալի մինչեւ իսկ տարօրինակ է Արցախի նախկին ղեկավարների վերաբերմունքն ու դիրքորոշումը ՀՀ իշխանութեան նկատմամբ: Տարիներ շարունակ լինելով ընդդիմադիր կուսակցութեան ճնշող ազդեցութեան ներքոյ՝ միշտ ցանկացել են ինքնիշխան լինել, ունենալ նախագահ եւ նախարարներ, որեւէ քայլ չանելով ՀՀ մարզերին միանալու, Արցախը լուծարեցին բնակչութիւնից դատարկելով, այժմ Երեւանում փառաւոր հաստատուած վարչապետի հրաժարականի հետ պահանջում են փախստականների վերադարձ, բայց ինչ միջոցներով եւ ճանապարհով իրենք եւս չգիտեն:

Ողբալի է, որ Բագրատին նախորդող վարչապետի ենթադրեալ թեկնածու Իշխան Սաղաթելեանը ԱՄՆ կատարած իր ճամփորդութեան ընթացքին յայտարարեց, թէ «ՀՀ ամենամեծ եւ վտանգաւոր թշնամին Փաշինեանն է», իսկ այսօր նոյն տխմարը գոռում է թէ Արցախը յանձնուել է Փաշինեան-Ալիեւ-Էրդողան փոխադարձ համագործակցութեամբ:

Անտարակոյս այս եւ նման յայտարարութիւնները այլ նպատակ չունեն, քան ՀՀ ներքաշել նորանոր բախումների, իրանց համար ճամփայ բացելու դէպի իշխանութիւն:

Նման ընդդիմութիւն ունենալը չարիք է անէծք է որեւէ երկրի համար:

29/9/2

Ռուբէն Յովակիմեան

ԱՆՀԱՆԳԻՍ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԸ

Յակոբ Միքայելեան

04/10/2024



- Տարիէ մը ի վեր իսրայէլական բանակի պաղեստինեան Կազա երիզին վրայ շղթայազերծած պատերազմը կարծես իր պլանները այս անգամ ուղղեց դէպի հիւսիս, Լիբանանի հարաւային շրջանը, թիրախաւորելով իրանեան հովանիին տակ գտնուող, Շիա դաւանող «Հրզպալլա» կոչուած կուսակցութիւնը, բնակավայրերը, բանակն ու անոր

ղեկավարները: Որովհետեւ, որպէս «Համաս» կազմակերպութեան զինակից, «Հրզպալլան» սկսած էր հրթիռակոծել իսրայէլեան հիւսիսային շրջանները կուսակցութեան մօտ ամբարուած բազմահազար հրթիռներով, որոնց մեծամասնութիւնը տեղ չէին հասներ, իսկ հասածներն ալ գրեթէ վնաս չէին պատճառեր: «Հրզպալլան» իր կազմակերպուած օրէն բացէ ի բաց կը յայտարարէր, որ պիտի հարուածէ Իսրայէլը, մինչեւ որ պաղեստինցիք հասնին անկախ պետութիւն մը ունենալու իրենց երազին:

Բախումներ կը պատահէին, սակայն այս անգամուան պատերազմը յստակ կերպով «Հրզպալլան» հիմնայատակ կործանելու կը միտէր, որուն համար Իսրայէլը արդիական այնպիսի թեքնոլոճի մը կիրարկեց, որ պատերազմէ աւելի «մարդոտութիւն» կարելի է անուանել, երբ մէկ առ մէկ թիրախաւորեց եւ սպանեց «Հրզպալլայի» ղեկավարները, մինչեւ հասնելով անոր գլխաւոր ղեկավարին՝ Մայէտ Հասան Նասրալլային: Բազմայարկ շէնքի մը 30 մէթր խորութեամբ ստորերկրեայ յարկին վրայ կուսակցութեան վերին մարմնի ժողովի մը ընթացքին, ուր ներկայ էր նաեւ Մայէտը, մէկ թոննոց հրթիռ մը կ'արձակէ իսրայէլեան բանակը, որ տուեալ շէնքին վերէն վար կը մխրճուի ու ժողովավայր հասնելէ ետք կը պայթի ու կը սպաննէ բոլոր ներկաները:

Իսրայէլի արդիական թեքնոլոճիին մէկ կարեւոր փաստն էր նաեւ յարձակումը կանխող «Հրզպալլայի» անդամներուն գրպանի «Փէյճըր» կոչուած հեռախօսներուն պայթիլը, մարդոց ձեռքերուն մէջ, ուր տասնեակներ մահացան եւ հարիւրաւորներ վիրաւորուեցան եւ կուրացան:

Երբ մարդ գիտէ, որ դիմացի թշնամին բազմապատիկ աւելի ուժեղ է, քան ինք, կը դիմէ՞ արկածախնդրութեան եւ նախաշարժակ ըլլալով կը հարուածէ՞ թշնամին, գիտնալով որ իր ըրածին փոխարէն տասնապատիկ վնաս պիտի կրէ: Իսկ եթէ չի գիտեր իր թշնամիին կարողութիւնը, այդ պարագային արդէն յանցանքին մեծ բաժինը իրենը կ'ըլլայ: Ուրեմն ի նչ ընելու է, վազ անցնիլ ճակատելէ եւ յանձնուիլ, թէ՞ թշնամանքը մեղմացնել ու բարեկամանալ փորձել, կամ սպասելու է յարմար առիթի, երբ որոշ յոյս մը զինք կը մղէ վտանգը աչքի առնելու յանուն արժանապատուութեան:

Օրինակներով խօսելու համար աչքի առջեւ ունենալու է վերջին դէպքերը, յատկապէս Իսրայէլ-Պաղեստին-Սուրիա-Իրան-Եմէն-Հրզպալլա-Լիբանան հակամարտութիւնները, որոնք արդէն տարիէ մը ի վեր տեղի կ'ունենան:



Այս եօթը մասնակիցներէն վեցը Իսրայէլի դէմ են ու եթէ ոչ ուղղակի, գոնէ Իսրայէլի գլխաւոր թշնամի Համասին կը զօրակցին: Միջին Արեւելքի ներկայի այս անհանգիստ վիճակին գլխաւոր դերակատարները եօթն են, մէկ կողմէ Իսրայէլ եւ միւս կողմէ Պաղեստին (Համաս) Սուրիա եւ իրանեան զինեալ կուտակումներ ի գէն «Հրգպալլային»: Լիբանանը եւ անշուշտ անոր հարաւի «Հրգպալլա» կազմակերպութիւնը, Եմէնը եւ հուրիները, որոնք սկսած են այդքան հեռուէն հրթիռ արձակել դէպի Թէլ Աւիւ: Բազմաձակատ պատերազմ մըն է, զոր Իսրայէլ ԱՄՆ-ի օգնութեամբ կը տանի գերակշիռ յաղթանակով:

«Համասը» Իսրայէլի նման զօրաւոր բանակ չունի, սակայն շատ զօրաւոր բարոյական ոյժ ունի եւ կը յենի Իրանի օժանդակութեանց վրայ: Սուրիան, ուր արդէն Իրանը տարիներէ ի վեր կը գործէ եւ Իսրայէլի քիթին տակ «Հրգպալլան» կը պահէ իր հսկողութեան տակ, յաճախ թիրախ կ'ըլլայ իսրայէլեան հրթիռակոծումներու, որոնց հետեւանքով Սուրիան ահագին վնասներ կը կրէ: «Հրգպալլան» առաջին օրէն կը սպառնայ Իսրայէլի գոյութեան եւ ատենը անգամ մը հրթիռ մը կ'արձակէ անոր ուղղութեամբ: Անշուշտ Լիբանանը ձեռնպահ է, չի ձակասիր Իսրայէլի դէմ, սակայն, այնքան ատեն որ «Հրգպալլան» իր հարան է, միշտ վտանգի տակ է, ինչպէս վերջերս Լիբանանի հարաւէն անցաւ Պէյրութի հարաւային շրջանը, որ դարձեալ «Հրգպալլայի» տարածք կը նկատուի: Տակաւին այդ շրջաններէն ալ անցաւ ու Պէյրութի կեդրոնը գտնուող շէնք մըն ալ հարուածեց՝ սպանելով պաղեստինցի դէկավար մը: Տակաւին կան Իրաքի մէջ գործող կազմակերպութիւն մը, որ ատենը անգամ մը հրթիռ մը կ'արձակէ դէպի Իսրայէլ: Յորդանանը չի մասնակցիր պատերազմին, սակայն անոր թագաւորին ՄԱԿ-ի մէջ արտասանած ճառին բառերը հրթիռներէ պակաս չէին:

Միով բանիւ, Իսրայէլ մինակը այս 6-7 ճակատներուն դէմ կը պայքարի եւ ամէն տեղ ալ մեծ յաջողութիւններ կ'արձանագրէ: Ատենն է կրկնելու հարցումս. երբ այդ ճակատները տկար են Իսրայէլի ոյժին հետ բաղդատած, ինչո՞ւ մեծ զոհեր տալով կը շարունակեն պայքարը: Ես կը կարծեմ, որ երկարատեւ պատերազմը նպաստաւոր չէ Իսրայէլին եւ հեռու չէ այն օրը, երբ Իսրայէլ-Պաղեստին երկու անկախ պետութիւններու գոյակցութիւնը կրնայ յաջող լուծում մը գտնել:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԱԶԳ շաբաթաթերթ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՇՈՒՆ

Աշո՛ւն, չես թողուր որ ես ծերանամ,
Դարձեալ դուն կու գաս վրձինով բոցէ,
Ոսկի, հուրհրան գոյներով ներկես
Ծառերը պէ՛ս-պէ՛ս, անտառը համակ...

Դարձեալ խենդ պարմանն իմ մէջ կ'արթնայ,
Մոռցած ժամանակ, տարիք, եղանակ,
Հեքիաթի ջահը կը վառէ սրտիս
Ու կ'որոնէ ա՛յն, զոր դեռ չգտաւ:

Միրտս դեռ փխրուն հիւսէ անուրջներ
Աստղերու շողքէն՝ երազներ վառման,
Հոգ չէ թէ խոցուած ըլլայ բիր անգամ



Եւ մոխիր քաղած անոնց շողերէն...

Աշո՛ւն, ի՞նչ գաղտնիք ունիս դուն թաքուն,

Որ ինձ հուրհրատես գոյներ պէսպիսուն,

Վառես սրտիս մէջ դողեր անանուն,

Քու ծառերուդ պէս սիւքով դողդոջուն:

Դուն հրաշք ես, աշո՛ւն, խորհուրդով խորին,

Ու մինչ թե՛րթ առ թե՛րթ ես կը դալկանամ,

Հոգիս կը քաղէ ոսկի ու կարմիր

Քու վերջալոյսէդ անչափ սիրավառ:

18/9/2021

.....

ԼՈՅՍԻ ՇՈՂԵՐ ՀԱՒԱՔԵՑԻ

Լոյսի շողեր հաւաքեցի

Կեանքիս հազար ճամբաներէն,

Որ շաղախեմ գորշին, մութին,

Երբ գիշեր էր խաւարահեւ...

Սիրոյ ճաճանչ ամբարեցի

Հոգոյս թաքուն ծալքերուն մէջ,

Որ ճառագէր սիրոյ շիթեր

Առօրեայի անսէր սրտին...

Եւ խորանս սուրբ հաւատքի

Պահպանեցի ահեղ տիղմէն,

Որպէս աղօթք մարդ էակին,

Աստուածատուր հոգոյն բիրեղ:

Ամէն անգամ որ չար հողմը

Սպառնաց խժռել ծառ ու ծաղիկ,

Ես շաղ տուի անձրեւումը

Բարուոյն լոյսին արեւածին:

Եւ այդ լոյսը շատցաւ, շատցաւ,



Պարագրկեց էութիւնս,
Հոգիէ-հոգի կապեց ծիածան,
Ճառագայթեց տիեզերքը:
8/8/2021

.....

ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻ,

Դուն ես ծնո՛ւնդն ու սնո՛ւնդը Հայոց ազգի,
Քու ընդերքէդ խորախորհուրդ եւ սրբագին
Հայուն ծինն է աշխարհ եկեր ու ծաղկեր է,
Հօրացեր քու աւիշով ու տոկացեր
Հողմերուն բիր, մրրիկներուն կորստաբեր...
Դուն ես տուեր ոգի՛ ամուր ու աներեր,
Կա՛մք աննկուն, եւ հոգիի լո՛յս անուրջներ,
Խի՛ղճ մը արթուն, մաքրաջինջ ու անապական,
Այլեւ թո՛ի՛ չք, ճախրա՛նք հոգուոյ վեհապլաց,
Որ սաւառնի բարձունքներուն լուսագագա՛թ,
Տատասկներէն ու խութերէն վեր խոյանայ
Ու չընկրկի անդունդն ի վար խաւարամած...
Լուսահամը իր շրթունքին միւռոնագօծ
Լոյս ստեղծէ հողիդ վրայ լուսագորով,
Բերք ու բարիք ու կոթողներ հոգեհմայ,
Առաքինի վարք ու բարքեր, կեանք մը արդար...
Եւ հողիդ հետ է նոյնացեր դար ու դարեր,
Ջայն կնքեր է Այբուբենովն իր հրաշագեղ,
Երգ ու տաղով Մեսրոպաշունչ, Մեսրոպահեւ...
Հողն ընծայեր է աղօ՛թք մը աշտարակուած,
Զերթ իր լեռներն են՝ Արարատ ու Արագած,
Աղօթքին մէջ շաղախելով հաւա՛տք անխախտ,



Մէ՛ր, յո՛յս ու լո՛յս, իր լուսապա՛շտ ոգին պայծառ...

Ու երբ ոսոխն է սպառնացեր իր սուրբ հողին,

Իր բորբ կուրծքով է դէմ դրեր միշտ քաջարի,

Կեա՛նքն է զոհեր, արի՛ւն տուեր որ ան մնայ

Եւ չդառնայ այլոց բաժին, չօտարանայ...

Զի առանց քեզ, հո՛ղ հայրենի, հայ չի մնար,

Կ'այլասերի հայու հոգին, լեզուն Հայկեան,

Ազգը դառնայ անդէմ զանգուած անդիմագիծ,

Փռչի ազգ մը ցրուած չորս կողմն ողջ աշխարհի:

18/10/2020

.....

ՀՈԳԻՈՅՍ ՆՄԱՆ

Տերեւներդ հոգւոյս նման

Մերթ կը շողան արեւուն տակ,

Կ'երգեն երգը յաւերժական

Լոյսի՛ն, կեանքի՛ն հրաշանման,

Մերթ կը սուգուին մշուշին մէջ

Քաղցրաթախի՛ծ, կարօտահե՛ւ,

Արցո՛ւնք-արցո՛ւնք վար կը թափին

Բաժանումով կսկծագի՛ն...

Մերթ կը պարեն հովիկին հետ

Շրշիւնով մը զերթ մեղեդի,

Որ կը պատմէ հեքիաթն անշեջ

Տիեզերքի խոր խորհուրդին...

Մերթ ալ կարծես դեռ կ'երագեն

Գարնանային հի՛ն-հի՛ն օրերն,



Երբ կը խայտար կեանքով մը շէն

Դաշտ ու անտառ սիրահեղեղ...

Ցուքն երազին հուր կը դառնայ

Ոսկերեհեզ ու ծիրանի,

Ինչպէս տողերն սիրտէս բխած

Ուր կայ հեքիաթն իմ հոգիին...

24/9/2019

.....

ԵՐԿԻՐ ԻՄ

Մէզ լեռներէդ հաւաքեցի խոյանքը վեհ հոգւոյս թռիչքին,

Բարձունքներուդ ձիւներովը մաքրեցի ժանգն դիզուած սիրտիս:

Բիւր ձորերուդ խոր խորութեամբ ես պեղեցի ներաշխարհս,

Որոնեցի տիեզերքն անոր որ անհուն էր զերթ երկինքդ:

Կարկաչահոս աղբիւրներէդ յօրինեցի իմ մեղեդին,

Ներդաշնելով հնչիւնն անոր բարտիներուդ մեղմ շրշիւնին:

Կապոյտ ու մով գագաթներէդ հաւաքեցի գոյներ, թոյրեր,

Երա՛նգ-երա՛նգ պսպղացին երգերուս մէջ իմ հայերէն:

Այբ-Բեն-Գիմդ անմահական բացաւ խորհուրդն իր Մեծասքանչ

Որ ես ճանչնամ հայու հոգիս եւ իմանամ ո՞ւրկէ կու գամ:

Ժայռաստանդ ապառաժեայ տուաւ հզօր կամք ու ոգի

Թիավարելու հոսանքն ի վեր հայալափող ահեղ հողմին:



Եւ խիղճ մ'արդար միշտ ալ ցոլաց քու վանքերէդ՝ Աստուծոյ Տուն,

Եւ չթողուց որ ընկրկիմ գայթակղութեանց բիւր մեղքերու:

Քու դարերէդ եկող շունչդ զիս դիեցուց միշտ, հանապազ

Որ մարդ մնամ դարին այս պիղծ ուր մամոնան է տիրական:

Հիմա որքան պարտական եմ ՔԵԶ, երկիր իմ սննդատու,

Ինչպէս զաւակն իր ծնողաց կը մնամ ՔԵԶ երկրպագու:

4/9/2024

.....

ԿԱՐՕՏ

Մէկ բառիդ մէջ այսքան կըրա՛կ,

Մէ՛ր, յո՛յս ու լո՛յս են խտացած,

Մէկ բառիդ մէջ այսքան տանջա՛նք,

Երա՛գ, թախի՛ծ են թանձրացած:

Երկու վանկդ համակ յո՛յգ է,

Սիրավարա՛ր յորդ ապրում է,

Երկու վանկդ անվերջ սպասո՛ւմ,

Կրակէ՛ շապիկ ու այրո՛ւմ է ...

Յաւի թելէ հիւսուած կարծես,

Մրմոացնես վերքի մը պէս,

Խնդութեան մէջ կիզող մորմոք,

Տառապանքին՝ երազի շող:

Եւ չեմ գիտեր թէ այլ ազգեր

Ունի՞ն նման հըրա՛յրք մը թէժ,

Թէ՞ հայերուս համար ես դուն

Շիկացե՛ր ու բա՛ռ ես դարձեր:

2/9/2019

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՄԻՐԱՆ ՄԵՋԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ



Միրան Մեզայի նամականիի առաջին հատորին լոյսընծայումը խանդավառութեամբ ընդունուեցաւ գրասէր հասարակութեան կողմէ: Գրագէտներ Միրան Մեզայի, Վահէ Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի նամակները ընդգրկուած են սոյն հատորին մէջ, որոնք կը կազմեն երկար տարիներու վրայ տարածուած նամակագրութեան մը 2024-ի արտայայտութիւնը: Նամակները ունին յատուկ գրաչափին մը, որով ընթերցողը կը կլանուի գրողի ներքին ապրումներուն ու յոյզերուն, ինչպէս նաեւ տեսակէտներուն ու ժգնութեամբ ու հաստատամտութեամբ: Սոյն նամակները ունին նաեւ գրական արժանիք, գրուած ըլլալով բանաստեղծական արձակի յատկութիւններով: Անոնք մաս կը կազմեն տուեալ գրագէտներուն գրական

գործերուն ամբողջական բերքին:

Հատորը ունի տաղանդաւոր խմբագիր մը, յանձին Գեորգ Եազըճեանի, պատմաբան եւ արխիւագէտ: Փոխան յառաջաբանի անոր խմբագրականը կը պարզէ այն բոլոր խնդիրները, որ ինք դիմագրուած է նամականիին հրատարակութեան առիթով: Եազըճեանի կատարած ծանօթագրութիւնները հանրագիտարանային խորքով եւ տարողութեամբ կը վկայեն իր մանրակրկիտ ուսումնասիրութեան մասին: Ուղղումները, յաւելումները եւ յաճախ նամակներուն թարգմանութիւնները կը հարստացնեն հատորին բովանդակութիւնը: Հատորի վերջաւորութեան կայ նաեւ իր պատրաստած անձնանուններու եւ տեղանուններու ցանկը:

Խմբագիրին գործին մաս կը կազմեն նաեւ ամբողջական կենսագրութիւնները երեք գրագէտներուն, որոնք լոյս կը սփռեն իրենց գործունէութեան վրայ: Յաւելում մըն է Վահեանի եւ Ծառուկեանի մահախօսականները, որոնք կ'արտայայտեն Մեզայի կեանքին եւ գործին հանդէպ իրենց ունեցած յարգանքն ու հիացումը եւ հաւատքը անոր վիճակուած դերին յատկապէս որպէս կին լրագրող, հրապարակագիր եւ գրագիտուհի:



Նամականիի մեկենասներն են Սեզայի որդի Վահագն Քիւփէլեան եւ տիկինը՝ Անին: Իրենց մօր՝ Սիրան Սեզայի գրական վաստակին առ ի գնահատութիւն, անոնք յանձն առած են նամականիի բոլոր հատորներուն հրատարակութեան ծախսերը: Անոնց կը պատկանի նաեւ հրատարակութիւնը Սեզայի վէպին՝ «Խորտակուած կեանքեր», որ առաջին անգամ լոյս կը տեսնէր 2015-ին, նաեւ իր կենսագրական հատորին՝ «Գիրք ծննդոց»ի հրատարակութիւնը 2014 թուին:

Սեզային նամակները իր հոգիի ու մտքի յոյզերն ու ապրումները կ'արտայայտեն: Յատկապէս Վահէ-Վահեանին գրած նամակները ասելի բանաստեղծական են եւ գերզգայուն: Բնութեան հանդէպ իր մասնաւոր սերն ու ծառին ու ծաղկին հանդէպ ունեցած զգայնութիւնը կը սողոսկին իր տողերուն ընդմէջէն: Իր գմայլանքը՝ հովիտներու, ձորերու, մայրիներու գեղեցկութեան նկատմամբ կը վերահաստատէ իր մէջ այն համոզումը, որ միակ գեղեցկութիւնը բնութեան մէջ կարելի է գտնել: Ինք իր մասին արձակ բանաստեղծութիւն մը կը յօրինէ, թէ ինչպէս աղուոր աղջիկ մը օր մը ուզեց ճամբորդել բնութեան մէջ: Ան լսեց ձայներ, որոնք չէր գիտեր թէ որուն էին, ու անտարբեր մնաց բոլոր հառաչներուն դիմաց: Մարդիկ կարծեցին որ կ'արհամարհէր զիրենք, ուստի բռնեցին եւ չուաններով կապեցին եւ յոգնած մարմինը ջուրերուն մէջ նետեցին: Սեզա կը զգուշացնէ Վահեանը, որ ինք չմիանայ զինք ջուրերուն մէջ նետողներուն խումբին: Կը յայտնէ իր ծրագիրը վէպ մը գրելու: Զուգեր որ շատ յառաջանայ տարիքը եւ 40-էն ետք միայն հրատարակէ իր վէպը, ճիշդ անգլիացի վիպագիր Ճորճ Էլիոթի նման:

Սեզայի նամակներուն գլխաւոր նիւթերէն էր ապրած ձանձրոյթը իր շրջապատին: Իր կեանքը կ'անցընէր կեղծ ժպիտներով, տափակ խօսքերով եւ տառապալի գիշերներով: Կ'արտայայտէր իր տխրութիւնը եւ մարդոցմէ հեռու մնալու իր ցանկութիւնը: Կը դժգոհէր ու կը զոջար որ հասարակական կեանքին վերադարձած էր եւ իր կանացի թերթը վերահրատարակած: Հոգին հիւանդ էր, նոյնպէս մարմինը: Սեզա նողկանք կ'արտայայտէ իր շրջապատի մարդոց՝ իրեն հանդէպ ունեցած անընդունելի վարքագիծին նկատմամբ: Նախանձի, բամբասանքի, ռիսկալութեան դիմաց կ'ընկճուի իր հոգին, իր թռչող թելերը կը տկարանան ու հուսկ կը կոտորին: Մարդկային ընկերութեան իրեն հասցուցած հոգեկան վերքերը զինք հիւանդ կը դարձնեն: Վահեանի գրած նամակը զինք կը գօտեպնդէ: Կայ մէկը, որ զինք կը սիրէ եւ կրնայ փլուզումի պահուն անոր կառչիլ եւ հոսանքն անցնիլ: «Մէկը կայ որ կը սիրէ քեզ եւ կը հաւատայ քեզի»: Սեզա մտահոգ էր Վահեանի սիրոյ հզօրութենէն, որ չէր ուզեր քաջալերել: Երանի թէ մոռնար զինք: Ինչ պէտք ունէր յուսահատ ու յուսախար կնոջ մը թելերուն փաթթուիլ: Սիրէ զինքը Shelley-ի բանաստեղծութիւններուն սիրով: Անիրական, հեռաւոր, անմատչելի, աննիւթ: Ամուսնութեամբ երջանիկ պիտի չըլլային, քանի որ Սեզա կուզէ մէկը, որ զինք սիրէ մեղմութեամբ եւ հանդուրժէ իր քմայքները: Վահեան ժառանգական յանկարծակի պոռթկումներ ունի եւ այս ընդունելի չէ Սեզային համար: Եթէ լուրջ հետաքրքրութիւն ունի ամուսնութեան, պէտք է զիտնայ որ ինք աշխատող կին մը պիտի չըլլայ, ան իր գրականութեամբ պիտի պարապի եւ հանդարտ կեանք մը ապրի: Պէտք է Վահեան լուրջ մտածէ այս մասին եւ ոչ թէ զգացումով դատէ, այլ՝ մտքով:



Իր Վահեանի նամակներուն մէջ, Սեզա միշտ մտահոգութիւն ունի գործ մը գտնելու եւ եկամուտ մը ունենալու համար: Առհասարակ, փոքրերուն դասեր կու տայ, փոխադարձը սենեակ մը ունենալու պայմանով: Իսլամական «Մաքսսէտ» աղջկանց վարժարանի տնօրէնուհի դարձաւ, սակայն 2 ամիս ետք արդէն հրաժարեցաւ, ծանօթանալով անոնց աղջիկներուն կրթութեան խիստ յետադիմական պայմաններուն: Իր ազատամիտ գաղափարներուն հակոտնեայ դրուածքով կրթական սիստեմին չէր կրնայ համակերպիլ:

Գործի որոնումը զինք տարաւ մինչեւ Պաղտատ, ուր հայ եւ արաբ բարեկամներու քաջալերանքը հաւաստիացուց կարելիութիւնը լաւ վճարումով գործ մը գտնելու: Պաղտատի արաբ բարձրաստիճան բարեկամները բարձր մակարդակի գործ առաջարկեցին, բայց ինք մերժեց կեցութեան հետ կապուած մանր-մունր խնդիրներով: Հուսկ ապա, հայկական դպրոցին մէջ դասաւանդեց: Վահեանի համար ալ բաժանումը ծանր էր եւ դժուար օրեր անցուց Սեզայի բացակայութեան: Սեզա առաջարկեց Պաղտատ դիմել երկրորդական վարժարանի որպէս գիտութեան ուսուցիչ: Այդ մէկը երկարատեւ գործընթաց էր եւ երբեք իրականութիւն չդարձաւ: Լիբանանի ընկերային շրջանակէն իր դժգոհութիւնը շարունակուեցաւ նաեւ Պաղտատի մէջ: Հոս եւս կը գանգատէր շրջապատի տափակ ու միօրինակ, անհմայ իրականութենէն: «Հոգիս երբեք պիտի չկրնայ կառչիլ այս աշխարհի բաներուն, նոյնիսկ սիրով լեցուն երիտասարդի մը ներկայութեան»: Այս կը նշէր զոյգին միջեւ գոյութիւն ունեցող մշակութային մակարդակը:

Սեզայի Ծառուկեանին ուղղուած նամակները ունին սիրային զօրաւոր յենք եւ միեւնոյն ատեն դաստիարակչական բնոյթ: Անդրանիկի օղիին հանդէպ ունեցած թուլութիւնը Սեզա կը ձաղկէ այն հաստատ համոզումով, որ այդ մոլութիւնը զինք տեղ չի հասցներ: Իսկ եթէ իր բարեկամութիւնը զինք զինեմոլութեան կ'առաջնորդէ, պիտի ուզէր խեղդել զայն: Իր կարծիքով՝ Անդրանիկին կեանքը սխալ եղած է: Ան պետք է ջանար մարդ ըլլալ ամէն բանէ առաջ: Օղիի շիշերուն գերին ըլլալու փոխարէն, գիրք պէտք էր կարդար, եւ այդ կերպով միայն կրնար քոյր հոգի մը ըլլալ իրեն: Անդրանիկի սերը, արցունքները, Սեզան չէին գոհացներ. ան կը պահանջէր «կամք, բռունցք, վճռող, պարտադրող, գերեվարող շրթունքներ»: Ան կը յարէ. «Ես ոչ մեղկ մայր կրնամ ըլլալ, ոչ քոյր, ոչ կին: Պէտք է Անդրանիկի ականջները քաշել, որ մարդ դառնայ»: Ան ճեմարանէն դուրս կը դրուի Լեւոն Շանթի կողմէ, վարքի մէջ իր թերացումներուն համար: Մայրը Հալէպէն կու գայ բողոքելու համար:

Ծառուկեանի անբարեխիղճ շրջանակը իր դէմ արշաւի ելալ՝ զինք անուանարկելով գլխաւորաբար Սեզային հետ իր մտերմութեան պատճառաւ: Այս մասին ան երբեք չարտայայտուեցաւ Սեզային: Անդրանիկ շատ ծանր տարաւ այս յարձակումները իր դէմ, որոնք նուաստացնող հանգամանք ունէին: Սեզան երբ իմացաւ այս մասին, որպէս փորձառու կին, արհամարհեց իրենց երկուքին հասցէին արձակուած նետերը եւ թելադրեց Անդրանիկին՝ նոյնը ընել: Ան խորխտաբար վճռեց անցնիլ անոնց առջեւէն, արհամարհելով զիրենք: Ապա քաջալերեց Ծառուկեանը իր բանաստեղծական տաղանդին դրսեւորման մէջ եւ թելադրեց անտեսել զինք վարկաբեկել ուզող մարդիկը:



Այդ բոլորին որպէս հակազդեցութիւն, Սեզա իր սերը կ'արտայայտէր Անդրանիկին նկատմամբ զեղումներով: Զինք անմատչելի որակած էին մարդիկ, սակայն ինք այդպիսին չէր: Ան չէր մերժած Անդրանիկին սերը եւ մտերմութիւնը: Կուգէր որ ան հանդիպէր իրական սիրոյն Սեզայի մօտ, որ անկասկած զինք պիտի բարձրացնէր:

Շատ մեծ անակնկալ էր Անդրանիկի անձնասպանութեան փորձը, որ ցոյց կու տար անոր չափազանց յուսահատ հոգեվիճակը: Շատ մը լուրջ հանգամանքներ պատճառ հանդիսացած էին սոյն ողբերգական գործողութեան: Երկարատեւ անգործութիւնը, ընկերներուն դաւաճանութիւնը, ապագայի անորոշութիւնը, տնտեսական անապահովութիւնը պատճառներ էին Անդրանիկի՝ նման յուսահատ քայլի մը դիմելուն:

Տարիներ անցան եւ Ծառուկեան փայլեցաւ իր բանաստեղծի եւ գրագէտի կարողութիւններով, որպէս տաղանդաւոր գրող եւ լրագրող «Նայիրի» շաբաթաթերթին:

Հայ իրականութեան մէջ շատ անսովոր եւ իւրայատուկ անձնաւորութիւն էր Սիրան Սեզան: Ան Լիբանան եկած էր 30-ական թուականներուն՝ Գոլումպիա համալսարանէն շրջանաւարտ, MA մագիստրոսի տիտղոսով, լրագրութեան եւ գրականութեան մէջ: 1932 թուականին, ան հիմնեց «Երիտասարդ Հայուհի» կանանց ամսաթերթը, որ առաջինն էր Լիբանանի մէջ՝ տեղական եւ հայկական առումով:

Մտաւորական եւ գրական արժանիքներով փայլող Սիրան Սեզան լիբանանահայ մտաւորականութեան յարգանքին եւ ակնածանքին արժանացած էր: Իր ընկերային շրջանակը առհասարակ գրողներէ եւ մտաւորականներէ կազմուած էր: Սեզա կեանքի փորձառութեամբ օժտուած ըլլալուն, երիտասարդ գրողներուն հանդէպ հոգածու մեծ քրոջ վերաբերմունք ունէր: Անոնցմէ շատերը կը սիրահարէին իրեն, սակայն ինք, հասուն կնոջ կեցուածքով, զիրենք կը մղէր դէպի գրականութեան ակունքները: Գիրքեր կը թելադրէր անոնց, որ կարդային եւ զարգանային: Իր գիրքերը կը տրամադրէր անոնց: Կը կարդար անոնց գրութիւնները եւ իր անաչառ տպաւորութիւնները կը փոխանցէր: Կ'անդրադառնար թերութիւններուն եւ կը գնահատէր յաջող էջերը:

Սիրան Սեզա իր բազմաթիւ հիացողներուն մէջէն որպէս ամուսին ընտրեց տոքթ. Ներսէս Քիւփէլեանը, որ իր գրական վաստակին հանդէպ ունէր բացառիկ յարգանք եւ հիացում: Ան թիկունք կանգնեցաւ Սեզային՝ անխափան հրատարակելու «Երիտասարդ Հայուհի»-ն նոր շրջանը, 1948-էն մինչեւ անոր շիջումը 1968-ին: Սեզա ամբողջովին նուիրուեցաւ իր հիմնադրած թերթին աշխատանքներուն, յաճախ ափսոսալով, որ ինք չէր կրնար նուիրուիլ ստեղծագործական գործերու, որոնք միշտ կը յետաձգուէին թերթին պարտադրած աշխատանքներուն պատճառաւ:

Խումբ մը համալսարանական կին մտաւորականուհիներ, որոնք 1965 թուին սկսած էին օգնել Սեզային խմբագրական աշխատանքներուն եւ յօդուածագրութեան մէջ, կազմակերպեցին նաեւ Սեզայի 40 տարուան գրական վաստակին եւ «Երիտասարդ Հայուհի»ի 15-ամեակին նուիրուած յոբելենական հանդիսութիւնը 1967 տարուան Դեկտեմբեր ամսուն: Ներկայ էր լիբանանահայ մտաւորականութեան եւ մշակութային



կեանքի բարձր խաւը: Մեզա պարզեւատրուեցաւ Լիբանանի Մշակոյթի եւ Կրթութեան նախարարութեան «Արժանեաց շքանշան»ով:

Ողջունելի է Մեզայի հարուստ նամականիի հրատարակութիւնը, որ, բացի իր զգացական եւ մտաւորական կեանքի դրսեւորումէն, կը կազմէ վաւերագրութիւնը տուեալ ժամանակաշրջանին: Այնտեղ արձանագրուած են հայաստանեան եւ սփիւռքեան գլխաւոր իրադարձութիւններն ու արձագանգները, սխրանքներն ու նուաճումները: Այնտեղ յստակ կերեւին նաեւ Մեզային հետ նամակագրութիւն պահած գրագէտներու եւ մտաւորական դասի մտորումները, դիրքորոշումներն ու վերլուծումները՝ ազգային, մշակութային եւ ընկերային ու գրական խնդիրներուն շուրջ:

Մոյն նամականիի հրատարակութիւնը անկասկած նպաստ մըն է 20-րդ դարու առաջին երեսնամեակի գրական կեանքի հոլովոյթին ուսումնասիրութեան:

ԱԶԱՏՈՒՀԻ ՄԻՄՈՆԵԱՆ

ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

ՊՐՆ. ՊԵՏԵԱՆԸ

Վարդան Թաշճեան



Պէրոյթի հարաւ-արեւելքը, 45 քմ հեռաւորութեան վրայ, լեռնային գիւղ մըն է Պաաքլինը, Շուֆի շրջանին մէջ, մեծամասնութեամբ տիրոզի բնակիչներով: Պէրոյթի Ամերիկեան Համալսարանը աւարտելէս ետք, պաշտօն ստանձնեցի գիւղի Shouf National College-ին մէջ, իբրեւ ուսողութեան ուսուցիչ: Շատ չանցած ինծի միացաւ նաեւ մելգոնեանցի մտերիմ բարեկամս՝ Գեորգ Յակոբեանը: Հոյակապ էր միջավայրը, խիստ յարգալիւր շրջապատը, հաճելի՝ մթնոլորտը: Գոհ էի կեանքէն, աշխատանքէն, տնօրէնուհիէն, ուսուցիչներէն, աշակերտներէն, գիւղի բնակիչներէն, բայց մանաւանդ Գոլէճի հիմնադիր-բարերար Շէյխ Սայիտ Համատէէն:

Երկրորդ տարեշրջանը աւարտելու մօտ էր, երբ անակնկալօրէն խնդրարկու նամակ մը ստացայ Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէնութենէն պաշտօնավարելու հոն՝ նիւթական համեմատաբար աւելի յարմար պայմաններով եւ տակաւին՝ զգացական սրտբաց տողերու շարահիւսութեամբ:

«...Ինչո՞ւ համար չձառայէք այն հաստատութեան, որուն բարիքները շնորհուեցան Ձեզի, Ձեր ուսանողական տարիներուն եւ որ այնքան կարիքը ունի Ձեզի պէս երիտասարդ, կարող ուժերու, մեծ բարերարներու կտակը իրականացնելու ճամբուն վրայ...»

Նամակին ստորագրութիւնը՝ Ասատուր Պետեան:



Կրնայ ըլլալ որ թեթեւ երկմտանքով մը ընդունած եղայ այս հրաւերը, երբ ձեռով մը ա՛լ աղիւսուած էի Պաաքլինին, սակայն կը խոստովանիմ որ անուրանալիօրէն ճակատագրական հսկայ դեր խաղաց ատիկա կեանքիս ընթացքը անստոյգ հորիզոնէն առաջնորդելու դէպի երջանկաբեր արիւթ, ճշգրիտ եւ գուցէ արդար եզրայանգում մը տալով առած որոշումիս: Նամակ մը միայն գուցէ պարզ, սովորական, բայց նետը թիրախին ուղղուող քաղաքավար այլեւ ռազմավարական միջոցառումը յաւետ երախտապարտութեամբ կ'ողողէ զիս մինչեւ այսօր, գրեթէ վաթսուն տարիներ ետք, երբ կեանքս անքակտելիօրէն կապուած եղաւ թէ՛ Կիպրոսի հետ, թէ՛ կիպրացիի հետ եւ հարստացաւ երջանկութեան եւ յաջողութեան անսպառ գանձերով:

1966-ի ամրան վերջաւորութեան Կիպրոս ժամանելէս քանի մը ժամ ետք, անսպասելիօրէն բարի գալուստի համար ուսուցիչներու շէնքի սենեակս եկան Ասատուր Պետեանը եւ իր շնորհալի տիկինը՝ Ենովան, որ նոյնպէս պաշտօն կը վարէր Մելգոնեանի մէջ իբրեւ հայերէն լեզուի եւ գրականութեան ուսուցիչ խոնարհագոյն դասարաններուն, մինչ վերի կարգերուն դասատուն էր Պրն. Ներսէս Թամամեանը (Ն. Կատար):

Հոգատարական խորհուն արարք մը կը բուրէր այս այցը, կեցութեանս եւ ուսուցչութեանս տալու հաճելի եւ գօտեպնդիչ նախերգանք մը, հաւանական անհրաժեշտ կարիքի մը գոհացման պատրաստակամութեամբ, այն երկինքին ու երդիկին տակ, ուր պատանութենէն թեւակոխեցինք երիտասարդութիւն, երփներանգ յուշերու անվերջանալի շարանով, 1953-59 երկարող տարիներուն:

Ենովան վառվռուն, խանդավառ, համակրելի՝ ձեռքի պարային շարժումներով, մթնոլորտը քաղցրացուց շուտով, թէյին մէջ դրուած շաքարին նման...

- Պրն. Թաշճեան, ե՞րբ եկաք, ե՞րբ տեղաւորուեցաք, այսքան արագ եւ կանոնաւոր...

Աչքէն չէր վրիպած որ եկած-չեկած, ճամպրուկս պարպած եւ ամէն ինչ բծախնդրօրէն տեղաւորած էի պահարանիս մէջ եւ գրասեղանիս վրայ:

Ասատուրը՝ գտայ հակապատկերը Ենովային, լուրջ, կշռութաւոր, ծանրախոհ, հանդարտաբարոյ: Բարձրահասակ էր, քալուածքը՝ երկար, դանդաղ քայլերով, ձիգ, հեղինակաւոր եւ զլուխն ալ թեթեւ մը հակ՝ դէպի ձախ: Մեր խօսակցութենէն դժուար չեղաւ քաղել տպաւորութիւններուս առաջին փունջը: Ուշիմ, իմաստուն, թափանցող, գուսպ, դիւանագիտական, ստոյիկեան... Պատասխանները կու տար կամ հարցերը կը ծեծէր ցած ձայնով, լակոնական ոճով, բայց՝ տեղին, տրամաբանական, համոզիչ, մանաւանդ երբ զլանիկին ծուխը կ'արտաշնչէր դէպի վեր, արտայայտուող գաղափարներուն հետ:

Ըսուած է թէ անձի մը նկարագիրը ճանչնալու համար կամ հետը ճամբորդելու եւ կամ ալ՝ աշխատելու է: Եւ ուրեմն շատ ժամանակի պէտք չեղաւ թափանցելու իր բնաւորութեան միւս յատկանիշներուն մէջ եւս: Ուսուցչական ժողովներուն, օրինակ, աւելի լսող էր, քան թէ խօսող: Իբրեւ տնօրէն առաջին վայրկեանէն ինքզինք պարտադրող եւ ժողովականները պատանդ բռնող մենատէրը չէր: Օրակարգի նիւթ մը զլորելէն ետք, թոյլ կու տար կարծիքներու եւ տեսակէտներու տարափին, զլուխը թեթեւ մը բարձր, տեղ-տեղ, վեր-վար



հաստատական եւ հասկացողական շարժումով, նօթեր առնելով, յարգելով եւ կարեւորելով եղած առաջարկները: Վերջին խօսքը սակայն կը պատկանէր իրեն, գտած ըլլալով հարցի լուծման միջին ճամբան: Տրամաբանական եւ դատողական՝ կարծիքները ամփոփող, խտացնող, հաւասարակշռուած եզրափակիչ պատասխանը կը քշէր առաջ, առանց արժանապատուութիւն վիրաւորելու եւ առանց քաղելու առարկիչ ընդդիմախօսութիւն մը: Արդի՞ւնք: Որոշումը կ'առնուէր միաձայնութեամբ, գոհունակութեամբ:

Պետեանը գուցէ զիրքերու հեղինակ տնօրէն մը չէր, Բիւզանդ Եղիայեանին նման, բայց ետ չէր մնար մտաւորական դասակարգէ, երբ պաշտօնին առընթեր կը դասաւանդէր նաեւ մանկավարժութիւն, իմաստասիրութիւն, մեթոտաբանութիւն, հոգեբանութիւն եւ ընդհանուր պատմութիւն, նիւթեր, որոնք կը ցոլացնէին հմտութեան եւ մտածողութեան իր արտակարգ կարողութիւնը, իբրեւ սնունդ եւ դէկ՝ վարչական իր գործընթացին: Վարպետ որմնադիրի հմտութեամբ, ճարտարութեամբ այլ մանաւանդ՝ առարկայական մօտեցումով կը կառուցանէր ու կը կառավարէր Մելգոնեանը: Յանդուգն էր, նախաձեռնող եւ գործին հանդէպ կը տածէր խոր հաւատք, անշեղօրէն հետեւելով չափաւոր խստութեան եւ կարգապահութեան: Գնահատականները անսակարկ կամ շոյլ կրնային չըլլալ այնքան որքան որ այք ալ չէր փակէր վարքի-բարքի խախտումին, սնամէջին կամ սխալականին: Բայց վրիպանքները մտրակի հարուածէն եւ ձաղկելէն աւելի՝ ազդու եւ արդիւնաւետ կը գտնէր սանձը քաշելու միտող զգաստութեան կամ սրբագրութեան միջոցառումները: Այսուհանդերձ, որքան ալ որ կարծր թուող կուրծքին տակ փխրուն սիրտ մը ունէր, կարելի չէ որ ցաւուցած չըլլար աշակերտ, ուսուցիչ, պաշտօնէայ կամ ծնողք, կանոնապահութեան իր հաւատամքի ճամբուն վրայ, սկամայ սխալի մը պատճառաւ:

Սխալիլը մարդկային է, ամէնուրեք, դպրոցի մէջ, ընկերութեան մէջ, կառավարութեան մէջ, անձնական կամ հանրային կեանքի մէջ: Միայն մեռելներն են որ չեն սխալիր: Երբ տնօրէն ես, գործատէր ես, ատենապետ ես եւ կարեւոր որոշումներուն բանալին կը կրես, գանգատ, դժգոհանք, քննադատութիւն անպայման կը լսես, որքան որ ալ փորձես գոհացում տալ բոլորին:

Գանգատ մըն ալ ես ուղղեցի իրեն օր մը, երբ զգացի որ պարտականութիւն մը հազիւ աւարտած՝ ուրիշ մը կը փորձէր բարդել ուսերուս:

- Բայց Պրն. Պետեան, ինչո՞ւ միայն ինձի կը վստահիք այս գործերը: Ուրիշներ ալ կան: Մէկ մասն ալ անոնց տուէք:

Հանդարտ, պաղարիւն եւ զգացական լարերու դպչող փորձով՝

- Գործը՝ գործ ընողին կու տան, Վարդան,- եղաւ իր կարճ, կտրուկ, խուսափողական եւ հարկաւ անզիջող պատասխանը, թեթեւ ժպիտով եւ մէկ աչքն ալ խփելով...

Հակառակ իր ունեցած հանգամանքէն բխող անհատականութեան, ծանրութեան, լրջութեան, աշխատանքի ժամերէն դուրս շատ ընկերային մարդ էր Պետեանը, իր երթը միախառնելով՝ իրեն աջ բազուկ, խորհրդատու, յաւէտ կենսունակ ու ժպտումերես Ենովային: Երջանիկ զոյգ էին, Մելգոնեանէն դասընկեր եւ միասին շրջանաւարտ՝ 1937-ին:

Այդ ուրախութիւնը կը սրսկէին նաեւ Մելգոնեանի սահմաններէն ներս բնակող պաշտօնակիցներու խմբակին վրայ, հայ, արաբ կամ անգլիացի: Մտերմիկ յաճախակի համախմբումներով, խորովածի երեկոներով եւ բարձրաձայն խնդրով հարուստ երեկոներ եւ կամ լեռնագնացութիւններու ատեն, նարտի կամ պլոթի ժամանց խաղերով Պետեանը հաւասար կը դառնար բոլորին եւ ոչ թէ՛ հաւասարներուն առաջինը: Միւս կողմէ սակայն սկզբունքի եւ կանոնապահութեան իր դաւանանքը չէր արտօնէր որ նախորդող օրուան հաճելի խրախճանքը պատեհապաշտական շահագործումի առիթ ընծայէր մասնակիցներէն մէկուն կամ միւսին կողմէ: Գործը ունէր իր ճամբան, ընկերային կեանքը՝ իրը: Արաբական երկրէ կու գար բայց «ուսաթա»ն չէիր գտներ իր բառարանին մէջ: Ուղղամիտ այդ ոգին, գէթ իմ աչքիս շիտակ կ'երեւար եւ աստիճան մը աւելի ծանրութիւն կու տար իր անձին հանդէպ տաճած յարգանքիս:



Վարդան Թաշճեան եւ Ասատուր Պետեան նարտ կը խաղան

դպրոցական պտոյտի ատեն (1970)

Յաճախ կը պատահէր որ խլացուցիչ խնդրօք մը պայթէր ուսուցչարանին մէջ, դադարի պահերուն, երբ յաւէտ կատակասէր՝ պաշտօնով հերթապահ Տիգրան Օհանէսեանին հետ նիւթեր կը ճարէինք պատմելու, զուարճալի տարագ մը հագցնելով նոյնիսկ ամէնէն լուրջ հարցերուն: Մեր յարգելի պաշտօնակիցներէն սովորաբար լրջադէմ Պրն. Թամամեանը, Դոկտ. Յարութիւն Էսէկիւլեանը եւ Դոկտ. Ազապի Նասիպեանը (Էքմէքճեան) եւս փորերնին բռնած կը մարէին խնդալէն, արցունք սրբելու աստիճան:

Օր մըն ալ դուռը յանկարծ բացուեցաւ եւ ներս խուժեց Պետեանը, տեսչարանը լքած, յայտնապէս ականուած մանչերու շէնքին միջանցքները խաչաձեւող քահ-քահներէն:

- Մեզի ալ պատմեցէ՛ք, մենք ալ խնդանք քիչ մը...



Պարագաներու ստիպողութեան տակ պահանջկոտ ու պատասխանատու գործի ճնշում եւ ծանրութիւն թեթեւցնող դարմանումի լաւագոյն դեղահաստի այս փնտռուքը թափանցկոտութիւն մը, դրսեւորում մը կ'արտացոլացնէր Պետեանի բնականութեան վրայ:

Չորս զաւակ ունէին Պետեանները: Երկու մանչ՝ Վահէն եւ Ռաֆֆին եւ երկու դուստրեր՝ Սալբին եւ Սիլվան: Բոլորն ալ արտակարգօրէն ուշիմ, ընդունակ, յառաջադէմ եւ չափազանց ծնողասէր: Ծնողք-զաւակ փոխադարձ յարգանքի եւ սիրոյ պատկերը աննկատ չէր մնացած երբէք Մելգոնեանի շրջանակներէն ներս եւ գուցէ իր բարի օրինակը ծառայած՝ շատ շատերու: Բնիկ հալէպցի էին եւ Մելգոնեանի մէջ դասընկեր ունեցած՝ Գերսամ Ահարոնեանը, Հայկաշէն Ուզունեանը եւ անոնց հետ լաւ մարզիկ ալ եղած էր Ասատուրը, իբրեւ վոլէյպոլի առաջնակարգ խաղացող:

Կը խորհիմ որ կուսակցական չէր եւ գաղափարական կամ հատուածական հարցերէ աւելի ուղեղը կը քերթէր Հաստատութեան խնդիրներով: Կը սիրէր ընթերցումը, կը կարդար բովանդակալից, խորիմաստ նիւթեր: Կը սիրէր նաեւ ձկնորսութիւնը եւ որոշ օրեր կը քշէր ինքնաշարժը դէպի Կալոպանայիոտիս գիւղի ամբարտակը, Թրոտոս լեռան լանջին, ինքզինք կլանելու գլուխը խաղաղեցնող եւ հոգերը շոգիացնող պարապումին: Սովորութիւն ունէր նաեւ յետ-միջօրէններուն, ժամը 4-էն վերջ, երթալ Բարեգործականի ակումբ, անձնատուր ըլլալու պրիճի մտակրթանքին, իր խաղընկերներուն՝ Մ.Կ.Հ.-ի Հոգաբարձութեան ատենապետ եւ հայ համայնքի ներկայացուցիչ Պերճ Թիլպեանի եւ «Պարքլէզ» դրամատան բարձրաստիճան պաշտօնատար եւ Նարեկ Վարժարաններու Հոգաբարձութեան ատենապետ Յարութիւն Բարիքեանի հետ, երկու ազգայիններ, որոնց բանիմացութիւնն ու սրամտութիւնը գաղտնիք մը չէր թէ՛ գաղութին եւ թէ տեղական շրջանակներէն ներս: Կը խաղար գուցէ վանելու համար իր միտքը քերթող տազնապալի հարցերը եւ անդորրեցնելու իր ներքին խռովքը:

Այսուհանդերձ գտնուեցան անձեր, որոնք նիզակ ճօճեցին իր դէմ, մեղադրանքի եւ բամբասանքի առիթ գտան անոր մէջ, զարտուղի եւ խոտոր համեմատելով «թղթախաղ»ը իր դիրքին եւ հանգամանքին հետ: Ասատուր Պետեանը սակայն այս ալիքներէն ցնցուող նաւը չէր՝ ապահով ափեր հասնելու իր փորձին մէջ, որքան ատեն որ մաքուր բարոյականով իր անձնական կեանքի անգայթ հոլովոյթները չէին պղտորեր տնօրինական գրասենեակի հարկադրանքները:

Իր օրով յատկանշական դարձան Մելգոնեանի վիլլային մէջ, որ տնօրէնի բնակարան կը ծառայէր Բարեբարին մահէն ետք, ուսուցիչներու եւ պաշտօնէաներու ի պատիւ սարքուած տարեվերջի աւանդական հաւաքոյթները, Պետեան ամուլին կողմէ: Ազնուահոգի, հիւրասէր Ենովային ճարտար ձեռքերով պատրաստուած համադամ ճաշերը, երգերով, արտասանութիւններով, անեքթոններով, զուարթախօսութիւններով, անհամեմատ շէնութիւն մը կը պարգեւէին երեկոյին, մանաւանդ երբ անգլիացի պաշտօնակիցներ, ոգելից ըմպելիքներու ազդեցութեան տակ կը փորձէին միանալ հայկական երգին ու պարին, ծիծաղելի պահեր հրամցնելով հայերու...



Գեղեցիկ մտայնացում մըն էր, անսակարկ գնահատանք մը՝ հանդէպ նոր սերունդներու պատրաստութեան մէջ քրտինք եւ շունչ սպառող կրթական մշակներու, բարոյական կորովը եւ աշխատելու ախորժակը սրող դրական քայլերով: Բայց որքան աւելի լաւ պիտի ըլլար, փափաքելի, ցանկալի, տեղին եւ արդար, եթէ երբեք նոյն այդ երախտաւորներուն համար մշակուած, ծրագրուած եւ հաստատուած ըլլար մնայուն պաշտօնավարութեան եւ ապահով ծերութեան մը հանգստեան թոշակի նախագիծը, ինչ որ, դժբախտաբար, չիրականացաւ երբեք: Այդ ուրիշ որ ճակատագիրը շատ բան փոխեց, շատ չանցած, անգութ գտնուեցաւ Հաստատութեան գոյատեւումին եւ անոր անփառունակ փակումէն ետք, փակուեցան նաեւ յոյսի եւ լաւատեսութեան բոլոր դռները, ուսուցիչներուն համար խոստմնալից ապագայի մը երագանքը, այլ տակաւին՝ ցաւալիօրէն ցամքեցան ընդմիշտ նոյն ուսուցիչներուն օրուան հացի աղբիւրները...

Ինը տարի պաշտօնավարեցի Մելգոնեանի մէջ, երջանկաբեր շրջան մը՝ երբ կնքած եղայ ամուսնութիւնս եւ բախտաւորուեցայ երկու սիրասուն դուստրերով անոր յարկին տակ, մինչեւ որ 1974-ին տխրահռչակ պետական հարուած մը նախագահ Մակարիոս Արքեպիսկոպոսի դէմ եւ շաբաթ մը ետք, ասիկա պատրուակ բռնելով թրքական բարբարոսային արշաւանքը դրախտանման Կիպրոսը յեղաշրջեցին եւ վերածեցին դժոխքի: Մելգոնեանն ալ անմասն չմնաց թշնամիին օդանաւային ոճրային ուրակոծումներէն մոխիրի վերածուած տեսնելով տղոց շէնքի ննջարանը եւ այլ բաժիններ:

Տարի մը ետք, պաշտօնական հրաւերի ընդառաջ՝ նշանակուեցայ Նարեկ Վարժարաններու տնօրէն: Մելգոնեանէն հեռանալու որոշումիս շուրջ քաւութիւն հիւսելու եւ մեղանշողական ըլլալու նպատակ չէի հետապնդեր, երբ Պետեանին քովը գացի, տեսչարան, գրոյցի մը համար: Կրնար դառնացած ըլլալ, բայց հասկացողութիւն ցոյց տուաւ երեւութապէս, եթէ ոչ ներքուստ: Ի վերջոյ իր յոյսերը ի դերեւ ելած չէին, եթէ համեստօրէն ըսեմ, ուսուցչական բազմապիսի եւ բեղուն գործունէութիւններուս բերմամբ: G.C.E.-ի ուսողութեան քննութիւններու բացառիկ յաջողութիւնը, երեք յաջորդական տարիներ, Դ. դասարանէն եւ ոչ թէ Ե., «Յակոբ Պարոնեան» թատերախումբի հիմնումը, թատերական հրապարակային ներկայացումները, ընկերային ձեռնարկները, այլ զոհողական համեստ աշխատանքներ, գիշերօթիկի կեանքը համեմոյ տեսակէտէն, թուելու համար մի քանին:



Ասատուր Պետեան եւ Ենովա Պետեան (1966-1967)



Կացութեան համակերպելու եւ իր դիւանագիտութեան հաւատարիմ, միտքը պարզեց այսպէս:

- Կը հասկնամ, Վարդան: Կը ցաւիմ որ Մելգոնեանը պիտի կորսնցնէ քեզ, բայց մխիթարական կ'ետը այն է որ ուրիշ դպրոց մըն է շահողը: Գէթ պիտի շարունակես կրթական ասպարէզը, հոգ չէ թէ տարբեր կամարներու տակ: Սրտանց յաջողութիւն կը մաղթեմ:

Կ'ետ մը, որ չմոռցաւ կրկնելու իր նամակներէն մէկուն մէջ:

Մեր բարեկամութիւնը սակայն չխախտեցաւ երբեք, ինչ փոյթ թէ պարագաներու բերումով ալ յաճախակի չէին դառնար մեր հանդիպումները:

Պաշտօնի կոչուելէս ամիս մը ետք, Մելգոնեանի իր գրասենեակը գացի դարձեալ բարեկամական այցելութեամբ, իր փորձառութենէն խորհուրդ մը կորզելու միտումով: Ողջագոյրուեցանք: Հին օրերու կարօտը կարծես մաշած ըլլար:

- Պրն. Պետեան, կրնա՞ք ինծի մէկ նախադասութեան մէջ խտացած ամէնէն կարեւոր խրատը տալ,- հարց տուի իրեն,- «հին» տնօրէնէն «նոր» տնօրէնին, սանկ՝ օգտակար ուղեցոյց մը... գործիս յաջողութեան համար...

Աչքերուս նայեցաւ ուղիղ, երկար շունչ մը քաշեց ծխիկով եւ հինէն նորին կամուրջ նետող պատասխանը արտաշնչեց առանց խորհրդածութեան.

- Երբե՛ք մի՛ ջղայնանար, Վարդա՛ն..., երբե՛ք...


Իր օրինակով սրտի դպչող թելադրանք մըն էր, դիպուկ, անկեղծ, տեղին, կտրուկ, հատու, ինչ որ լծակ ծառայեց ինծի տնօրէնութեանս քսանեօթը տարիներուն, կարելի չափով: Բարկութիւնը, այո՛, բնական զգացում մըն է լալու եւ խնդալու պէս, կարեւորը սակայն անոր հետեւանքով ստեղծուած անզսպելի եւ անբաղձալի արարքն է որ կրնայ աներ գործել...: Այդ էր իր պատգամին միտք բանին:

Անակնկալի եկայ երբ տարի մը ետք Պետեանն ալ հեռացաւ Մելգոնեանէն, տասներկու տարուան ծառայութենէն ետք եւ տէր եւ տիկին վերադարձան Հալէպ, մինչ զաւակները մեկնած էին Միացեալ Նահանգներ, բարձրագոյն ուսման հեռանկարներով: Հալէպի մէջ, Պետեանը շարունակեց աշխատիլ իր եղբօր կահ-կարասիի վաճառատունը, դիմելով նոյն ատեն Ամերիկա հաստատուելու ծրագրին: Ատեն մը սրտբաց նամակագրութիւն պահեցինք իրարու հետ, մանաւանդ երբ անակնկալօրէն Ենովան բռնուեցաւ անողոք հիւանդութեան մը եւ դարմանումի ենթարկուեցաւ Լոս Անճելըսի մէջ: Գոյապայքար մըն է, որ մղեց, 1987-ին հրատարակած իր «Գոյապայքար» խորագիրը կրող հատորին պէս, եւ սակայն դարմանումի արդիական բոլոր միջոցառումներուն հակառակ՝ մաքառումէն յաղթական դուրս չեկաւ եւ անժամանակօրէն շիջեցաւ տարի մը ետք:

Տեղին է մէջբերել Ասատուրին, 17 Փետրուար 1988 թուակիր, Կլէնտէյլէն ինծի ուղղուած նամակէն առնուած հետեւեալ յուզիչ տողերը:



«...Ենովային ամենէն դժուար օրերէն մէկն էր, երբ գիրքին մէկ օրինակը հասաւ հոս: Առաւ ձեռքը եւ ժպտեցաւ: Շուրջ մէկուկէս ամիս իր դէմքին ոչ մէկ ժպիտ տեսած էինք...»



Ենովային մահէն ետք, Հալէպի Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Երկրորդական Վարժարանէն ներս իր յիշատակին հաստատուեցաւ «Ենովա Պետեան» տարեկան մրցանակը, որուն հաստիք հաւաքելու համար Պետեան ընտանիքը Հ.Բ.Ը. Միութեան Հալէպի մասնաճիւղին տրամադրութեան տակ դրաւ 100,000 սուրիական ոսկիի հիմնադրամ մը, անոր եկամուտը բաշխելու համար իբրեւ նուէր հայ լեզուի եւ հայոց պատմութեան մրցանքներու յաղթականներուն: Հիմնադրամին նպաստած եղան նաեւ «Գոյապայքար»ի հաստիքէն եւ բարեկամներու նուիրատուութիւններէն գոյացած գումարները: Օրինակելի նախաձեռնութիւն մը արդարեւ, որպէս յետ-մահու շարունակութիւն՝ Ենովային կրթական վաստակաշատ ծառայութեան, ի խնդիր հայ գիրի ու դպրութեան վերելքին:

Ենովային անդարմանելի կորուստը սրտին, կոտտաց նաեւ Ասատուրին կեանքը, որքան որ ալ անպակաս ըլլար զաւակներուն գուրգուրանքը եւ շատ չանցած ինքն ալ միացաւ բարձի իր ընկերոջ, անդենականին մէջ, զուցէ հոն գտնելով յաւիտենական սփոփանքը՝ Մելգոնեանի գրասէղաններուն վրայ ծնած ու ծաղկած սիրազեղ կեանքի շարունակութեան:

2 Սեպտեմբեր, 2024 - Նիկոսիա

«ՔԱՆԻ՞ ԱՒԱՐԱՅՐ ԵՒ ՔԱՆԻ ՏԵՐ ԷՆ ԶՕՐ»

Միլվա Բսկիկեան Մահրեճեան

«Տե՛ս, տե՛ս, սա՛ «չօճուխին» (մանուկին) ի՞նչ արտասանութիւն տուեր են, որ սորվի: Ինը տարեկանը ի՞նչ պիտի հասկնայ ջարդէն, Տէր Զօրէն...: Խելքերնին սիրեմ»: Մինչ ես մեծ ոգեւորութեամբ կը կրկնէի Ժագ Ս. Յակոբեանի բանաստեղծութիւններէն մէկը, մեր դրացուհին այս անհերթէթ խօսքը ըսաւ: Ներքուստ շատ վրդովեցայ, բայց մօրս դաստիարակութիւնը եւ քաղաքավարական օրէնքները կը պարտադրէին, որ լռեմ: Միտքովս հարց տուի. «Ո՞վ է «չօճուխը» եւ ո՞վ է չհասկցողը»: Այո՛, ես ինը տարեկան էի, բայց եղեռնը ինձի հետ ծնած էր...: Ծիներով փոխանցուած էին ինձի ազգիս ցաւերը...: Ծնած օրէս տեղեակ էի վերապրող մեծ հօրս ու մեծ մօրս կենսագրականներուն: Մանուկ հասակէս ըմբռնած էի մեծերուն անժպիտ ու մռայլ դէմքերուն պատճառը: Անոնց պատմած դրուագները վկայարաններ էին, ազգովին ապրուած սպանդին, տեղահանութեան, տառապանքին, զոյատեւման պայքարին...: Անոնք շնչող յուշամատեններ էին խլուած ու յետին ձգուած հարստութիւններուն՝ տուն, եկեղեցի, մշակոյթ, վանքեր...: Այնքան իրազեկ էի մանրամասնութիւններուն, որ երբեմն նոյնիսկ կը կասկածէի, որ արդեօք ես լսողի՞ դերին մէջն էի, թէ՞ ականատեսի:



Այդ Ուրբաթ՝ ատենամարզանքի պահը նուիրուած էր ոգեկոչելու եղեռնի զոհերուն յիշատակը: Ես ալ իմ կարգիս արտասանեցի սորված բանաստեղծութիւնս: «Քանի՞ Աւարայր եւ քանի՞ Տէր Էլ Զօր, որքա՞ն տառապանք, բանտ ու աքսորանք...»: Ամբողջ էութեամբս կ'ապրէի դարերու ընթացքին ազգիս դիմագրաւած օրհասն ու տառապանքները:

Լիբանան ծնած ըլլալս բարեբախտութիւն կը սեպէի: Հոս չկային դահիճներ, ոլորուած պեխերով կեղեքողներ, բարբարոս ճիւղներ...: Ես կ'ապրէի հայահոծ շրջանի մը մէջ, ուր կողք-կողքի քանի մը հայկական վարժարաններ, եկեղեցիներ, մշակութային կեդրոններ եւ ակումբներ կային: Մեր դրացիները հայեր էին, ամէնուրեք հայերէն կը լսուէր, իսկ մեր թաղին մէջ բնակող մէկ-երկու արաբ ընտանիքները՝ պատահական երեւոյթ կը սեպէի: Անկեղծ ըլլամ ըսելու, որ ես կը կարծէի թէ Լիբանանը մերն է՝ հայապատկան երկիր է: Կը զգայի թէ այս հողին վրայ Հայերս վերագտած ենք՝ խաղաղ ապրելու մեր արդար իրաւունքը: Կը սիրէի Լիբանանին ծովը, հովասուն լեռները, առատութիւնը, կենսութեան ժողովուրդը, պատմական ասանդը, արաբական երաժշտութիւնը, երոպական ճաշակը եւ ամէն ինչը:

-Տիկ. Նուրիճա՛, պգտիկներդ առ եւ ե՛լ մեր քով: Ձեր տունը գետնայարկ է եւ ապահով չէ: Չե՛ս տեսներ ճամբան փռուած դիակները: Ռումբերը երբ գլորեն՝ վարի յարկերը կը վնասուին, իսկ բարձր յարկերը եւ տանիքները ոչ:



Սա՛, մեր սիրելի դրացուհիին հնչեցուցած ահագանգն էր: Ան մտահոգ էր մեր ընտանիքին ապահովութեամբ եւ մեզ իր մօտ կը կանչէր: Մենք բոլորս անտեղեակ էինք թէ ի՞նչ է ռումբը, ձեռնառումբը, հրթիռը...: Հետեւաբար, միամտօրէն բարձրացանք Տիկ. Սառային տան տանիքը: Մայրս իր երեք զաւակներով, իսկ Տիկ. Սառան իր ինը զաւակներով սեղմուեցանք տանիքը գտնուող նեղլիկ սենեակին մէջ: Տեղատարափ հրթիռները ակնթարթային արագութեամբ իրարու կը յաջորդէին, կը գերագանցէին որոտումներու գոռոցը: Պատահական դադար մը բաւարար էր լսելու մեր թաղեցիներուն լացը, աղաղակը, պոռչտուքը...: Ցաւոտ սարսափը կը գալարուէր մեր աղիքներուն մէջ, իսկ լեղի սրտխառնուքը կայրէր մեր կուրծքերը: Ես չեմ կարծեր, որ մեզմէ ոեւէ մէկը ինքզինք այդքան վատառողջ զգացած էր իր կեանքին մէջ: Ես չհամարձակեցայ վիճակիս անդրադառնալ, չե՞ որ նոյն սենեակին մէջ «ապաստանածներս» նոյն դառնութիւնը կը բաժնեկցէինք: Ահաւոր երեկոյ մըն էր, որ դարէ մը աւելի երկար թուեցաւ, անոր յաջորդեց խաւար գիշերը, իսկ հրթիռները շարունակեցին յամառօրէն գոռալ: Առաջին անգամ ըլլալով մահուան ուրուականը «մարմնացաւ» պարմանուհիիս աչքերուն առաջ: Երեւի այդ գիշեր հարիւր անգամ «Հայր Մերը» կրկնեցի...:

-Շաքար ջուր խմցուցէ՛ք:

-Երեխայի մեզ խմցուցէ՛ք:

-Սիկարեթով վիզը այրեցէ՛ք:

Յաջորդող օրերուն Ժողովրդական բոլոր գիտելիքները յառնեցան ու ի գործ դրուեցան պայքարելու վախին դէմ: Ո՛վ կը պատկերացներ, թէ վախը թոյն մըն է եւ կրնայ զանազան աւերներ գործել: Մարդոց մարմնային եւ հոգեկան առողջութիւնը վնասելէ անդին, դառնալ զաղթի ճամբուն առաջնորդող «ցուպ»:



Յիշեցի մեր հին դրացուհիին խօսքը. «Մա՛, «չօճուխները» ի՞նչ կը հասկնան, թէ ի՞նչ կը նշանակէ ջարդ, պատերազմ...»: Դրացի՛, այս անգամ իրաւացի է խօսքդ: Այս անակնկալ պատերազմը ոչ միայն երեխաները չհասկցան, այլեւ ոչ ոք հասկցաւ, թէ ի՞նչ էր կատարուածը...: Մեծ ու մանուկ՝ միամիտներ էինք: Եթէ ամենադոյզն պատկերացումը ունենայինք կործանիչ հրթիռներուն «թռչելու» ոճին, ապա մեր գետնայարկ տունը լքելով չպիտի բարձրանայինք երրորդ յարկին տանիքը՝ մեր հոգիները փրկելու մարմաջով:

Եւ որքան պատերազմը երկարեցաւ, այնքան արագ դարձանք «ռազմագէտներ» եւ հմուտներ՝ պատսպարուելու «արուեստին»: Ընդատակեայ լքուած ապաստարանները մաքրեցինք, «կահաւորեցինք», շէնքերուն մուտքերը աւագէ պարկերու դէզերով ամրացուցինք...: Մենք պարտադրաբար նոր ապրելաճ ուղեգրեցինք, մինչ այդ բոլորս կ'ապրէինք Լիբանանի խաղաղ երկնակամարին տակ՝ արբեցած ոսկէշող արեւով, խանդավառ կեանքով, ապագայի շէնշող երազներով...:

Մենք՝ տեղահանուած Արեւմտահայերս, կը կարծէինք, թէ մեր խանձուած ոտքերէն թօթուած ենք Տէր Զօրի աւագները ու Լիբանանի մէջ ամուր կանգնած ենք՝ ապաքինած մեր ոտքերով...: Այս պատերազմը եկաւ ու խախտեց մեր Լիբանանեան սփիւռքի ամբողջը: Տակաւ առ տակաւ նօսրացաւ հայկական գաղութը, նահանջեցին բարգաւաճ մշակութային կեանքը, կրթական համակարգը...:

Լիբանանի բոլոր քաղաքացիները ապրեցան պարտադիր երթ՝ խաղաղութենէն դէպի օրհասական օրեր, խուճապահար վազք՝ դպրոցական գրասեղաններէն դէպի մուֆ ապաստանարաններ, արտագաղթ, աւեր, յուսալքում, իսկ դառնագոյնը՝ մահուան հետ մօտէն ու յաճախակի շփուելու խայթը:

Շարունակուող պատերազմին «քաղաքացիական» անունը «հագցուցին» եւ Լիբանանը ռազմադաշտի վերածեցին: Պատերազմ մը, որ բռնկեցաւ 1975-ին, եւ ցարդ չէ յանգած անոր խարոյկը...: Արտաքին աշխարհի «խաղացողները» մեղսակցաբար ներքին «դերակատարներուն» հետ խաթարեցին անոր խաղաղութիւնը, այլափոխեցին գեղեցիկ կերպարը...: Տարուէ տարի խորացան ու ընդարձակուեցան քաղաքական թնճուկները, ահաբեկչութիւնները, կողմերու թշնամանքը, իսկ 4 Օգոստոս 2020-ին, պատահեցաւ աննկարագրելի՛ն՝ Պէյրութի նաւահանգիստին ահաւոր պայթումը:

Չեմ ուզեր վերապրիլ այդ դառնագին պատահարը, անոր պատճառած սարսափը, մեծաթիւ զոհերուն սուգը, պժգալի քանդումին տարողութիւնը...: Եթէ գոյութիւն ունենար միաւոր մը, որուն միջոցով կարելի ըլլար չափել աղէտի մը ահաւորութիւնը, ապա ես կը վստահեցնեմ, որ նաւահանգիստին պայթումը պիտի գերազանցէր բոլոր չափանիշները...: Չարմանալին այն է, որ այս պայթումին հեղինակները չբացայայտուեցան, հակառակ այն իրողութեան, որ կ'ապրինք դիտորդ արբանեակներու դարուն մէջ, ուր որեւէ երեւոյթ յայտնաբերելի է...: Համաշխարհային ընտանիքը յօգուտ ի՞նչ- ի՞նչ հաշիւներու անգամ մը եւս զոհաբերեց արդարութիւնը եւ կարեկցանքի խօսքերէն անդին չանցաւ...:

Վերջին տարիներէն սկսեալ, Լիբանանի մէջ առ այսօր տեղի կ'ունենայ այլ ոճով պատերազմ մը՝ նոր «զգեստաւորումով», նոր հմտութիւններով ու սատանայական ծրագրաւորումով՝ ժողովուրդը ենթարկելով դժոխային պայմաններու եւ զրկանքներու: Արեւելքի Չուիցերիան կոչուած երեկուան Լիբանանը, ուր որպէս վայելքի ու ճոխութեան երկիր կը փութային զբօսաշրջիկներ, դժբախտաբար այսօր կը դիմագրաւէ տնտեսական յոռեգոյն պայմաններ, ինչպէս Լիբանանեան դրամանիշի ահաւոր արժեզրկում, դրամատուներու կողմէ քաղաքացիական խնայողութիւններու բռնագրաւում, ապրելու տարրական անհրաժեշտութիւններու չգոյութիւն...: Լիբանանի մէջ քաղաքացիներ մնայուն կերպով զրկուած են երեւելտրականութիւն, ջուր, հաց, վառելանիւթ, դեղորայք կոչուող «շոպոյլութիւն» ներէ, պետական հիմնարկները մատնուած են անդամալուծութեան,



Եթէ ուսումը չծառայէ մտքի, հոգիի ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ, ի՞նչ իմաստ կրնան ունենալ բարձր վկայականներն ու մասնագիտութիւնները, որոնք միայն որոշ հմտութեանց ձեռքբերման միայն կրնան ծառայել: Իսկ մտքի եւ հոգիի ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ մարդ էակը կը դարձնէ ԱԶԱՏ, ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ՄՏԱԾՈՂ, բոլոր մտակաղապարներէն եւ ուղեղալուացումներէն ձերբազատ:

.....

ԺԱՄԱՆԱԿԸ մեծ դպրոց է: Ան է որ կ'ուսուցանէ, թէ ի՞նչն է ամէնէն էականը կեանքի մէջ, թէ ի՞նչ արժէքներ մնայուն ու յաւերժական են, ի՞նչը՝ անցողիկ: ԺԱՄԱՆԱԿՆ է որ մեզի կը սորվեցնէ ա՛յն ինչ որ չանցնի ժամանակին հետ եւ կը մնայ դրոշմուած հոգիին խորը, որպէս ապրումի եւ վերապրումի մշտական ներշնչարան: ԺԱՄԱՆԱԿՆ է որ ցոյց կու տայ ա՛յն բոլոր սուտ ու փուճ բաները, որոնք մեզ կը հրապուրեն անչափ, կը խլեն մեր ոյժն ու ժամանակը ու կ'անցնին անհետ ժամանակին հետ: ԺԱՄԱՆԱԿՆ է որ մեզ կը յուշէ այն դէմքերն ու դէպքերը, որոնց կարեւորութիւնը միայն տեսանք երբ արդէն ուշ էր: ԱՆՈՂՈՔ ԺԱՄԱՆԱԿԸ սակայն ետդարձ չունի եւ կարելի չէ ետ դարձնել անոր սլաքը: Կարելի է սակայն կեանքին մնացեալ ԺԱՄԱՆԱԿԸ ապրիլ ԺԱՄԱՆԱԿԻՆ տուած դասերէն խրատուելով:

.....

Համաշխարհայնացում կոչուած երեւոյթը կարծէք միտումնաւոր կերպով կը ջլատէ ազգի եւ ժողովուրդի ամբողջականութիւնը, կը քաջալերէ՝ «Ո՛ւր հաց, հո՛ն կաց»-ի տխուր մտայնութիւնը, հայրենիքները կը դարձնէ սոսկ բնակավայր, զանոնք պարպելով անոնց ոգեղէնութենէն, պատմական-մշակութային շունչէն...Այսպէս, ազգը տակաւ կը դառնայ անդիմազիժ ամբոխ, փերեզակ, գրպանային մտածողութեամբ եւ շուկայական արժէքներով ապրող: Համաշխարհայնացումը ժողովուրդի մը խտացման կամ ամբողջականութեան կրնայ լրջօրէն սպառնալ, այսինքն անոր ազգային ինքնութեան ամէնէն կարեւոր բաղադրիչներէն մէկուն...

.....

Աշխարհը անողոք կռիւի, պայքարի դաշտ է՝ բոլոր ժամանակներու համար ալ: Ան կը նմանի փոթորկոտ ծովուն, որուն վրայ պիտի նաւարկենք, պայքար մղելով ամեհի ալիքներուն դէմ որպէս անհատ եւ ԱԶԳ: Հայրենիքը նոյնպէս նաւի նման պարտի նաւարկել փոթորկոտ ծովուն վրայ՝ չընկղմելու եւ խաղաղ ափ հասնելու համար...: Այդ մահու-կենաց պայքարին մէջ, ՄԵՆՔ մինակ ենք, ինչպէս նաւավարը, որ ամէն ճիգ ի գործ կը դնէ առանձինն՝ խելք, ոյժ ու կամք բանեցնելով, փրկելու համար նաւը եւ ինքզինք: ԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԻՔԸ պիտի ստեղծել սեփական ձեռքերով, մեր ուժերը միացնելով՝ բազկի, մտքի, աննկուն կամքի..., առանց ապաւինելու օտարին օգնութեան, որ միշտ ալ դաւաճանած է մեզի: Եւ ոչ միայն այդ: Ամէն անգամ որ ուրիշին ենք ապաւինած, կորսնցուցած ենք ՄԵՓԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՅԺԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ եւ պարտուած ենք չարաչար: «ՎՃՌԱԿԱՆ ՄԵՆԱԿԸ», ինչպէս պիտի ըսէր Գարեգին Նժդեհ, համակ ոյժ է, համակ կամք, համակ խելք ու վճռակամութիւն:



.....

Աշխարհով մէկ ժողովրդավարութեան քարոզն է, մարդկային իրաւունքներու, ազատ շուկայական յարաբերութիւններու լորձնաշուրթն, համատարած քարոզը, որ ըստ էութեան աշխարհը վերածեր է՝ ազգ ու պատմութիւն, մշակոյթ եւ ինքնութիւն համահարթեցնող, աշխարհը մեծ շուկայի եւ սպառողական ընկերութեան վերածելու վիթխարի յորձանքի, որուն կուլ կ'երթան բարոյական եւ հոգեւոր արժէքները, ազգային ինքնուրոյն դիմագիծը, ի վերջոյ ունենալով անդէմ, անդիմագիծ փերեզակներու խառնամբոյս մը: Մեր երկիրը պիտի ըլլայ ազատ, արդար եւ իր ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ վրայ խարսխուած ԱՐԺԱՆԱՊԱՏԻԻ երկիր:

.....

Գիրը հրաշք է, գիրը սպեղանի է, գիրը բալասան է, գիրը մտերմագոյն ընկեր է, գիրը խոստովանանք է, գիրը սրտիդ ու հոգիիդ գաղտնարանը քեզի մատուցող բանալին է..

.....

ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԸԼԼԱԼ չի նշանակեր երբեք բամբասանքով զբաղիլ, հայիոյել, զրպարտել, չարախօսել: Այլ՝ այլընտրանքային գաղափար, ծրագիր առաջարկել յօգուտ միայն ու միայն պետական-հասարակական կեանքի բարելաման եւ յառաջդիմութեան, առաջարկուածը պաշտպանել ամուր փաստարկներով եւ առողջ բանավէճով: Մեր մօտ, շատ յաճախ «ԸՆԴԴԻՄԱԴԻՐ» կը նշանակէ ՀԱԿԱՌԱԿՈՐԴ կամ ԹՇՆԱՄԻ...: Ընդդիմադիր տեսակետներու եւ գաղափարներու առողջ ԲԱՆԱՎԷՃԸ ծնունդ կու տայ նորանոր գաղափարներու աճումին, հասարակական կեանքի յառաջդիմութեան...Ունի՞նք նման ընդդիմութիւն եւ բանավէճ: Չունինք, որովհետեւ տհաս ենք քաղաքականօրէն եւ տրամադրութիւն ալ չունինք հասուննալու, դասեր քաղելով մեր սխալներէն:

.....

ԶԳՏԻԼ ԿԱՏԱՐԵԱԼԻՆ...Որքա՛ն ալ անհասանելի թուի ան, չբաւարարուիլ կէս-կատար գործով, կէս-կատար յաջողութեամբ, կէս-կատար լաւով, գեղեցիկով: Կէս-կատարը կամ կիսատ-պռատը տեղ չի հասցներ մեզ՝ անհատապէս եւ ազգովին, անիկա երբեք թեւ ու թոյլչք չի տար հոգիին, երեւակայութեան, կը սահմանափակէ ջանքն ու կորովը...մինչ անհաս տենչն ու տենդը կատարեալին՝ զարգացման անպարագիծ ուղիներ կրնայ բանալ մեր առջեւ, նոր որակ տալ մեր իրագործումներուն, նորանոր ստեղծագործութեանց մղել մեզ, որոնումի անհանգիստ հոգիով, մտքով...: Կիսատ-պռատը էապէս մտքի, բազկի եւ հոգիի ծուլութիւն է շատ յաճախ:

.....

«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ, քեզ շատ փորձանք կը սպասէ, ազատութիւն սիրողին՝ այս աշխարհը խիստ նեղ է...»:Միքայէլ Նալպանտեանի այս խօսքերը այնքան դիպուկ են, այնքան խորիմաստ: ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ձեռքբերելը, արդարեւ, փշոտ ճանապարհ անցնիլ է, ուր ոտքերդ պիտի վիրաւորուին, արիւնտոնին, պիտի յոգնին ու դողան, ուր ծունկերդ պիտի



կյթոտին, տատասկներ ու փուշեր պիտի ճանկոտեն քեզ, բայց միշտ ու միշտ, աւելի լաւ է ԱԶԱՏ ու ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ապրիլ, քան գլուխ ծռել ու սողալ յանուն պատառ մը հացի, յանուն սուտ փառքերու, դառնալ գերին մամոնային: Ազատութիւնը մարդ էակին ու ազգին գերագոյն արժանաւորութիւնն է... Պատասխանատու, յանձնառու եւ ճշմարիտ ազատութիւնը:

.....

Հեռուն տեսնելը իմաստութիւն է..

Հեռուն ծրագրելը ազգային ռազմավարութիւն է...

Քայլ առ քայլ զայն անդիշում գործադրելը ԱԶԳԻ ու ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԱՐԱՏԵԻՈՒԹԻՒՆ է:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Հաճոյքներու մէջ արբենան
Առատօրէն, անյագօրէն,
Ինծի մնայ հոգիս միայն,
Խոյանքն անոր միշտ լուսատենչ:



.....

Ոսկի, գանձեր թող կուտակեն
Ազահները անկուշտ, անյագ,
Ինձի միայն թելեր պէտք են
Ճախրելու վեր, ազատաբաղձ:

.....

Մէրը բոյր կու տայ ծաղկին ու թուփին,
Մէրը թոյր կու տայ լուսէ ծիածանին,
Մէրը շունչ կու տայ անգամ մեռածին,
Մէրն է աղբիւրը կեանքին ու յոյսին..

.....

Խորհէ երկա՛ր, յետոյ խօսէ,
Մտածէ շա՛տ, յետոյ գրէ,
Խօսքն ու գիրը թէ արձակուին,
Կ'երթան հեռու միտքէ ի միտք...

.....

Աշնան միայն կը հասկնանք մեր օրերու բուն արժէքը,
Կ'ուզենք ըմպել անյագօրէն անոնց մէն մի ակնթարթը
Եւ կ'ափսոսանք ժամանակը գոր շատ անգամ մենք վատնեցինք
Մուտլիկ մարդկանց, փուճ բաներու, որոնք եկան, անցան, գացին:

.....

Գարնան մէջ ես թռվոացի,
Ամրան արդէն կրակ ու բոց էր,
Աշնան միայն ըմբռնեցի
Թէ կեանքն, աւա դ, երագ մըն էր:

.....

Հողն ու մարդը շաղախուա՛ծ են
Ինչպէս հոգին ու մարմինը
Թէ բաժնուի մէկը միւսէն
Ահաւո՛ր է ինչպէս մահը...

.....

Անվայել խօսքը քեզ լոկ կ'անարգէ,
Ան հայելին է հոգւոյդ ու սրտիդ,
Քու նետած քարդ վերադառնայ քեզ,
Կը բացայայտէ ի՛նչ կայ ներսիդիդ:

.....

Կրնա՞ք չափել խոր անդունդը
Հայ հոգիին խորհրդաւոր,
Ծանծաղ միտքով ու նժարով՝



Մի՛ պղծէք իր խոր խորհուրդը...

.....

Պիտի կոտրել շղթաները
Հազար ու մէկ ստրկութեան,
Պիտ' ազատել մարդ էակը
Միտքով, խիղճով վսեմական...

.....

Եթէ կարենաս ցաւիդ մէջ անգամ
Ժպտիլ արեւին, կեանքին քեզ շնորհուած,
Կը յաղթես կեանքին ու դեռ մահուան ալ
Ոգիով անպարտ, հոգիով պայծառ...

.....

Արարքով սոսկ կրնաս ցոյց տալ
Վարքդ, բարքդ, սկզբունքդ,
Արարքով սոսկ կը բարձրանաս,
Կամ գլտորիս մինչ անդունդը...

.....

Մի՛ թողուր որ բարի՛ն, սէ՛րը լքեն սիրտդ ու հեռանան,
Քանզի յայնժամ չարը դաժան կը խուժէ ներս սիրտէդ գուլալ,
Մի՛ թողուր որ լուսո՛յ ճաճանչն լքէ սիրտդ ու հեռանայ,
Քանզի յայնժամ խաւարը մութ կը խուժէ ներս սիրտէդ պայծառ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ